ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Արժեքներ ստեղծելով...	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

Թողարկողի ֆիրմային անվանումը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Կազմակերպա-իրավական ձևը՝	Բաց բաժնետիրական ընկերություն
Տեղեկություններ թողարկողի վերաբերյալ՝	0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Պուշկինի 19, հեռ. (+374 10) 59 23 23, էլ. փոստ՝ araratbank@araratbank.am ինտերնետային կայք՝ www.araratbank.am

Արժեթղթերի դասը՝	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնային եկամտաբերություն՝	
Շրջանառության ժամկետը՝	
Տեղաբաշխման ձևը՝	
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	մինչև 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար)

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Կազմակերպա-իրավական ձևը՝	Բաց բաժնետիրական ընկերություն
Տեղեկություններ տեղաբաշխողի վերաբերյալ՝	0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Պուշկինի 19, հեռ. (+374 10) 59 23 23, էլ. փոստ՝ araratbank@araratbank.am ինտերնետային կայք՝ www.araratbank.am

"ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ":

ՀՀ ԿԲ Խորհրդի 24.07.2017թ թիվ 1/587(Հ) որոշում

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ
օրը 25 ամիսը 07 տարին 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	4
ԲԱԺԻՆ 1.	ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	6
1.	Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ	6
2.	Բանկին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր	13
3.	Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	15
4.	Բանկի աուդիտ իրականացնող անձ	16
5.	Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	16
6.	Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	17
7.	Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները	18
ԲԱԺԻՆ 2.	ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	20
8.	Ռիսկային գործոններ	20
9.	Հիմնական տեղեկատվություն	21
10.	Տեղեկատվություն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ	21
11.	Առաջարկի ժամկետները և պայմանները	29
12.	Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	32
13.	Լրացուցիչ տեղեկատվություն	33
ԲԱԺԻՆ 3.	ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34
14.	Անկախ աուդիտորները	34
15.	Ռիսկային գործոններ	34
16.	Տեղեկատվություն Բանկի մասին	37
17.	Բիզնեսի նկարագիրը	42
18.	Բանկի կառուցվածքը	50
19.	Հիմնական միջոցները	51
20.	Զարգացման վերջին միտումները	52
21.	Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	52
22.	Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	53
23.	Հսկող անձինք	63
24.	Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	64
25.	Էական պայմանագրերը	64
26.	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի	65

	մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	
27.	Այլ տեղեկատվություն	**65**
	2015-2016 թթ. ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություններ	
	2017 թվականի առաջին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ	
	Հավելվածներ	

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Արժեքներ ստեղծելով...	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ծրագրային ազդագրի բովանդակությունը":

ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բարսեղ Բեգլարյան	Խորհրդի նախագահ		10.07.2017թ.
Վահրամ Ղազարյան	Խորհրդի անդամ		10.07.2017թ.
Արզիկ Սուվարյան	Խորհրդի անդամ		10.07.2017թ.
Ջոն Սթաուբ	Խորհրդի անդամ		10.07.2017թ.
Յան Դիվայնգարթ	Խորհրդի անդամ		10.07.2017թ.
Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		10.07.2017թ.
Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		10.07.2017թ.
Բագրատ Ճզմաչյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		10.07.2017թ.
Կարեն Սարգսյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		10.07.2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Արժեքներ ստեղծելով...	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		10.07.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ		10.07.2017թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ		10.07.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		10.07.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		10.07.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.S.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՊԱՐԱՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО АРАРАТБАНК ГОРОДА ЕРЕВАНА
ARARATBANK OPEN JOINT STOCK COMPANY YEREVAN
02500518
ARARATBANK
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ կամ Թողարկող) պարտատոմսերի ծրագրային ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

2015 և 2016 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուր են հանդիսանում տարեկան աուդիտորական եզրակացությունները, իսկ մնացած տվյալներն աուդիտի կողմից ստուգված չեն:

1. Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ АРАРАТБАНК открытое акционерное общество
անգլերեն՝ ARARATBANK Open Joint-Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ռուսերեն՝ ОАО АРАРАТБАНК
անգլերեն՝ ARARATBANK OJSC

Բանկի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, գրանցման համարը՝ 4:

Բանկի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 59-23-23,
ֆաքս՝ (+374 10) 54-78-94,
էլ. փոստ՝ araratbank@araratbank.am,
ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Բանկի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Դիլինգային կենտրոնի ավագ դիլեր՝ Ն. Ֆահրադյանի հետ, հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 54 79 35:

Բանկը հիմնադրվել է ՀՀ կապի նախարարության ձեռնարկությունների կողմից, որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, և 1991թ.-ի սեպտեմբերի 20-ին որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ ՍՊԸ գրանցվել է Պետական բանկում, գրանցման համար 4: Այնուհետև, Բանկը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում՝ 1994թ.-ի մարտի 31-ին:

Բանկն իր բնականոն գործունեությունն իրականացրել է մինչև 2000թ.-ի նոյեմբեր ամիսը: Այնուհետև 21.11.2000թ.-ին ՀՀ ԿԲ-ի կողմից Բանկում նշանակվել է նախնական խնամակալություն, 15.06.2001թ.-ին խնամակալություն, որից հետո 19.03.2002թ.-ին՝ ժամանակավոր ադմինիստրացիա, որի գործունեությունն ավարտվել է 29.10.2004թ.-ին:

Բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի 2002թ.-ի դեկտեմբերի 27-ի որոշման համաձայն Բանկը վերակազմավորվել է որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 2003թ.-ի հունվարի 23-ին), այնուհետև անվանափոխվել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի, որը 2007 թվականի օգոստոսին վերակազմավորվել է որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:

Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին կայացվել է որոշում Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ, համաձայն որի լրացուցիչ թողարկվել է 483,230 (չորս հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուն) հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 17,590 (տասնյոթ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ: Տեղաբաշխման արդյունքում Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալն ավելացել է 8.5 մլրդ. ՀՀ դրամով:

2016 թվականի նոյեմբերի 8-ին Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը հաստատել է լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք 2016 թվականի նոյեմբերի 16-ին գրանցվել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը: 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

Բանկն իր հեռանկարային զարգացումը նախանշելիս առաջնորդվում է, «Կանխատեսել՝ նշանակում է կառավարել» գաղափարախոսությամբ՝ փորձելով հնարավորինս ճշգրիտ և համակողմանի կանխատեսել սպասվող հնարավոր զարգացումները՝ նպատակ ունենալով բարձրացնել կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների արդյունավետությունը և հասցեականությունը:

Բանկի առաքելությունն է ապահովել Բանկի կայուն շարունակական զարգացումը, նպաստել երկրի տնտեսության զարգացմանը և կրել սոցիալական պատասխանատվություն հասարակության առջև՝ արժեքներ ստեղծելով Բաժնետերերի, Հաճախորդների և Աշխատողների համար:

Բանկի տեսլականն է լինել կայուն զարգացող միջազգային, լայն և արդյունավետ մասնաճյուղային ցանց ունեցող հանրային բանկ, օգտագործելով լավագույն միջազգային և նորագույն տեխնոլոգիաները, ունենալ առաջատար դիրքեր՝ ՓՄՁ վարկավորման, մանրածախ գործառնությունների, առևտրի ֆինանսավորման և ֆինանսական շուկայում իրականացվող գործառնությունների ուղղություններով:

Բանկի նպատակն է ապահովել կայուն զարգացում, արդարացնելով Բանկի բոլոր շահառուների սպասումները: Նշված նպատակն իրականացնելու համար Բանկը որդեգրել է մասնաճյուղերի ցանցի օպտիմալացման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաներով բանկային ծառայություններից օգտվելու հնարավորության ներդրման քաղաքականություն:

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 8,803,655 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից:

Բանկի խոշոր բաժնետեր են հանդիսանում «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն, որի բաժնեմասը կազմում է կանոնադրական կապիտալի 72.7270662%-ը, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը՝ 18.1388298%-ը, ինչպես նաև Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ն (RURAL IMPULSE FUND II S.A., SICAV-SIF) 8.5795616% բաժնեմասը (տվյալները ներկայացված են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, 09.07.2017 թվականի դրությամբ):

Բանկի բաժնետոմսերի մնացած մասի՝ 9,164 բաժնետոմսերի սեփականատերեր են հանդիսանում ընդհանուր թվով 77 բաժնետերեր՝ 4 իրավաբանական անձ և 73 ֆիզիկական անձ:

Բիզնեսի համառոտ նկարագիրը

Բանկը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել բանկային գործունեությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները, մասնավորապես.

Միջոցների ներգրավում: Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների, տոկոսադրույքների և տոկոսների վճարման հաճախականության:

Վարկերի և միջոցների այլ տեղաբաշխումներ: Բանկն իրականացնում է բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ վարկային գծերի, օվերդրաֆտների, երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների տրամադրում), բնակարանի ձեռքբերման և վերանորոգման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, լոմբարդային վարկավորում, սպառողական այլ վարկավորում, ինչպես նաև լիզինգային և ֆակտորինգային գործառնություններ:

Արտարժույթի և արժեթղթերի առուվաճառք: Բանկն ակտիվորեն մասնակցում է ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներին, երկրորդային շուկայի գործարքներին, ինչպես նաև արտարժույթի բորսայական առևտրին: Հարկ է նշել, որ Բանկը հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ պետական ներքին պարտքի կառավարման գործակալ:

Բանկն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի դրամարկղային սպասարկում:

Բանկը 1997թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 15 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած ազատ փոխարկելի արժույթով և վճարային գործիքով:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճը՝ Բանկն կարևորում է արագ դրամական փոխանցման համակարգերի հետ համագործակցության ընդլայնումը և կատարելագործումը: Այս նպատակով 2017թ. Բանկը շարունակելու է զարգացնել համագործակցությունը Unistream, MoneyGram, Ria Money, Anelik, Xpress Money, INTEL EXPRESS, Sigue, CONVERSE TRANSFER և MoneyTun արագ դրամական փոխանցման համակարգերի հետ: Բանկը ներկայումս հանդիսանում է միջազգային արագ դրամական փոխանցումների 9 համակարգերի ուղղակի գործակալ:

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, որոնց թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Հանդիսանալով "Արմենիան քարդ" (ԱրՔա) ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ՝ Բանկը թողարկում է ArCa Classic, ArCa Classic-M, ArCa կենսաթոշակային, ArCa ընտանեկան փաթեթ, ArCa Junior, ArCa Co-branded (Green Line), ArCa "Հաղթենք Միասին", "ArCa Մոր և Մանկան" բանկային վճարային քարտեր:

2007 թվականի ընթացքում Բանկը դարձել է MasterCard համակարգի աֆիլիատ անդամ, իսկ 2008 թվականից սկսած թողարկում է Cirrus/Maestro, MasterCard Standard, MasterCard Gold և MasterCard Business քարտեր:

2010 թվականի օգոստոսին դառնալով VISA International վճարային համակարգի ասոցացված անդամ՝ 2011 թվականից Բանկը թողարկում է VISA GOLD, VISA CLASSIC, VISA AUTOCARD և VISA ELECTRON, իսկ 2012 թվականից՝ VISA INFINITE քարտեր, իսկ վերջիններիս քանակն ավելացնելու, սպասարկման որակը բարձրացնելու և տեխնիկական վերազինում իրականացնելու նպատակով՝ կատարում է ներդրումներ: 2013թ.-ին Բանկը դարձավ VISA միջազգային վճարահաշվարկային համակարգի պրինցիպալ անդամ, ինչը հնարավորություն տվեց Բանկին տրամադրել հաճախորդներին ծառայությունների ավելի ընդլայնված և արդիականացված փաթեթ:

Բանկը թողարկված քարտերի քանակով ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և գործուն միջոցառումների իրականացմամբ:

2013թ.-ից Բանկը պաշտոնապես դարձավ DinersClub միակ թողարկող բանկը ՀՀ-ում և տարեվերջին Բանկը թողարկեց սուպեր պրեմիում դասի DinersClub Super Premium և պրեմիում դասի DinersClub Young Profesional վճարային քարտերը:

2015թ.-ից Բանկն Իդրամ ընկերության հետ համատեղ իրականացրեց www.arca.am պորտալով և ArCa համակարգի ներքո սպասարկվող բանկերի բանկոմատներով կոմունալ վճարումների ընդունումը:

2015 թվականին ընդլայնվեց Բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը, 2016 թվականին բարձրացվեց սպասարկվող վճարային քարտերի անվտանգության մակարդակը՝ պայմանավորված 3D secure համակարգի ներդրմամբ: Բանկի բանկոմատներում

ներդրվեցին զեղծարարությունները զսպող՝ Antiskimmer ծրագրային ապահովումը: Իրականացվեց նաև Բանկի կողմից թողարկվող քարտերի PIN (Personal Identification Number) ծրարների ամբողջական տպագրում Բանկի տարածքում:

Ներկայումս Բանկի կողմից թողարկվում և սպասարկվում են MasterCard, Visa, Diners Club և ArCa վճարային համակարգերի քարտեր:

Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում: Հաճախորդներին վճարահաշվարկային համալիր ծառայությունների մատուցման նպատակով՝ Բանկը զարգացնում է հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանցից վճարների ընդունման աշխատանքները:

Բանկն իրականացնում է Սոցիալական փաթեթի հաշվի բացման և սպասարկման գործառույթը, ինչպես նաև որպես ապահովագրական գործակալ իրականացնում է ապահովագրական պայմանագրերի վաճառք:

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի, ինչպես նաև բանկոմատների, POS տերմինալների և վճարային տերմինալների միջոցով:

2009 թվականին Բանկն իր դուստր ընկերության՝ «Իզմիրլյան» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ ձևավորել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ խումբ: 2010 թվականին «Իզմիրլյան» ՈՒՎԿ ՍՊԸ-ն լուծարվել է և դուստր ընկերության լուծարման հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2010թ. փետրվարի 26-ի համապատասխան որոշմամբ:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

Ներկայումս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն որևիցե խմբի անդամ չի հանդիսանում:

Միացման արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի 65 մասնաճյուղ՝ 63-ը ՀՀ տարածքում և երկու մասնաճյուղ ԼՂՀ-ում՝ Ստեփանակերտ քաղաքում: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմել է 913 մարդ:

Բանկը հանդիսանում է Հայաստանի բանկերի միության անդամ, ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ անդամ, “ԱՐՔԱ” /ArCa/ ազգային վճարահաշվարկային համակարգի և միջազգային SWIFT հեռահաղորդակցման համակարգի անդամ:

Բանկն ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Եվրասիական Զարգացման Բանկի (EDB), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Green for Growth Fund Հիմնադրամի, Incofin Investment Management, DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային

կազմակերպության (DEG), responsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), The OPEC Fund for International Development (OFID) ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Բանկը գործում է Երևան քաղաքի կենտրոնում՝ Պուշկինի 19 հասցեում գտնվող, ավելի քան 1600 քմ մակերես ունեցող տարածքում:

Ստորև ներկայացվում է Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամ

	31.12.2016	31.12.2015	31.12.2014
Ակտիվներ, այդ թվում՝	***149,198,687***	***132,027,472***	***138,363,233***
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	***106,325,998***	***87,725,164***	***88,687,923***
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	66,148,947	66,083,127	65,986,845
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	13,275,107	6,497,336	7,276,797
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	26,901,944	15,144,701	15,424,281
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	***71.26%***	***66.44%***	***64.10%***

Բանկի գործունեության տարեկան աուդիտն իրականացնող «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերության կողմից 2016 թվականի բանկի տարեկան հաշվետվությունում ներառված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միացման արդյունքները, քանի որ 2017 թվականին ֆինանսական հաշվետվությունների կազմման ամսաթվով Բանկի կողմից ձեռքբերվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գնահատումը և ձեռնարկատիրական գործունեության միավորման հաշվառումը դեռևս ընթացքում էր, և համապատասխանաբար, ձեռքբերվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները 2017 թվականի փետրվարի 20-ի դրությամբ Բանկի կողմից որոշվել էին նախնականորեն:

Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.


Բաժնետերերի ընդհանուր ժողով
Ներքին աուդիտի վարչություն
Խորհուրդ
Վարչություն
Գործադիր տնօրեն
Գործադիր տնօրենի տեղակալ
Գործադիր տնօրենի առաջին տեղակալ
Գործադիր տնօրենի տեղակալ
Հաստատված է՝
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2017թ-ի փետրվարի 24-ի թիվ 03/09Լ որոշմամբ
Խորհրդի նախագահ Բ. Բեգլարյան
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ
ARARATBANK OPEN JOINT STOCK COMPANY
REPUBLIC OF ARMENIA YEREVAN
02500518
ARARATBANK
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

2. Բանկին և Բանկի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Բանկը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում՝ վարկային, իրացվելիության, շուկայական, գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով բանկը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Բանկի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար կարող եք օգտվել բանկի ինտերնետային կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից:

Վարկային ռիսկը բանկի վարկառուների, փոխառուների և բանկի նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է ինչը կարող է վնաս հասցնել բանկի կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը բանկի կարևորագույն խնդիրներից է:

Իրացվելիության ռիսկ, երբ Բանկի ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով Բանկի հնարավորություններն ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելը կդժվարանա, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել բանկի գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Բանկի կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական

գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Բանկը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Գործառնական ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև բանկի համբավը:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստում է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման գործընթացներում հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը հատկապես առնչվելի է այն ներդրողների համար ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի: Օրինակ՝ ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում ներդրողը կունենա որոշակի կորուստներ: Ներդրողը կարող է կրել նաև արտարժույթի փոխանակման հետևանքով որոշակի կորուստներ կապված իր ՀՀ դրամով

արտահայտված միջոցներն ԱՄՆ դոլարի վերածելու և Պարտատոմսերի մարման ժամանակ ԱՄՆ դոլարը ՀՀ դրամի փոխանակման ժամանակ:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

3. Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված և հաստատվելիք հեռանկարային զարգացման ծրագրերի: Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի և Բանկի գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

2016 թվականի ընթացքում Բանկի ակտիվներն աճել են 13.01%-ով: Ակտիվների նման աճը հիմնականում պայմանավորված է Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ 77.6% կամ 11,757,243 հազ. ՀՀ դրամ, Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների՝ 22.2% կամ 2,413,322 հազ. ՀՀ դրամ և Կանխիկ դրամական միջոցների ու ՀՀ կենտրոնական բանկում մնացորդների՝ 9.5% կամ 3,365,695 հազ. ՀՀ դրամ աճով:

2016 թվականի ընթացքում Բանկը ստացել է 1,089,475 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ: Նախորդ տարվա համեմատ շահույթի ցուցանիշի շուրջ 15.7%-ով աճը հիմնականում պայմանավորված է տոկոսային եկամուտների առաջանցիկ աճով տոկոսային ծախսերի նկատմամբ: Շահույթի ցուցանիշի աճի դանդաղ տեմպը ոչ միայն պայմանավորված է ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի դանդաղ վերականգնմամբ, այլ նաև ֆինանսական շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում Բանկի կողմից վարվող ճկուն գնային քաղաքականությամբ, արդյունքում, նվազեցնելով տոկոսային սպրեդը, Բանկը ոչ միայն նպատակ է հետապնդում ամրապնդել շուկայի մասնաբաժինը, այլ նաև գործող, ինչպես նաև նոր ներդրվող պրոդուկտների մրցունակության բարձրացմամբ նվաճել նաև շուկայի նոր մասնաբաժին:

Կազմակերպության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը 2016 թվականի վերջի դրությամբ կազմել է 16,835,400 հազ. ՀՀ դրամ, որը բաղկացած է 1,760,731 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2017 թվականի ընթացքում՝ մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը, Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

2017 թվականի առաջին եռամսյակում Բանկի զուտ շահույթը կազմել է 162,392 հազ. ՀՀ դրամ: Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 33,048,318 հազ. ՀՀ դրամ:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Բանկի դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական վիճակի կամ Բանկի զարգացման հեռանկարների վրա:

4. Բանկի աուդիտ իրականացնող անձ

Բանկի 2009, 2010 և 2011 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն, 2013, 2014, 2015 և 2016 թվականներին՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ, իսկ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռ.՝ +374 (10) 260 964, ֆաքս՝ 374 (10) 260 961, www.gta.am:

Տնօրեն-բաժնետեր՝ Գագիկ Գյուլբուդաղյան:

«Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010 Վ. Սարգսյանի փ. 26/1, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +374 (10) 566 762, ֆաքս՝ 374 (10) 566 762, www.kpmg.am:

Տնօրեն՝ Էնդրյու Քոքսշել:

5. Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով),
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
- Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի գործադիր տնօրեն (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Բանկի խորհուրդը կազմված է հինգ անդամներից.

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Բարսեղ Բեգլարյան	Խորհրդի նախագահ	41 տարի
2	Վահրամ Ղազարյան	Խորհրդի անդամ	37 տարի
3	Արզիկ Սուվարյան	Խորհրդի անդամ	22 տարի
4	Ջոն Սթաուբ	Խորհրդի անդամ	42 տարի
5	Յան Դիվայնգարթ	Խորհրդի անդամ	27 տարի

Բանկի վարչությունը կազմված է ութ անդամներից.

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, գործադիր տնօրեն	29 տարի
2	Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, գործադիր տնօրենի առաջին տեղակալ	13 տարի
3	Բագրատ Ճզմաչյան	Վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	31 տարի
4	Կարեն Սարգսյան	Վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	25 տարի
5	Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, գլխավոր հաշվապահ	31 տարի
6	Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ	10 տարի
7	Զարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ	26 տարի
8	Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	8 տարի

Բանկի աշխատողների թիվը 31.12.2016թ. դրությամբ կազմում է 913 աշխատող: Բանկի խոշոր բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ամփոփաթերթում:

6. Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	եռամսյակային
Պարտատոմսերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	մինչև 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար)
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից

Պարտպատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրերը՝	հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի Բանկի Խորհրդի առանձին որոշումներով
Պարտպատոմսերի շրջանառության ժամկետը՝	
Պարտպատոմսերի շրջանառության ձևը՝	ազատ շրջանառության իրավունքով

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները թողարկման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ հրապարակվելու են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է ներգրավվող միջոցների դիվերսիֆիկացումը և ներգրավվող միջոցների ծախսատարության նվազեցումը: Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Բանկի կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումն իրականացվելու է ուղղակի վաճառքի սկզբունքով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

7. Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	31.03.2017 թվական[1] (աուդիտ չանցած)	2016 թվական (աուդիտ անցած)	2015 թվական (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	190,962	1,089,475	941,681
Սեփական կապիտալի միջին մեծություն	33,514,688	24,484,418	21,974,242
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	0.57%	4.45%	4.29%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	190,962	1,089,475	941,681
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	186,157,826	138,374,261	131,451,219
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	0.10%	0.79%	0.72%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի	190,962	1,089,475	941,681

[1] Տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն

նվազեցումից հետո			
Գործառնական եկամուտ	2,704,777	6,826,748	6,331,516
Զուտ շահույթի մարժա (NPM), %	7.1%	15.96%	14.87%
Գործառնական եկամուտ	2,704,777	6,826,748	6,331,516
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	186,157,826	138,374,261	131,451,219
Ակտիվների օգտագործման գործակից (AU)	1.45%	4.93%	4.82%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	186,157,826	138,374,261	131,451,219
Սեփական կապիտալի միջին մեծություն	33,514,688	24,484,418	21,974,242
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.6	5.7	5.98
Զուտ տոկոսային եկամուտ	1,847,517	5,050,594	4,563,760
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	111,867,528	95,131,700	77,520,328
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	1.7%	5.31%	5.89%
Տոկոսային եկամուտ	4,157,421	10,775,508	10,239,473
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	111,867,528	95,632,874	77,520,328
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	3.7%	11.27%	13.21%
Տոկոսային ծախսեր	2,309,904	5,724,914	5,675,713
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	126,893,743	88,426,284	64,874,295
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	1.8%	6.47%	8.75%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	190,962	1,089,475	941,681
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	1,760,731	1,337,077[2]	1,277,501
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	108	814,818	737
Սպրեդ	1.9%	4.79%	4.46%

[2] Բաժնետոմսերի միջին կշռված թիվը 2016 թվականի համար հաշվարկելու համար հաշվի են առնվել Բանկի կողմից բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման և տեղաբաշխման արդյունքները, մասնավորապես Բանկի կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի արդյունքում Բանկի Կապիտալը համալրվել է 483,230 հատ սովորական բաժնետոմսերով: Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը 2016 թվականի նոյեմբերի 8-ին հաստատել է տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք էլ 2016 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել են, որից սկսած փաստացիորեն ավելացվել են բաժնետոմսերի թիվը՝ կազմելով 1,760,731 հատ սովորական բաժնետոմսեր:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Ռիսկային գործոններ

Շուկայում արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և հետևաբար գնի անկմանը:

Բանկի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը՝ պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Օրինակ՝ ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում ներդրողը կունենա որոշակի կորուստներ: Ներդրողը կարող է կրել նաև արտարժույթի փոխանակման հետևանքով որոշակի կորուստներ կապված իր ՀՀ դրամով արտահայտված միջոցներն ԱՄՆ դոլարին վերածելու և Պարտատոմսերի մարման ժամանակ ԱՄՆ դոլարը ՀՀ դրամի փոխանակման ժամանակ:

Տոկոսադրույքի ռիսկը, տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

9. Հիմնական տեղեկատվություն

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է ներգրավվող միջոցների դիվերսիֆիկացումը և ներգրավվող միջոցների ծախսատարության նվազեցումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Միաժամանակ պետք է նշել, որ Բանկը, հանդիսանալով կորպորատիվ պարտատոմսերի թողարկում իրականացրած առաջին բանկերից մեկը, շարունակում է իր կողմից որդեգրած պարտատոմսերի թողարկման ավանդույթը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված պահանջարկը և ներդրողների սպասումները:

10. Տեղեկատվություն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն նախատեսում է պարտատոմսերի թողարկման Ծրագրային ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում իրականացնել մինչև 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար) ընդհանուր անվանական ծավալով պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Թողարկողն օգտվելու է շուկա ստեղծողի (market maker) ծառայություններից:

Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- ✓ Ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:
- ✓ Իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ:
- ✓ Թողարկման օրվանից հաշված եռամսյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Բանկի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:

✓ Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:

✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:

✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

Պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով և նույն օրենքով սահմանված կարգով ենթակա են հատուցման համաձայն 3-րդ հոդվածով սահմանված չափերով, այն է՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ, վերջինիս կողմից սահմանված կանոններին համաձայն, իր հաշվին բացել անձնական հաշիվ և դրա տվյալները ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ ցանկացած այլ բանկում իր անվամբ բացել դրամային և դոլարային բանկային հաշիվ և դրա տվյալները

ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, իսկ դրամային և դոլարային բանկային հաշիվ ունենալու դեպքում՝ անհրաժեշտ է տվյալներն ուղղակի ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:

Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշվին կատարել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի և “ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա” ԲԲԸ-ի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Կազմակերպության պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների՝ հետևյալ դեպքերի համար.

1. մասնավոր գործարքների համար, այն է՝ այնպիսի գործարքների, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ ՀՀ ԿԲ խորհրդի 27 նոյեմբեր 2012 թվականի թիվ 331-Ն որոշման համաձայն՝ մասնավոր գործարքներ են համարվում՝

ա. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,

բ. Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,

գ. Արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները,

2. պարտատոմսերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,

3. շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար:

Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

Թողարկողի պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերում կատարված ներդրումները մարվելու են պարտատոմսի անվանական արժեքով՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին:

Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Թողարկողի առաջարկվող պարտատոմսերի մարումների և Բանկի կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Բանկը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Թողարկողի սնանկության դեպքում Թողարկողի գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ

պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո 3-րդ և 4-րդ հերթին, մասնավորապես վերը նշված օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է պարտավորությունների մարման հետևյալ հերթականությունը.

Բանկի («Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ, ներդրումային ֆոնդի կառավարիչներ և ապահովագրական ընկերություններ, եթե «բանկ» բառի օգտագործման կոնկրետ դեպքից չի բխում, որ խոսքը միայն բանկի մասին պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,

բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,

գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 10 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ, իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն,

դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

ե) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

ե. վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «գ», «դ» և «ե.1» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են «զ» ենթակետով սահմանված հերթում:

«գ» ենթակետով սահմանված անձի՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 10 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 10 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է «գ» ենթակետով սահմանված հերթում, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ «դ» ենթակետով սահմանված հերթում:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Պարտատոմսերի արժեկտրոնի տոկոսադրույքը և տոկոսների վճարման պայմանները

Յուրաքանչյուր տրանշի համար պարտատոմսերի արժեկտրոնների տոկոսադրույքը սահմանվելու է Բանկի Խորհրդի առանձին որոշմամբ:

Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամուտները վճարվելու են եռամսյակային պարբերականությամբ: Արժեկտրոնային եկամուտների վճարման փոխանցումը Բանկի կողմից կատարվելու է արժեկտրոնի հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18^{00}-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկն արժեկտրոնային եկամտի վճարման օրը մինչև ժամը 14^{00}-ն վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:

Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարվելու է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18^{00}-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը պարտատոմսերի մարման օրը մինչև ժամը 14^{00}-ն համապատասխան վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին արժեկտրոնային եկամուտների վճարման կամ մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում այն մուտքագրվելու է համապատասխան

տարանցիկ հաշիվ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

Պարտատոմսերի ոչ ռեզիդենտ սեփականատերերի առկայության դեպքում, Բանկը արժեկտրոնի վճարումը ՀՀ տարածքում կիրականացնի այնպես, ինչպես ռեզիդենտ սեփականատերերին, մնացած դեպքերում՝ սեփականատիրոջ հանձնարարագրով և Բանկի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների համար, Բանկում գործող սակագներով, կփոխանցի համապատասխան հաշվին:

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվելու է հետևյալ կերպ՝

$$ՊՏԵ=(1+S/Հ)^{Հ}-1,$$

որտեղ՝

1) ՊՏԵ - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է:

2) S - տարեկան արժեկտրոնների տոկոսադրույքն է:

3) Հ - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների վճարման հաճախականությունն է:

Թողարկվող և տեղաբաշխվող յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի համար Թողարկողի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am Ազդագրի հրապարակումից հետո յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ լրացուցիչ կհրապարակվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով:

Եթե արժեկտրոնային եկամտի կամ մարման գումարի վճարման օրը լինի ոչ աշխատանքային , ապա վճարումը կկատարվի հաջորդող աշխատանքային օրը:

Ծրագրային Ազդագրի շրջանակներում յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային տոկոսները կհաշվարկվեն թողարկման օրվանից սկսած, ընդ որում տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման օր է համարվելու տեղաբաշխման առաջին օրը, որից սկսած կհաշվարկվեն պարտատոմսերի դիմաց հաշվարկվող արժեկտրոնային տոկոսները:

Արժեկտրոնի կուտակումը կիրականացվի հետևյալ բանաձևով՝

$$[\,AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}\,]$$

AI – Կուտակված տոկոս

FV – Պարտատոմսերի անվանական արժեք

C – Արժեկտրոնի տոկոսադրույք

f – Արժեկտրոնի վճարման հաճախականություն (f = 4 եռամսյակային վճարումների դեպքում)

DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում

DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի փաստացի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում

Արժեկտրոնների վճարումները կկատարվեն հավասարաչափ՝ համաձայն հետևյալ բանաձևի.

PC= $\frac{C}{f}$

Որտեղ՝

f - Արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f = 4 եռամսյակային վճարումների դեպքում),

C – Տարեկան արժեկտրոնի գումարն է

Պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\left[\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}}\right]+\left[\frac{A}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}\right]$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի:

DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի:

P - պարտատոմսի գինն է:

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում):

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է:

Y - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է:

C - տարեկան արժեկտրոնի չափը:

A - պարտատոմսի անվանական արժեքը:

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում i արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև N արժեքները (երբ N-ը ընդունում է 1 արժեք, i –ն նույնպես ընդունում է 1 արժեք):

Օրերի հաշվարկման պայմանականությունը՝ փաստացի/փաստացի.

DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1

DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2

որտեղ՝

D1M1Y1 - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Բանկի խորհրդի 2017թ. հուլիսի 06-ի «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» թիվ 25/02Լ-Հ որոշման, որով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել մինչև 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար) թողարկման ընդհանուր ծավալով, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով): ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը սահմանվել է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի համար սահմանվել է 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Միաժամանակ, սահմանվել է, որ տեղաբաշխումը պետք է իրականացնել ուղղակի վաճառքի ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող պարտատոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

- ✓ շահութահարկ
- ✓ եկամտային հարկ:

Շահութահարկ

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում, ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, իսկ ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով: Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

- ✓ պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (արժեկտրոնային եկամուտ) և
- ✓ պարտատոմսի վերավաճառքից (կապիտալի հավելաճ):

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես, եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելաճ և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

Եկամտային հարկ

Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները (այսուհետ՝ հարկ վճարողներ): Ընդ որում, ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում, ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում է, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի Պարտատոմսերից ստացված արժեկտրոնային եկամտից հարկվում են 10 տոկոս դրույքաչափով ֆիզիկական անձանց դեպքում, իսկ եթե ֆիզիկական անձը ներդրումներն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, այս դեպքում հարկը հաշվարկվում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով: Ընդ որում, Բանկը պարտատոմսերի մարման ժամանակ ֆիզիկական անձանց համար կհանդիսանա հարկային գործակալ:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Բանկը:

11. Առաջարկի ժամկետները և պայմանները

Առաջարկի պայմանները, ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները

Բանկը՝ պարտատոմսերի թողարկման Ծրագրային ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո, մեկ տարվա ընթացքում թողարկելու է անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար) թողարկման ընդհանուր ծավալով, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով):

ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները,

արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Բանկի Խորհրդի առանձին որոշումներով: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, ընդ որում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում Բանկը դադարեցնում է տեղաբաշխման գործընթացը: Ծրագրային ազդագիրը և թողարկման վերջնական պայմանները կհրապարակվեն Բանկի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am և պարտատոմսերի տեղաբաշխումը կսկսվի ոչ շուտ, քան ազդագրի հրապարակումից 3 աշխատանքային օր հետո:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի Խորհրդի որոշմամբ:

Պարտատոմսեր գնելու նպատակով՝ Ներդրողը Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում ներկայացնում է Պարտատոմսերի ձեռքբերման հայտ և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշվի բացման վերաբերյալ քաղվածք:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ✓ Ներդրողի անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու (լիազորված) անձի ստորագրությունը),
- ✓ Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը,
- ✓ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ը հաշվի օպերատորի կողմից բացված անձնական հաշվի համարը:
- ✓ Ներդրողի դրամային և դոլարային հաշվեհամարները:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտին կից ներկայացվում են.

- ✓ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի (առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշի) պատճենները (կամ տեղեկանք սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու մասին),
- ✓ իրավաբանական անձի դեպքում՝ պետ. ռեգիստրի վկայականի պատճենը (ներառյալ բոլոր ներդիրները), լիազորված անձի դեպքում՝ նաև լիազորագիրը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը մինչև տվյալ օրվա ժամը 15^{00}-ն ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման տվյալ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով, ընդ որում Պարտատոմսերի ձեռքբերման հայտը համարվում է ընդունված, եթե համապատասխան հաշվում առկա է Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը տվյալ օրվա ժամը 15^{00}-ից հետո ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման

հաջորդ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ներկայացրած անձինք գրանցվում են հատուկ այդ նպատակով բացված գրանցամատյանում, իսկ Պարտատոմսերի ձեռքբերման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

Տեղաբաշխման ընթացքում Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման ծավալների փոփոխության կամ չեղյալ հայտարարելու հնարավորություն:

Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն մեծությունների վերաբերյալ սահմանափակումներ չկան, որի հետևանքով Պարտատոմսերի ձեռքբերման հայտերում նշվող գումարների վերաբերյալ նվազագույն կամ առավելագույն մեծությունների սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ցանկացած այլ պահառուի մոտ գնորդի անունով այդ պարտատոմսի գրանցման պահից: Պարտատոմսեր ձեռքբերողները ներկայացված հայտերը բավարարվելուց հետո արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ համաձայն վերջիններիս կողմից սահմանված սակագների:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում տեղաբաշխման ավարտի օրվանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում Պարտատոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք չի նախատեսվում: Պարտատոմսերի ձեռքբերման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

Պարտատոմսերի տեղաբաշխման ծրագիրը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Բանկի անվանական պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ուղղակի վաճառքի սկզբունքով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Բանկի պարտատոմսերում ներդրողն իր կողմից ներկայացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտի բավարարման մասին տեղեկացվում է մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

Առաջարկի գինը

Ծրագրային ազդագրի շրջանակներում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կիրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, որը հաշվարկվելու է Ծրագրային ազդագրի 2-րդ բաժնի 10-րդ կետով սահմանված պարտատոմսի գնի որոշման

բանաձևով: Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից մատուցվող ծառայությունների կամ խորհրդատվության դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.nasdaqomx.am:

Տեղաբաշխում

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է առանց մասնագիտացված կազմակերպության (անդերռայթերի) մասնակցության:

Պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարումները կարող են կատարվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով, ինչպես նաև այլ առևտրային բանկերի միջոցով: Պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշիվները բացվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի միջոցով:

12. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Բանկը դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ հնարավոր է որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը չբավարարվի: Բանկի կողմից 2014թ. ապրիլին, 2015թ. մայիսին ու հոկտեմբերին և 2016թ. ապրիլին, հունիսին և սեպտեմբերին թողարկված արժեկտրոնային, անվանական պարտատոմսերը՝ (1 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 48 ամիս շրջանառության ժամկետով, հետգնման հնարավորությամբ, ծածկագիր՝ AMARBKB82ER9, 2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, ծածկագիր՝ AMARBKB29ER0, 2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 24 ամիս շրջանառության ժամկետով, ծածկագիր՝ AMARBKB2AER8, 2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, ծածկագիր՝ AMARBKB2BER6, 400 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս շրջանառության ժամկետով, ծածկագիր՝ AMARBKB2CER4, 1 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, ծածկագիր՝ AMARBKB2DER2) արդեն իսկ ունեն առևտրի թույլտվություն և ազատ շրջանառվում են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում:

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի Հանրապետության ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով:

13. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար Բանկը որևիցե խորհրդատուի չի դիմել:

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվությունը Բանկի անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել:

Սույն Բաժնի 12-րդ կետում ներկայացված՝ Բանկի կողմից արդեն իսկ թողարկված և «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում առևտրին թույլատրված և ազատ շրջանառվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվությունը Բանկին տրամադրվել է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից գրավոր, միաժամանակ արտացոլվել է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի պաշտոնական տնային կայքում՝ www.nasdaqomx.am: Ներկայացված տեղեկատվությունը ճշգրտորեն վերարտադրվել է ազդագրում և որևէ փաստ, որը կարող էր խեղաթյուրել այդ տեղեկատվության իմաստը, բաց չի թողնվել: : Սույն Բաժնում այլ անձանց կողմից այլ տեղեկատվություն չի տրամադրվել:

Բանկին և Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Անկախ աուդիտորները

Բանկի 2009, 2010 և 2011 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն, 2013, 2014, 2015 և 2016 թվականներին՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ, իսկ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռ.՝ +374 (10) 260 964, ֆաքս՝ 374 (10) 260 961, www.gta.am:

Տնօրեն-բաժնետեր՝ Գագիկ Գյուլբուդաղյան:

«Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010 Վ. Սարգսյանի փ. 26/1, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +374 (10) 566 762, ֆաքս՝ 374 (10) 566 762, www.kpmg.am:

Տնօրեն՝ Էնդրյու Քոքսշել:

15. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

- **Ընդհանուր տնտեսության ռիսկեր**, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Բանկի հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Բանկի գործունեության վրա: Դա կարտահայտվի Բանկի կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Բանկում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի

հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ:

- **Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը**, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:
- **Մրցակցային ռիսկ,** որն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի բանկերի դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, բանկային առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Բանկն, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է բանկային ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:
- **Կադրերի հոսունության ռիսկ**, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Բանկի վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Բանկի աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով՝ Բանկի ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ:
- **Վարկային ռիսկ:** Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Բանկին կարող են կորուստներ պատճառել:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը, ինչի շնորհիվ խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում բավականին փոքր է.

Հաճախորդների տրված վարկեր և այլ փոխառություններ	31.12.2016	30.09.2016 ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	30.09.2016 ՋՀԲ	31.12.2015
Վարկեր, այդ թվում՝				
Ստանդարտ	101,241,525	64,938,236	36,698,640	66,015,057
Հսկվող	3,632,583	1,422,087	2,961,976	426,391
Ոչ ստանդարտ	1,614,904	899,411	886,025	481,387
Կասկածելի	1,319,170	426,326	3,624,189	786,785
Ընդամենը վարկեր	**107,808,182**	**67,686,060**	**44,170,830**	**67,709,620**
Հնարավոր կորուստների պահուստ	(2,928,231)	(1,573,807)	(2,846,392)	(1,626,493)
Հնարավոր կորուստների պահուստ/Համախառն վարկեր	2.72%	2.32%	6.44%	2.40%
Խնդրահարույց վարկեր/Համախառն վարկեր	6.09%[3]	4.06%	16.92%	2.50%

Վարկային ռիսկը Բանկի հիմնական ռիսկերից մեկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ՝ վարկերի և փոխատվությունների տրամադրում, և ներդրումային գործունեության հետ՝ Բանկի ակտիվների պորտֆելի մեջ պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների ավելացում: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները:

Վարկեր տրամադրելիս Բանկը մեծ կարևորություն է տալիս վարկառուի նախկինում ունեցած վարկերի սպասարկման պատմությանը, կայուն եկամուտների առկայությանը, մասնագիտական պատրաստվածությանը, քանզի նպատակ ունենալով ձևավորել որակապես կայուն վարկային պորտֆել, վարկերը հնարավորինս բարձր իրացվելի գրավով ապահովված լինելու փաստից բացի, առաջնային նշանակություն ունի նաև վարկառուի պարտաճանաչությունը և վճարունակությունը:

- **Իրացվելիության ռիսկ:** Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ և սթրեսային իրավիճակներում Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը: Իրացվելիության ռիսկերի

[3] Խնդրահարույց վարկերի տեսակարար կշռի կտրուկ ավելացումը պայմանավորված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ և «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ վերակազմակերպվելու ձևով միանալու հանգամանքով:

կառավարման նպատակով բանկում ներդրված է սահմանաչափերի պահպանման և ամենօրյա կտրվածքով հսկողության իրականացման մեխանիզմ: Պարբերաբար իրականացվում են իրացվելիության ճեղքվածքի և բացասական ազդեցության սցենարային վերլուծություններ: Ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2014-2016 թվականների համար:

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած թույլատրելի մեծություն	Փաստացի մեծություն 2016	Փաստացի մեծություն 2015	Փաստացի մեծություն 2014
$Ն_2^1$	Նվազագույնը 15%	47.42%	41.45%	41.32%
$Ն_2^2$	Նվազագույնը 60%	210.40%	166.51%	168.01%

Բանկում ներդրված է իրացվելիության ճգնաժամային կառավարման մեխանիզմ, որը օգտագործվում է իրացվելիությանը սպառնացող անկանխատեսելի իրավիճակներում, մասնավորապես սահմանված ցուցանիշների և արտաքին գործոնների բացասական ազդակների դեպքերում:

- **Տոկոսադրույքի ռիսկ:** Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում արժեքի փոփոխության ռիսկն է, որն էլ իր հերթին կարող է ազդել Բանկի զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում կարող են ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տոկոսային մարժան, հանգեցնել վնասների՝: Բանկում տոկոսադրույքի Կառավարման նպատակով կիրառվում են բազիսային, եկամտաբերության կորի փոփոխության և ժամկետային անհամապատասխանության ռիսկերի գծով վերլուծություններ:
- **Արտարժույթի ռիսկ:** Արտարժույթի ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի կտատանման ռիսկը: : Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ելնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումներից և հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ, նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ձգտում է նվազագույնի:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Բանկը պատրաստ կլինի իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը:

16. Տեղեկատվություն Բանկի մասին

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:

ռուսերեն՝ АРАРАТБАНК открытое акционерное общество.
անգլերեն՝ ARARATBANK Open Joint-Stock Company.

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ռուսերեն՝ ОАО АРАРАТБАНК
անգլերեն՝ ARARATBANK OJSC

Բանկի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, գրանցման համարը՝ 4:

Բանկի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 59 23 23,
ֆաքս՝ (+374 10) 54 78 94,
էլ. փոստ՝ araratbank@araratbank.am,
ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Բանկի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Բանկը հիմնադրվել է ՀՀ կապի նախարարության ձեռնարկությունների կողմից, որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, և 1991թ.-ի սեպտեմբերի 20-ին որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ ՍՊԸ գրանցվել է Պետական բանկում, գրանցման համար 4: Այնուհետև, Բանկը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում՝ 1994թ.-ի մարտի 31-ին:

Բանկն իր բնականոն գործունեությունն իրականացրել է մինչև 2000թ.-ի նոյեմբեր ամիսը: Այնուհետև 21.11.2000թ.-ին ՀՀ ԿԲ-ի կողմից Բանկում նշանակվել է նախնական խնամակալություն, 15.06.2001թ.-ին խնամակալություն, որից հետո 19.03.2002թ.-ին՝ ժամանակավոր ադմինիստրացիա, որի գործունեությունն ավարտվել է 29.10.2004թ.-ին:

Բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի 2002թ.-ի դեկտեմբերի 27-ի որոշման համաձայն Բանկը վերակազմավորվել է որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 2003թ.-ի հունվարի 23-ին), այնուհետև անվանափոխվել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի, որը 2007 թվականի օգոստոսին վերակազմավորվել է որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:

Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին կայացվել է որոշում Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ, համաձայն որի լրացուցիչ թողարկվել է 482,230 (չորս հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր երեսուն) հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 17,590 (տասնյոթ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ: Նշված բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվել է 2016 թվականի հուլիսի 20-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը: Տեղաբաշխման արդյունքում Բանկի կապիտալն ավելացել է 8.5 մլրդ. ՀՀ դրամով: 2016 թվականի նոյեմբերի 8-ին Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը հաստատել է լրացուցիչ

թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք 2016 թվականի նոյեմբերի 16-ին գրանցվել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ Կենտրոնական Բանկը 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

Բանկն իր հեռանկարային զարգացումը նախանշելիս առաջնորդվում է, «Կանխատեսել՝ նշանակում է կառավարել» գաղափարախոսությամբ՝ փորձելով հնարավորինս ճշգրիտ և համակողմանի կանխատեսել սպասվող հնարավոր զարգացումները՝ նպատակ ունենալով բարձրացնել կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների արդյունավետությունը և հասցեականությունը:

Բանկի առաքելությունն է ապահովել Բանկի կայուն շարունակական զարգացումը, նպաստել երկրի տնտեսության զարգացմանը և կրել սոցիալական պատասխանատվություն հասարակության առջև՝ արժեքներ ստեղծելով Բաժնետերերի, Հաճախորդների և Աշխատողների համար:

Բանկի տեսլականն է լինել կայուն զարգացող միջազգային, լայն և արդյունավետ մասնաճյուղային ցանց ունեցող հանրային բանկ, օգտագործելով լավագույն միջազգային և նորագույն տեխնոլոգիաները, ունենալ առաջատար դիրքեր՝ ՓՄՁ վարկավորման, մանրածախ գործառնությունների, առևտրի ֆինանսավորման և ֆինանսական շուկայում իրականացվող գործառնությունների ուղղություններով:

Բանկի նպատակն է ապահովել կայուն զարգացում, արդարացնելով Բանկի բոլոր շահառուների սպասումները: Նշված նպատակն իրականացնելու համար Բանկը որդեգրել է մասնաճյուղերի ցանցի օպտիմալացման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաներով բանկային ծառայություններից օգտվելու հնարավորության ներդրման քաղաքականություն:

Բանկի կանոնադրական կապիտալը 31.12.2016 թվականի դրությամբ կազմում է 8,803,655 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից:

Բանկի խոշոր բաժնետեր են հանդիսանում «ՖԼԵԾ» ՍՊԸ-ն, որի բաժնեմասը կազմում է կանոնադրական կապիտալի 72.7270662%-ը, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը՝ 18.1388298%-ը, ինչպես նաև Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ն (RURAL IMPULSE FUND II S.A., SICAV-SIF) 8.5795616% բաժնեմասը (տվյալները ներկայացված են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, 09.07.2017 թվականի դրությամբ):

Բանկի բաժնետոմսերի մնացած մասի՝ 9,164 բաժնետոմսերի սեփականատերեր են հանդիսանում ընդհանուր թվով 77 բաժնետերեր՝ 4 իրավաբանական անձ և 73 ֆիզիկական անձ:

Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու արդյունքում 31.12.2016 թվականի դրությամբ Բանկի մասնաճյուղային ցանցը կազմված է եղել 65 մասնաճյուղից՝ 63-ը ՀՀ տարածքում և երկու մասնաճյուղ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում: Բանկի 65 մասնաճյուղերից 51-ը հանդիսանում են լիարժեք ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղեր, իսկ 14-ը՝ սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղեր, որոնք գործում են ՀՀ մաքսային ծառայության և մաքսային պահեստի տարածքներում:

31.12.2016թ. դրությամբ գործող 65 մասնաճյուղերից 32-ը գտնվում են Երևանում, 33-ը՝ ՀՀ մարզերում, այդ թվում 2 մասնաճյուղ՝ ԼՂՀ-ում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են 10.07.2017 թվականի դրությամբ գործող թվով 60 Բանկի մասնաճյուղերի գործունեության հասցեները:

Հ/Հ	Մասնաճյուղի անվանում	Հասցե
Լիարժեք ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղեր.		
1.	ԶԱՐԳԱՑՈՒՄ	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 21/1
2.	ԿԵՆՏՐՈՆ	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 10 շենքի թիվ 5 տարածք
3.	ՄԱՇՏՈՑ	ՀՀ. ք. Երևան, Մ. Մաշտոցի 25
4.	ԲԱՂՐԱՄՅԱՆ	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 2
5.	ԿՈՄԻՏԱՍ	ՀՀ. ք. Երևան, Կոմիտասի պող. 12/1
6.	ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Օղակաձև զբոսայգի 2-րդ հատված, Երիտասարդական կայարան
7.	ԽՈՐԵՆԱՑԻ	ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 24/7 և 24/9
8.	ԽՈՐԵՆԱՑԻ 1	ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի փ. 28
9.	ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
10.	ԷԼԻՏ ՊԼԱԶԱ	ՀՀ, ք. Երևան, Մովսես Խորենացի 15
11.	ԱՐԱԲԿԻՐ	ՀՀ. ք. Երևան, Կոմիտասի պող. 56
12.	ԱՎԱՆ - ԱՌԻՆՋ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Ավան-Առինջ թաղամաս 3/17
13.	ՋԵՅԹՈՒՆ	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31
14.	ՆՈՐ ՆՈՐՔ	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք համայնք, Գայի պող. 15/5
15.	ՆՈՐ-ՆՈՐՔ 1	ՀՀ, ք. Երևան, Հունան Ավետիսյան փ. 46/5
16.	ՆՈՐ ԱՐԵՇ	ՀՀ, ք. Երևան, Գաջեգործների 76
17.	ԻԶՄԻՐԼՅԱՆ	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Ամիրյան փող. 27 շենքի թիվ 2 տարածք
18.	ԱՋԱՓՆՅԱԿ	ՀՀ, ք. Երևան, Բեկնազարյան փ. 5/15 և Բեկնազարյան փ. 5/8 շինություն
19.	ՍԵԲԱՍՏԻԱ	ՀՀ. ք. Երևան, Սեբաստիա 141/1, թիվ 41ա
20.	ԲՅՈՒԶԱՆԴ	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Փ. Բյուզանդի փ., թիվ 1
21.	ԷՐԵԲՈՒՆԻ	ՀՀ, ք. Երևան, Խաղաղ Դոնի փ. 13/1

22.	ԴԱՎԻԹԱՇԵՆ	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Պետրոսյան փողոց, թիվ 44/1
23.	ՋՐՎԵԺ	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Ա. Քոչինյան փ., շինություն 3/5
24.	ՇԵՆԳԱՎԻԹ	ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Գ. Նժդեհի 29/33
25.	ԱԲՈՎՅԱՆ	ՀՀ, ք. Աբովյան, Հանրապետության 1/21
26.	ԷՋՄԻԱԾԻՆ	ՀՀ, ք. Էջմիածին, Մ. Մաշտոցի փողոց, թիվ 6բ/1
27.	ԱՇՏԱՐԱԿ	ՀՀ, ք. Աշտարակ, Տ.Մեծի փ. 18
28.	ԱՐՏԱՇԱՏ	ՀՀ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 95
29.	ԱՐՄԱՎԻՐ	ՀՀ, ք. Արմավիր, Հանրապետության փողոց թիվ 6 վարչական շենքի տարածք
30.	ԳՅՈՒՄՐԻ	ՀՀ, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի փ. 1/5
31.	ԳՅՈՒՄՐԻ-2	ՀՀ, ք. Գյումրի, Շիրակացու 63
32.	ՍՊԻՏԱԿ	ՀՀ, Լոռու մարզ, ք. Սպիտակ Թորոսյան 13
33.	ՉԱՐԵՆՑԱՎԱՆ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան փ., թիվ 1 առևտրի սրահ
34.	ՀՐԱԶԴԱՆ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 78/3 հասցեի ոչ բնակելի տարածք
35.	ԾԱՂԿԱՁՈՐ	ՀՀ, ք. Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, 2-րդ շենք, 1-ին հարկ
36.	ՍԵՎԱՆ	ՀՀ, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 142/1
37.	ԴԻԼԻՋԱՆ	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Գետափնյա 6ա
38.	ՄԱՐՏՈՒՆԻ	ՀՀ, ք. Մարտունի, Մյասնիկյան փ. 42/2
39.	ՄԱՍԻՍ	ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ, թիվ 17
40.	ԳՈՐԻՍ	ՀՀ, ք. Գորիս, Մաշտոցի 6/1
41.	ՇԻՐԱԿ	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Արագածի 2/6
42.	ՎԱՆԱՁՈՐ	ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 40
43.	ՎԱՆԱՁՈՐ-2	ՀՀ, ք. Վանաձոր, Գր. Լուսավորչի 52
44.	ԻՋԵՎԱՆ	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան փող. 5/3-2
45.	ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի 1/Ա
46.	ԱՐՑԱԽ	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 13/49
Սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղեր.		
1.	ԱՎԱՆ 1	ՀՀ, ք. Երևան, Խուդյակովի 222
2.	ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Արշակունյաց պողոտա թիվ 15
3.	ՆՈՐԱԳԱՎԻԹ	ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 127/21
4.	ԶՎԱՐԹՆՈՑ	ՀՀ, ք. Երևան, ք.Երևան 42, “Զվարթնոց” օդանավակայանի բեռնահամալիրի տարածք
5.	ԱՐԱՐԱՏՅԱՆ	ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10բ
6.	ԳՅՈՒՄՐԻ-1	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խորենացի 21
7.	ԳՅՈՒՄՐԻ-3	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3
8.	ԲԱՎՐԱ	ՀՀ, Շիրակի մարզ, գյուղ Բավրա

9.	ԱԳԱՐԱԿ	ՀՀ, Սյունիքի մարզ, ավան Ագարակ
10.	ՍԻՍԻԱՆ	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շաքիի համայնք, Երևան-մայրուղու 7-րդ կիլոմետր
11.	ՎԱՆԱՁՈՐ-1	ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մոսկովյան փող, թիվ 44
12.	ԲԱԳՐԱՏԱՇԵՆ-1	ՀՀ.Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն
13.	ԲԱԳՐԱՏԱՇԵՆ-2	ՀՀ.Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն
14.	ԳՈԳԱՎԱՆ	ՀՀ, Լոռու մարզ, գյուղ Գոգավան

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

Բանկային գործունեության վերահսկման նպատակով՝ սահմանված են տնտեսական նորմատիվներ, որոնցով կարգավորվում է նաև բանկերի իրացվելիությունը: 2016 թվականի ընթացքում Բանկի իրացվելիության նորմատիվները գտնվել են սահմանված ցուցանիշից անհամեմատ բարձր մակարդակի վրա, քանի որ Բանկի տնօրինությունը գործուն ջանքեր է գործադրել իրացվելիության պահպանման և բարձրացման համար: Իրացվելիության նորմատիվների պահպանման նպատակով՝ միջոցները տեղաբաշխվել են բարձր իրացվելի ակտիվներում: Վերը նշվածից ելնելով՝ ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2013-2016 թվականների համար.

Նորմատիվներ	**ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը**	**Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2016թ.**	**Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2015թ.**	**Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2014թ.**
$Ն_2^1$ (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը)	նվազագույնը՝ **15%**	**47.42%**	**41.45%**	**41.32%**
$Ն_2^2$ (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը)	նվազագույնը՝ **60%**	**210.40%**	**166.51%**	**168.01%**

Բանկի այլ տնտեսական նորմատիվների վերաբերյալ տեղեկատվությունը ներդրողները կարող են գտնել ինտերնետի Բանկի տնային էջի ***Հաշվետվություններ ենթաէջում***:

17. Բիզնեսի նկարագիրը

Հիմնական գործունեությունը

Բանկի համար առավել կարևոր գործունեությունը ֆինանսական միջնորդության՝ միջոցների ներգրավման և տեղաբաշխման իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ, որոնք նկարագրված են ստորև:

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով:

Բանկը հաճախորդներին առաջարկում է ավանդներ՝ տարբերակված ըստ նպատակների,

ժամկետների, տոկոսադրույքների և տոկոսների վճարման հաճախականության:

Վարկերի և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ վարկային գծերի, օվերդրաֆտների, երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների տրամադրում), բնակարանի ձեռքբերման և նորոգման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, լոմբարդային վարկավորում, սպառողական այլ վարկավորում, ինչպես նաև լիզինգային և ֆակտորինգային գործառնություններ:

Արտարժույթի և արժեթղթերի առքուվաճառք

Բանկն ակտիվորեն մասնակցում է ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներին, երկրորդային շուկայի գործարքներին, ինչպես նաև արտարժույթի բորսայական առևտրին:

Բանկը հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ պետական ներքին պարտքի կառավարման գործակալ:

Գանձապետարանի սպասարկում

Բանկն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի դրամարկղային սպասարկումը:

Բանկային փոխանցումներ

Բանկը 1997թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 15 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած ազատ փոխարկելի արժույթով և վճարային գործիքով:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճը՝ Բանկն առանձնապես կարևորում է արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ համագործակցության ընդլայնումը և կատարելագործումը: Այս նպատակով 2016թ. Բանկը շարունակել է զարգացնել համագործակցությունը Unistream, MoneyGram, Ria Money, Anelik, Xpress Money, INTEL EXPRESS, Sigue, CONVERSE TRANSFER և MoneyTun արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ: Բանկը ներկայումս հանդիսանում է միջազգային արագ դրամական փոխանցումների 9 համակարգերի ուղղակի գործակալ:

Պլաստիկ Քարտեր

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, որոնց թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետության քաղաքականությունը:

Հանդիսանալով “Արմենիան քարդ” (ԱրՔա) ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ՝ Բանկը թողարկում է ArCa Classic, ArCa Classic-M, ArCa կենսաթոշակային, ArCa ընտանեկան փաթեթ, ArCa Junior, ArCa Co-branded (Green Line), ArCa “Հաղթենք Միասին”, “ArCa Մոր և Մանկան” բանկային վճարային քարտեր:

2007 թվականի ընթացքում Բանկը դարձել է MasterCard համակարգի աֆիլիատ անդամ: 2008 թվականից սկսած Բանկը թողարկում է Cirrus/Maestro, MasterCard Standard, MasterCard Gold և MasterCard Business քարտեր:

2010 թվականի օգոստոսին Բանկը դարձել է VISA International վճարային համակարգի ասոցացված անդամ և 2011 թվականից սկսած Բանկը թողարկում է VISA GOLD, VISA CLASSIC, VISA AUTOCARD և VISA ELECTRON քարտեր, իսկ 2012 թվականից թողարկում է VISA INFINITE քարտեր և ներդրումներ կատարում՝ վերջիններիս քանակն ավելացնելու, սպասարկման որակը բարձրացնելու և տեխնիկական վերազինում կատարելու նպատակով: 2013թ.-ին Բանկը դարձավ VISA միջազգային վճարահաշվարկային համակարգի պրինցիպալ անդամ, ինչը հնարավորություն տվեց Բանկին տրամադրել հաճախորդներին ծառայությունների ավելի ընդլայնված և արդիականացված փաթեթ:

Բանկը թողարկված քարտերի քանակով ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և գործուն միջոցառումների իրականացմամբ:

2013թ.-ից Բանկը պաշտոնապես դարձավ DinersClub միակ թողարկող բանկը ՀՀ-ում և տարեվերջին Բանկը թողարկեց սուպեր պրեմիում դասի DinersClub Super Premium և պրեմիում դասի DinersClub Young Profesional վճարային քարտերը:

2015թ.-ից Բանկն Իդրամ ընկերության հետ համատեղ իրականացրեց www.arca.am պորտալով և ArCa համակարգի ներքո սպասարկվող բանկերի բանկոմատներով կոմունալ վճարումների ընդունումը:

2015 թվականին ընդլայնվեց Բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը,

2016 թվականին բարձրացվեց սպասարկվող վճարային քարտերի անվտանգության մակարդակը՝ պայմանավորված 3D secure համակարգի ներդրմամբ: Բանկի բանկոմատներում ներդրվեցին զեղծարարությունները զսպող՝ Antiskimmer ծրագրային ապահովումը: Իրականացվեց նաև Բանկի կողմից թողարկվող քարտերի PIN (Personal Identification Number) ծրարների ամբողջական տպագրում Բանկի տարածքում:

Ներկայումս Բանկի կողմից թողարկվում և սպասարկվում են MasterCard, Visa, Diners Club և ArCa վճարային համակարգերի քարտեր:

Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում

Հաճախորդներին վճարահաշվարկային համալիր ծառայությունների մատուցման նպատակով՝ Բանկը խթանում է հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանցից վճարների ընդունումը:

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխամասային գրասենյակի, մասնաճյուղերի, բանկոմատների միջոցով, մասնակցում է ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներին և արտարժույթի բորսայական գործարքներին:

Բանկը նախատեսում է պլաստիկ քարտերի գծով նոր ծառայությունների մատուցում: Բանկը կընդլայնի և կկատարելագործի նաև վարկավորման պրոդուկտների տեսականին, առավելապես միտված միկրովարկավորման և սպառողական վարկավորման աճին: Բանկը 2012 թվականին ստեղծեց լիզինգի և գյուղատնտեսական վարկավորման ստորաբաժանումներ, որոնք նպաստում են այդ ոլորտներում ներդրումների ծավալի աճին:

Բանկի կողմից նոր ծառայությունների առաջարկը և մատուցումն իրականացվում է շուկայում սպառողների կողմից ներկայացված պահանջմունքի ուսումնասիրության հիման վրա: Բանկի նոր

առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը տեղ է գտնում ինտերնետում՝ Բանկի տնային էջում, ինչպես նաև գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի սպասարկման սրահներում:

Հիմնական շուկաները

Բանկն իր զարգացման ներկա փուլում կարևորում է համարժեք մրցունակության մակարդակի ապահովումը հետևյալ շուկայական հատվածներում.

- ✓ փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում,
- ✓ խոշոր բիզնեսի վարկավորում,
- ✓ սպառողական վարկավորում,
- ✓ բնակարանային հիփոթեք,
- ✓ միջազգային առևտրի սպասարկում՝ ներառյալ դրամական փոխանցումներ, ակրեդիտիվներ, երաշխիքներ,
- ✓ ավանդների ներգրավում՝ տարբերակված ըստ ժամկետների, արժույթների և տոկոսների վճարման հաճախականության,
- ✓ հանրային ծառայությունների վճարների սպասարկում,
- ✓ պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում,
- ✓ ֆինանսական լիզինգի գործառնությունների իրականացում:

Բիզնես վարկավորման և վճարահաշվարկային սպասարկման շուկայական հատվածում բանկերի միջև մրցակցությունը բավականաչափ կոշտ է, որի պարագայում Բանկի կողմից բիզնեսի կարիքների բավարարումը միտված է առավելապես համալիր սպասարկումների բավարարմանը, որը Բանկի գործունեության ռազմավարական գերակայություններից է:

Բանկը, ելնելով կապիտալացման և պարտավորությունների ներգրավման միտումներից ու գնահատվող հնարավորություններից, իր ռազմավարության թիրախներից դիտարկում է մանրածախ բանկային ծառայությունների մատուցումը, բանկային սպասարկումների և ծառայությունների մատչելիության ու հասանելիության ապահովումը սպառողների լայն շրջանակի համար, որի արդյունքում Բանկն իր ամուր դիրքը կհաստատի Հայաստանում գործող բանկերի առաջին տասնյակում:

Կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների դերն ու նշանակությունը՝ 2016 թվականին Բանկը խորացրել և ընդլայնել է համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, որի արդյունքում իր հաճախորդներին առաջարկել է մատչելի և երկարաժամկետ վարկային միջոցներ:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները, գնահատելով Բանկի նախորդ տարիներին վարկային ծրագրերին մասնակցության փորձը և ակտիվությունը, 2016թ. ընդլայնեցին ու նոր որակ հաղորդեցին նախկինում ձեռք բերված համագործակցությանը:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից միջոցների ներգրավման ռազմավարության շրջանակներում՝ Բանկը կշարունակի համագործակցել նոր կառույցների հետ, ինչպես նաև կխորացնի համագործակցությունը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի (BSTDB), Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), Incofin Investment Management, DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային

կազմակերպության (DEG), ResponsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, The OPEC Fund for International Development (OFID), Green for Growth Fund Հիմնադրամի, Եվրասիական Զարգացման Բանկի (EDB), և այլ ֆինանսական հաստատությունների հետ:

2016թ. ընթացքում ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում Բանկն իր հիմնական գործընկերներից ներգրավեց շուրջ 28 մլն. ԱՄՆ դոլար՝ բիզնեսի վարկավորման նպատակով, ինչպես նաև շարունակեց համագործակցության եզրեր գտնել և խորացնել գործակցությունը միջազգային ֆինանսական այլ կառույցների հետ:

Բանկը մասնակցում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրին, համագործակցում է նաև Ազգային հիփոթեքային ընկերության հետ: Զարգացնելով վարկավորման մեխանիզմները՝ Բանկը մտադիր է ընդլայնել համագործակցությունը միջազգային այլ ֆինանսական հաստատությունների հետ:

Բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը

Բանկի մրցակցային առավելությունների շարքում հարկ է նշել հետևյալը.

✓ Բանկում ինստիտուցիոնալ ներդրողների առկայությունը, որոնք հետապնդում են երկարաժամկետ նպատակներ և խնդիրներ՝ նպատակաուղղված Բանկի հետագա զարգացմանը:

✓ Բանկի կառավարման արդյունավետ համակարգը, որում հստակ ամրագրված են յուրաքանչյուր կազմակերպական միավորի գործառութային խնդիրները և որոշված են դրանց պատասխանատվության սահմանները:

✓ Ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգը, դրա հուսալիության բարձր աստիճանը, որը հնարավորություն ունի ժամանակին բացահայտելու առաջացող ռիսկերի բնույթը, դրանց հնարավոր ազդեցության մակարդակը և առաջարկելու դրանց չեզոքացման ուղիները:

✓ Կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգը, որի շրջանակներում ամրագրված են Բանկի Խորհրդի և Վարչության պաշտոնատար անձանց ֆիդուցիար պատասխանատվությունը:

✓ Բանկային նոր ինովացիոն ծառայությունների նպատակաուղղվածությունը և նմանատիպ ծրագրերի իրացման հաջողված փորձը: Բանկի մրցունակության բարձրացման առանցքային գործոններից է տեղեկատվական տեխնոլոգիաների անհրաժեշտ բաղադրիչների յուրացումը, ծառայությունների մատուցումը, տեխնոլոգիաների միջազգային չափորոշիչների և համաշխարհային լավագույն փորձի վրա կառուցումը, որի արդյունքում Բանկում մշակվում ու ներդրվում են ինովացիոն և արդյունավետ պրոդուկտներ:

✓ Արտաքին միջավայրի ազդակների արագ արձագանքման արդյունավետ համակարգը, մասնավորապես՝ տնտեսության իրական հատվածում ընթացող գործընթացների և բանկային սպասարկումները, ծառայությունների ոլորտում տոկոսադրույքների ու սակագների փոփոխությունների նկատմամբ համարժեք արձագանքումը: Այդ նպատակով՝ Բանկը մշտապես իրականացնում է մարքեթինգային ուսումնասիրություններ և հարցումներ, պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ հաճախորդների հետ: Դրա շնորհիվ Բանկը վարում է սպասարկումների ճկուն (ներառյալ սակագնային) քաղաքականություն և առաջարկում է շուկայում առավել մատչելի ու մրցունակ պայմաններ և սակագներ:

✓ Բանկի աշխարհագրության և մասնաճյուղային ցանցի ինտենսիվ զարգացումը երկրի բոլոր տարածաշրջաններում, որը վերջին չորս տարիների ընթացքում հաջողությամբ իրացվում է

առանց ռիսկերի կառավարման համակարգի էական խաթարումների և շեղումների: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի մասնաճյուղերի թիվը կազմում է 65՝ մոտեցնելով Բանկի կողմից մատուցվող ծառայությունները հաճախորդների առավել լայն շրջանակի:

✓ Միջազգային ֆինանսական կառույցների հետ արդյունավետ համագործակցությունը և համագործակցության շրջանակներում համատեղ ծրագրերի հետևողական իրականացումը: Բանկը ներկայումս ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Եվրասիական Զարգացման Բանկի (EDB), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Green for Growth Fund Հիմնադրամի, Incofin Investment Management, DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպության (DEG), ResponsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), The OPEC Fund for International Development (OFID) ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

✓ Բանկի կառավարման բարձրագույն և միջին օղակներում բավարար ներուժ ու փորձ ունեցող կադրային պոտենցիալի առկայությունը, որն ունակ է լուծել Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով սահմանված խնդիրները:

✓ Բանկի կառավարման բոլոր օղակներում գործունեության բավարար կանոնակարգվածության աստիճանը:

✓ Բանկային ծառայությունների լայն շրջանակը, Բանկի ուժեղ ու կայուն դիրքերը մանրածախ սպասարկումների ոլորտում, որոնց շնորհիվ Բանկը դինամիկ և հաստատուն ձևով ընդլայնում է ծառայությունների և սպասարկումների ծավալները:

✓ Բանկի կողմից հաճախորդների թիրախային խմբերի տարանջատումն ըստ բիզնեսի ոլորտների վարման առանձնահատկությունների ու քաղաքացիների շրջանում ըստ սոցիալական, աշխարհագրական, տարիքային և այլ չափորոշիչների, որի արդյունքում առաջարկվում են յուրաքանչյուր խմբին համարժեք նպատակային համալիր, բարձրորակ բանկային ծառայությունների շրջանակ:

✓ Անմիջապես հաճախորդների սպասարկման համար պատասխանատու աշխատակիցների վերապատրաստման ծրագրերը, որի շնորհիվ նաև բարելավվում է սպասարկման որակը և աճում հաճախորդների թվաքանակը:

✓ Բաժնետիրական ընկերության կարգավիճակում հանդես եկող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ձևավորված դրական վարկանիշը և աճող հեղինակությունը:

Ֆինանսական գործառնությունները Բանկի կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ կանխիկ և անկանխիկ եղանակներով:

Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների աճի դինամիկան ներկայացվում է ստորև.



Ինչպես տեսնում ենք Բանկի վարկային պորտֆելն արձանագրել է կայուն դինամիկ բարձր աճ, մասնավորապես 2016 թվականին 2007 թվականի համեմատ Բանկի վարկային պորտֆելն աճել է ավելի քան 10.8 անգամ, իսկ տարեկան միջինում Բանկի վարկային պորտֆելը կրկնապատկվել է:

Առաջիկա տարիներին Բանկը նախատեսում է ակտիվ միջոցառումներ իրականացնել վարկային պորտֆելի մեծացման և բարձր որակի ապահովման ուղղությամբ: Միաժամանակ Բանկը քայլեր է ձեռնարկելու վարկային պրոդուկտները և տրամադրվող ֆինանսական ծառայությունները բարելավելու ուղղությամբ:

Ստորև ներկայացվում է հաճախորդներին տրամադրված վարկերի կառուցվածքը 31.12.2016 թվականի համար.



Ինչպես տեսնում ենք Բանկի վարկային պորտֆելը բարձր դիվերսիֆիկացված է, որում մեծ տեսակարար կշիռ են կազմում Փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրված վարկերը՝ 29.2%,

Վարկային քարտերով տրամադրված վարկերը՝ 14.9%, Հիփոթեքային վարկերը՝ 13.3% և Խոշոր ձեռնարկություններին տրամադրված վարկերը՝ 12.1%:

ՀՀ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումներում Բանկի վարկային պորտֆելի մասնաբաժինը 2011-2016թթ.-ին հետևյալն է.

հազ. ՀՀ դրամ

	31.12.2011	31.12.2012	31.12.2013	31.12.2014	31.12.2015	31.12.2016
ՀՀ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումներ	1,253,346	1,517,948	1,764,388	2,162,966	2,182,219	2,577,794
Բանկի կողմից հաճախորդներին տրամադրված վարկային ներդրումներ	38,380	53,662	59,594	65,987	66,083	104,880
Բանկի մասնաբաժինը (%)	**3.06%**	**3.54%**	**3.38%**	**3.05%**	**3.03%**	**4.07%**

Թողարկողի դիրքն այլ առևտրային բանկերի համեմատ 31.12.2016 թվականի դրությամբ հետևյալն է.

հազ. ՀՀ դրամ

Հ/Հ	Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավոր-ություններ	Ընդհանուր կապիտալ	Վաճառքի համար մատչելի ներդրումներ	Մասնա-ճյուղերի քանակ	Աշխա-տողների քանակ	Զուտ շահույթ
1								
2					32,846,022			
3						65		
4							913	
5								
6								
7								
8			182,414,530					
9	215,586,701							
10								1,131,034
11		104,879,951		33,172,171				
12								
13								
14								
15								
16								
17								

Աղյուսակից երևում է, որ Թողարկողը հիմնական ֆինանսական ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում առավելապես գտնվում է առաջին տասնյակում, մասնավորապես՝ Ակտիվներով 9-րդն է, Վարկային ներդրումներով և Կապիտալով 11-րդն է, Պարտավորություններով 8-րդն է, Վաճառքի համար ներդրումներով 2-րդն է, Մասնաճյուղերի քանակով 3-րդն է, Աշխատողների քանակով 4-րդն է, իսկ Զուտ շահույթի ցուցանիշով զբաղեցրել է 10-րդ հորիզոնականը:

Հաշվարկն իրականացվել է հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող ընթացիկ ֆինանսական հաշվետվությունները:

18. Բանկի կառուցվածքը



2009 թվականին Բանկն իր դուստր ընկերության՝ “Իզմիրլյան” ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ ձևավորել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ խումբ: 2010 թվականին ‘Իզմիրլյան’ ՈՒՎԿ ՍՊԸ-ն լուծարվել է և դուստր ընկերության լուծարման հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2010թ. փետրվարի 26-ի համապատասխան որոշմամբ: Ներկայումս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն որևիցե խմբի անդամ չի հանդիսանում:

19. Հիմնական միջոցները

Բանկն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 31.12.2016 թվականի դրությամբ Բանկի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 4,946.6 մլն. ՀՀ դրամ:

Բանկի կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ չկան:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի[4] դրությամբ Բանկի հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը.

հազ. ՀՀ դրամ

	Հող և շենքեր	Համակարգիչ-ներ և կապի սարքավորում-ներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Վարձակալ-ված գույքի բարելավում-ներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	4,280,120	2,431,418	1,426,387	319,825	401,113	**8,858,863**
Կուտակված մաշվածություն	567,583	1,787,421	1,054,969	274,724	227,508	**3,912,205**
Հաշվեկշռային արժեք	**3,712,537**	**643,997**	**371,418**	**45,101**	**173,605**	**4,946,658**

Բանկի ընթացիկ գործունեության ապահովման համար 2017 թվականի ընթացքում պլանավորվել է իրականացնել 1.72 մլրդ. ՀՀ դրամ կապիտալ ներդրումներ, մասնավորապես հիմնական միջոցների ձեռքբերման, ընթացիկ սպասարկման և ապրանքանիշի փոփոխման (rebranding) համար կներդրվի 496,500 հազ. ՀՀ դրամ: Տեխնիկական միջոցների, սարքերի և սարքավորումների, ինչպես նաև ծրագրային փաթեթների ձեռքբերման համար ընդհանուր ներդրումները կկազմեն 324,080 հազ. ՀՀ դրամ: Բանկի SS անվտանգության գծով 2017 թվականին պլանավորվել է ներդնել 27,880 հազ. ՀՀ դրամ: Բանկի և այլ բանկերի քարտապանների սպասարկման ու ցանցի ընդլայնման նպատակով՝ պլանավորված է ձեռք բերել 7 հատ ԱԳՄ-ներ՝ ներդնելով 80,800 հազ. ՀՀ դրամ, 50 հատ POS-տերմինալներ և 150 հատ նոր դրամարկղային մեքենաների սերտիֆիկատներ ընդհանուր՝ 29,831 հազ. ՀՀ դրամ, 20 հատ վճարային տերմինալներ՝ 25,600 հազ. ՀՀ դրամ և 10 հատ տարադրամի փոխանակման սարքեր՝ 105,500 հազ. ՀՀ դրամ:

[4] Տվյալներն աուդիտի կողմից ստուգված չեն

20. Զարգացման վերջին միտումները

Տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող զարգացումներով պայմանավորված Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները պարբերաբար վերանայվում են՝ նպաստելով վերջիններիս մրցունակության բարձրացմանը և մատչելիության ապահովմանը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Թողարկողի ակտիվապասիվային հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, որը ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

հազ. ՀՀ դրամ

Միջոցների ներգրավում	31.03.2017[5]	31.12.2016	31.12.2015	31.12.2014
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	50,501,225	46,333,788	43,552,246	45,194,412
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	107,637,709	60,961,741	61,934,162	68,753,521
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	3,809,140	3,812,886	3,323,481	1,847,950

Միջոցների տեղաբաշխում	31.03.2017[6]	31.12.2016	31.12.2015	31.12.2014
Հաճախորդներին տրված վարկեր	111,378,667	66,148,947	66,083,127	65,986,845
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	11,228,701	13,275,107	6,497,336	7,276,797
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	26,194,595	26,901,944	15,144,701	15,424,281

Թողարկողի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Բանկի տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.araratbank.am «Հաշվետվություններ» բաժնում, ինչպես նաև Բանկը որպես հաշվետու թողարկող, իր արժեթղթերի սեփականատերերին է ներկայացնում նաև եռամսյակային հաշվետվություններ, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի՝ «Հաշվետու թողարկողի հաշվետվություններ» և «Բաժնետերեր և ներդրողներ» բաժիններում:

21. Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

[5] Տվյալներն աուդիտի կողմից ստուգված չեն
[6] Տվյալներն աուդիտի կողմից ստուգված չեն

✓ Բանկի գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին,

✓ Բանկի ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Բանկի ռիսկերը, պահպանելով բանկային գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,

✓ ավելացնել Բանկի եկամտաբեր ծառայությունների տեսականին,

✓ ապահովել Բանկի դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացում,

✓ ապահովել Բանկի զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,

✓ Բանկի գործունեության ապահովման ծախսեր:

Բանկը կանխատեսել է 2017 թվականի գործունեության արդյունքում ստանալ 600,000 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ:

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

✓ Բանկի ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,

✓ Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,

✓ Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,

✓ Բանկի անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,

✓ Բանկի գործունեության ապահովման ծախսեր,

✓ Նոր բանկային արտադրանքի և ծառայությունների ներդրման ծախսեր:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

✓ բանկային ավանդների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,

✓ արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,

✓ անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը):

22. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Բանկի կանոնադրությամբ, սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

✓ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով),

✓ Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),

✓ Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի գործադիր տնօրեն (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասությունները

Բանկի Ժողովը

1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:
2. Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ) Բանկի վերակազմավորումը,

գ) Բանկի լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

թ) Ժողովի վարման կարգի հաստատումը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

ժա) բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը,

ժբ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժգ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժդ) Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումն ու հետգնումն օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում,

ժե) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը, և որի արժեքը՝ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին,

ժզ) գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները,

ժէ) Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

ժը) օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

3. Ժողովի բացառիկ իրավասությունները չեն կարող փոխանցվել Խորհրդին, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնին կամ այլ անձանց:

4. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ) Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում, բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժգ) Բանկի կողմից օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

ժդ) Բանկի առանձնացված և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների ու կանոնակարգերի հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

ժե) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը և (կամ) դրանց մասնակցությունը,

ժզ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և (կամ) դրանց մասնակցությունը,

ժէ) ստորև նշված հարցերի ներկայացումը Ժողովին:

1. Բանկի վերակազմավորումը,
2. բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը,
3. Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
4. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
5. Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումն օրենքով ու Բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում,
6. Խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին,
7. գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները,
8. Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժը) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժթ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ի) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

իա) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների և կարգերի սահմանումը,

իբ) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը,

իգ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը,

իդ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը: Բանկի պարտապանի պարտավորության վրա տոկոսների և տույժերի հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման, կամ ներման մասին որոշումների ընդունումը,

իե) Բանկի առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ցանկի հաստատումը,

իզ) օրենքով և Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Վերը նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահված է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Գործադիր մարմնին կամ այլ անձանց:

Գործադիր մարմինը

1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը:

Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար:

2. Բանկի Վարչության կազմը ձևավորվում է Խորհրդի որոշմամբ:

Վարչության կազմում ընդգրկված են Գործադիր տնօրենը (պարտադիր), նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, ինչպես նաև, Խորհրդի որոշմամբ, այլ ստորաբաժանումների ղեկավարներ:

3. Բանկի Վարչությունը՝

ա) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքները,

բ) հաստատում է Բանկի աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները,

գ) քննարկում է ստորև 5-րդ կետի ա), զ), թ), ժգ), ժդ) ենթակետերով նախատեսված հարցերը, որոշումներ է ընդունում դրանց վերաբերյալ,

դ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ,

ե) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գույքի օտարման գործարքների վերաբերյալ,

զ) քննարկում և որոշումներ է ընդունում վարկերի տրամադրման վերաբերյալ,

է) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության մասին,

ը) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գլխամասի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ամսական և (կամ) եռամսյակային կատարողականների մասին,

թ) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության տարեկան պլանները և հաշվետվությունները:

4. Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

5. Գործադիր տնօրենը՝

ա) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող Բանկի՝ ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, վարչակազմակերպական կառուցվածքը,

բ) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, վերահսկում է դրանց կատարումը,

գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին,

դ) Բանկի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ե) ապահովում է Ժողովի, Խորհրդի և Վարչության որոշումների, այդ թվում՝ հեռանկարային զարգացման ծրագրի և ներքին ակտերի կատարումը,

զ) ըստ Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի, իրականացնում է իրավասությունների և պարտականությունների, այդ թվում՝ Գործադիր տնօրենի տեղակալների, բաշխումն աշխատողների միջև՝ հստակ սահմանելով հաշվետվական հարաբերությունները,

է) վերահսկում է միջին և ստորին օղակների ղեկավարների գործողությունները,

ը) պահանջում է ստորաբաժանումների ղեկավարներից՝ վերահսկել իրենց աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետությունը,

թ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում կազմակերպական կառուցվածքը կատարելագործելու վերաբերյալ,

ժ) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններ, հայցադիմումներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

ժա) պարբերաբար իրականացնում է Բանկի անձնակազմի վերապատրաստումը,

ժբ) իրականացնում է Վարչության նախագահի գործառույթները՝

1) կազմակերպում է Վարչության աշխատանքները,
2) գումարում և նախագահում է Վարչության նիստերը,
3) կազմակերպում է Վարչության նիստերի արձանագրությունների վարումը,
4) ներկայացնում է Վարչությունը Խորհրդի նիստերին
5) ստորագրում է Վարչության նիստերի որոշումները,

ժգ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում ներքին հսկողության համակարգի համարժեքության և մոնիտորինգի արդյունավետության վերաբերյալ,

ժդ) իր իրավասություններին պատկանող ցանկացած հարց կարող է քննարկել Վարչության նիստին,

ժե) իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

6. Այն հարցերը, որոնք օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ժողովի, Խորհրդի կամ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Գործադիր տնօրենի իրավասությանը:

7. Գործադիր տնօրենը Խորհրդին առնվազն եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և ձևով:

8. Գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ՝ եթե Գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ

1. **Բանկի Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան**

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Չոլագյան փ. տ. 4
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	“ՖԼԵԾ” ՍՊԸ մասնակից

2. **Խորհրդի անդամ՝ Վահրամ Ղազարյան**

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 15 շ. բն. 30
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	Բանկային ռիսկերի կառավարման կոորդինացում Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	“ԲՅՈՒՐԱԿՆ” ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ” ՍՊԸ-ի (հիմնադիր) տնօրեն

3. Խորհրդի անդամ՝ Արզիկ Սուվարյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան, Բելյակովի 5, բն. 36
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	Կորպորատիվ կառավարման և անձնակազմի կառավարման կոորդինացում Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի պրոֆեսոր, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնի վարիչ

4. Խորհրդի անդամ՝ Ջոն Սթաուբ

Բնակության վայր	Մեծ Բրիտանիա, Լոնդոն N12, 7 LD, 55 Վոլմինգտոն Ֆոլդ
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	Միջազգային ծրագրերի կոորդինացում Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Անկախ բանկային խորհրդատու,

5. Խորհրդի անդամ՝ Յան Դիվայնգարթ

Բնակության վայր	Բելգիա, Լյովեն
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	Կորպորատիվ կառավարման և անձնակազմի կառավարման կոորդինացում Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Arend Capital Partners» ընկերության սեփականատեր և գործադիր տնօրեն, «Incofin Investment Management» ներդրումային ընկերությունում որպես մասնավոր ներդրումների գծով տնօրեն

Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ, եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար),

գ) նա մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն ենթակետի իմաստով՝ իրական ժամանակի ռեժիմով և հեռակա (հարցմամբ) մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն,

դ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

1. Վարչության նախագահ-գործադիր տնօրեն՝ Աշոտ Օսիպյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Ամառանոցային 83
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	բացակայում է

2. Վարչության անդամ - գործադիր տնօրենի առաջին տեղակալ՝ Դավիթ Հարությունյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Հ. Հակոբյան 11 շենք, բն. 16
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	բացակայում է

3. Վարչության անդամ - գործադիր տնօրենի տեղակալ՝ Բագրատ Ճզմաչյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Վարդանանց փող. 24 շենք, բն. 22
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	բացակայում է

4. Վարչության անդամ - գործադիր տնօրենի տեղակալ՝ Կարեն Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Արաբկիր 21 փող. 2-8
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	բացակայում է

5. Վարչության անդամ - գլխավոր հաշվապահ՝ Տիգրան Գալստյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Վարդանանց փող. 26 շենք, բն. 17
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Դասախոսում է Հայաստանի Ֆինանսական ակադեմիայում

6. Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ՝ Սուրեն Կարապետյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Ավան, Դուրյան թաղ., շենք 43, բն. 9
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	բացակայում է

7. Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ՝ Զարուհի Մելքոնյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ պողոտա, շենք 31ա, բն. 17
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	բացակայում է

8. Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ՝ Կարեն Հակոբյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Ջրվեժ, Մայակ, 27 շենք, բն. 50
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 58-60 էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	բացակայում է

Ազդագրի ներկայացման պահին Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոս կենտրոնացվածություն կա միայն Զարգացում մասնաճյուղում, որը ստեղծվել է Բանկի խորհրդի «28» դեկտեմբերի 2016թ.-ի թիվ 18/01Լ որոշման հիման վրա և գործունեություն է ծավալում Երևան քաղաքի Պարոնյան փողոցի 21/1 ոչ բնակելի տարածքում: Նշված տարածքում նախկինում

գործունեություն է ծավալել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ իրավանախորդ «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ն որպես գլխամասային գրասենյակ, այդ իսկ պատճառով Բանկի նորաբաց Զարգացում մասնաճյուղում կենտրոնացված է Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը: Մասնաճյուղի կառավարիչ է նշանակվել Դավիթ Օհանյանը, ով բնակվում է Երևան քաղաքում և ունի ֆինանսաբանկային համակարգի շուրջ 17 տարվա աշխատանքային փորձ, որից 8 տարին աշխատել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տարբեր ղեկավար պաշտոններում: Մասնաճյուղի կառավարչի հիմնական գործառույթներն են՝

- ✓ ապահովել Բանկի խորհրդի կողմից հաստատված մասնաճյուղի տնտեսական գործունեության ծրագրերի և Բանկի ներքին ակտերի կատարման աշխատանքները,
- ✓ ապահովել մասնաճյուղի աշխատակիցների գործունեության ղեկավարումը և վերահսկողությունը,
- ✓ ապահովել մասնաճյուղի կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ ֆունկցիաների կատարումը,
- ✓ ապահովել բանկային ծառայությունների տեսականու և պայմանների արդիականացման աշխատանքների կատարումը:

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

23. Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն գտնվում է.

- ✓ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Եզնիկ Կողբացու 30, ք. Երևան, Հարավ-Արևմտյան թաղ. 52/2 շ., բն. 32, հեռ. (010) 58 28 84, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հ/հ 166690902, ՀՎՀՀ 01808789) ուղղակի հսկողության տակ, քանի որ այն հանդիսանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետոմսերի 72.7270662%-ի սեփականատեր.
- ✓ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (European Bank for Reconstruction and Development Անգլիա, 2JN, EC2A, Լոնդոն, Իքսչեյնջ Սքուեր մեկ) ուղղակի հսկողության տակ, քանի որ այն հանդիսանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետոմսերի 18.1388298%-ի սեփականատեր.
- ✓ Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ (RURAL IMPULSE FUND II S.A. SICAV-SIF Լյուքսեմբուրգ 1468 Լյուքսեմբուրգ Պիեռ Վերներ վարչական կենտրոն Էրասմ փողոց 13) ուղղակի հսկողության տակ, քանի որ այն հանդիսանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետոմսերի 8.5795616%-ի սեփականատեր.
- ✓ ՀՀ քաղաքացի Բարսեղ Բեգլարյանի (անձնագիր՝ AK 0515529, տրված՝ 02.06.2010թ.-ին 001-ի կողմից, ք. Երևան, Չոլագյան փ. տ. 4) անուղղակի հսկողության տակ, քանի որ Բարսեղ Բեգլարյանի մասնակցությունը «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում կազմում է 89,985%, հետևաբար նա հնարավորություն ունի կանխորոշելու «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից կայացվող որոշումները:

24. Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2015-2016թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2017 թվականի առաջին եռամսյակի Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներառված են Ազդագրում:

Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Ինտերնետի Բանկի տնային էջում:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2017 թվականի մարտի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

25. Էական պայմանագրերը

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի Ընդհանուր ժողովը 2016 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում և փակ տեղաբաշխում իրականացնելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման մասին: Նշված որոշմամբ թողարկվել է 483,230 հատ լրացուցիչ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 17,590 ՀՀ դրամ արժեքով, 20.07.2016թ.-ից մինչև 30.09.2016թ.-ը տեղաբաշխման ժամկետով: Լրացուցիչ թողարկված սովորական բաժնետոմսերից 23,312 հատ ձեռք են բերվել Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ի կողմից (RURAL IMPULSE FUND II S.A., SICAV-SIF), իսկ մնացած 459,918 հատ սովորական բաժնետոմսերը ձեռք են բերվել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը 2016 թվականի նոյեմբերի 8-ին հաստատել է տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք էլ 2016 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել են, որից սկսած ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կապիտալը փաստացիորեն համալրվել է 8.5 մլրդ. ՀՀ դրամով՝ ապահովելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի պահանջը: Կապիտալի համալրման արդյունքում Կանոնադրական կապիտալը համալրվել է 2.42 մլրդ. ՀՀ դրամով, իսկ էմիսիոն եկամուտն ավելացել է 6.08 մլրդ. ՀՀ դրամով: Արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կազմել է 8,803,655 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ հետ ինտեգրման գործընթացի արագ և արդյունավետ իրականացման համար Բանկում մշակվել է և Խորհրդի կողմից հաստատվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ և «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ ինտեգրման ծրագիր, որում հստակ սահմանվել են ինտեգրացման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների նկարագիրը, պատասխանատու աշխատողները և աշխատանքների կատարման հստակ ժամանակացույցը: Նշված ծրագրով ինտեգրացման գործընթացն ամբողջությամբ և արդյունավետ կերպով իրականացնելու համար սահմանվել է շուրջ երկու տարի ժամանակահատված:

26. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ներկայացվող Ազդագրում վերը նշված անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն չի օգտագործվել:

27. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող, ներդրողների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն-վերլուծությունները մշտապես մատչելի են հանրությանն ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.araratbank.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխամասային գրասենյակ:

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«10» հուլիսի 2016 թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

(թողարկողի անվանումը)

Կորպորատիվ անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր

(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ____ _____ 20 թ.__), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են _____ հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ

(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)

1.	Թողարկողը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
2.	Երաշխավորողը՝	
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)՝	2017-1
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը՝	
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման	Թողարկողի առաջարկվող պարտատոմսերի մարումների և Թողարկողի կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Թողարկողը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ:

	ծավալը՝ ըստ ստորադասության	
6.	Թողարկման արժույթը՝	
7.	Առաջարկի գինը՝	Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կիրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, ընդ որում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում Բանկը դադարեցնում է տեղաբաշխման գործընթացը:
8.	Անվանական արժեքը՝	
9.	Քանակը՝	
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր՝	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017թ. հուլիսի 6-ի «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» թիվ 25/02Լ-Հ որոշումը
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը՝	
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը՝	եռամսյակային

	ծավալը՝ ըստ ստորադասության	
6.	Թողարկման արժույթը՝	
7.	Առաջարկի գինը՝	Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կիրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, ընդ որում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու և հետ կանչվող հայտերի բացակայության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:
8.	Անվանական արժեքը՝	
9.	Քանակը՝	
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր՝	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017թ. հուլիսի 6-ի «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» թիվ 25/02Լ-Հ որոշումը
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը՝	
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը՝	եռամսյակային

16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)՝	
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը՝	փաստացի/փաստացի
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը՝	«ոչ կիրառելի»
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ՝	
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ՝	«ոչ կիրառելի»
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը՝	
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը՝	անվանական արժեքով
23.	Մարման արժեքի փոփոխությունը	«ոչ կիրառելի»
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն՝	«ոչ կիրառելի»
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն՝	«ոչ կիրառելի»
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ՝	Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության	առկա չէ

	առկայություն՝	
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին՝	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ: Հնարավոր է որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո 60 օրվա ժամկետում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրն արժեկտրոնի հաշվեգրված գումարները:
30.	Արժեթղթի վարկանիշը՝	«ոչ կիրառելի»
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը՝	Պարտատոմսեր գնելու նպատակով՝ Ներդրողը Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում ներկայացնում է Ձեռքբերման հայտ և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշվի բացման վերաբերյալ քաղվածք: Պարտատոմսերի ձեռքբերման հայտը մինչև տվյալ օրվա ժամը 15^{00}-ն ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման տվյալ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով, ընդ որում Պարտատոմսերի ձեռքբերման հայտը համարվում է ընդունված, եթե համապատասխան հաշվում առկա է Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը: Պարտատոմսերի ձեռքբերման հայտը տվյալ օրվա ժամը 15^{00}-ից հետո ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման հաջորդ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք

		բերվող պարտատոմսերի քանակով: Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ներկայացրած անձինք գրանցվում են հատուկ այդ նպատակով բացված գրանցամատյանում, իսկ Պարտատոմսերի ձեռքբերման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության: Տեղաբաշխման ընթացքում Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման ծավալների փոփոխության կամ չեղյալ հայտարարելու հնարավորություն: Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն մեծությունների վերաբերյալ սահմանափակումներ չկան, որի հետևանքով Պարտատոմսերի ձեռքբերման հայտերում նշվող գումարների վերաբերյալ նվազագույն կամ առավելագույն մեծությունների սահմանափակումներ չեն սահմանվում:

Թողարկողը (երաշխավորողը) պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2016թ.

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին.

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության («Բանկ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկի՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Մենք որոշել ենք, որ առկա չեն առանցքային աուդիտորական հարցեր, որոնք կցանկանայինք ներակայացնել մեր հաշվետվությունում:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Բանկը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման

ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Բանկի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Բանկը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Բացի այդ, մենք կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի մենք պահպանել ենք անկախությանը վերաբերող համապատասխան վարքագծի պահանջները, և որում հաղորդում ենք մեր բոլոր կապակցվածությունները և այլ հարցեր, որոնք կարող են խելամտորեն ազդեցություն ունենալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, համապատասխան պաշտպանվածությունը նման ազդեցությունից:

Այս աուդիտորական եզրակացության ձևավորմանը հանգեցրած աուդիտորական առաջադրանքի պատասխանատուն Արմեն Հովհաննիսյանն է:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

20 փետրվարի, 2017թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	**10,775,508**	10,239,473
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	**(5,724,914)**	(5,675,713)
Զուտ տոկոսային եկամուտներ		**5,050,594**	4,563,760
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	**1,049,827**	1,002,273
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	**(558,934)**	(493,328)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**490,893**	508,945
Զուտ օգուտ /(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		**206,214**	(40,262)
Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	8	**447,979**	781,483
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից		**309,293**	22,797
Այլ գործառնական զուտ եկամուտ	9	**321,775**	494,793
Արժեզրկումից կորուստներ	10	**(1,265,280)**	(960,703)
Անձնակազմի գծով ծախսեր	11	**(2,313,515)**	(2,234,521)
Մաշվածություն և ամորտիզացիա	20	**(429,722)**	(459,745)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	12	**(1,437,422)**	(1,437,311)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**1,380,809**	1,239,236
Շահութահարկի գծով ծախս	13	**(291,334)**	(297,555)
Տարվա շահույթ		**1,089,475**	941,681
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ		**2,104,280**	25,668
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ		**(767,354)**	(200,037)
Վերահաշվարկվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		**(267,385)**	34,874
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում		**1,069,541**	(139,495)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**1,069,541**	(139,495)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**2,159,016**	802,186
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ	14	**0.81**	0.74

9-ից 69 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	**38,617,733**	39,171,437
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	**13,275,107**	6,497,336
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17	**162,677**	3,214
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր			
- Բանկի կողմից պահվող	18	**26,901,944**	14,121,388
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	18	**-**	1,023,313
Հաճախորդներին տրված վարկեր	19	**66,148,947**	66,083,127
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	**2,513,457**	2,568,715
Կանխավճարներ շահութահարկի գծով		**-**	257,877
Հետաձգված հարկային ակտիվ	13	**-**	122,836
Բռնագանձված ակտիվներ	21	**677,863**	746,859
Այլ ակտիվներ	22	**900,959**	1,431,370
Ընդամենը՝ ակտիվներ		**149,198,687**	132,027,472
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	23	**2,518,791**	5,246,779
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24	**62,875,780**	59,337,156
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	17	**847**	1,340
Այլ փոխառություններ	25	**45,729,036**	40,902,473
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	**3,812,886**	3,323,481
Ընթացիկ հարկային պարտավորություն		**22,693**	-
Հետաձգված հարկային պարտավորություն	13	**150,946**	
Այլ պարտավորություններ	27	**957,096**	744,662
Ընդամենը՝ պարտավորություններ		**116,068,075**	109,555,891
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	28	**8,803,655**	6,387,505
Էմիսիոն եկամուտ		**8,031,745**	1,947,880
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		**866,623**	(202,918)
Կուտակված շահույթ		**15,428,589**	14,339,114
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**33,130,612**	22,471,581
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**149,198,687**	132,027,472

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 5-ից 69 էջերում, ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2017թ. փետրվարի 20-ին:

Աշոտ Օսիպյան
Վարչության նախագահ

Տիգրան Գալստյան
Գլխավոր հաշվապահ

9-ից 69 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա-հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ	6,387,505	1,947,880	(63,423)	13,397,433	21,669,395
Տարվա շահույթ	-	-	-	941,681	941,681
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	-	-	25,668	-	25,668
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	(200,037)	-	(200,037)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	34,874	-	34,874
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(139,495)	941,681	802,186
Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,387,505**	**1,947,880**	**(202,918)**	**14,339,114**	**22,471,581**
Բաժնետիրական կապիտալի ավելացում	**2,416,150**	**6,083,865**	-	-	**8,500,015**
Սեփականատերերի հետ գործարքներ	**2,416,150**	**6,083,865**	**-**	**-**	**8,500,015**
Տարվա շահույթ	**-**	**-**	**-**	**1,089,475**	**1,089,475**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	**-**	**-**	**2,104,280**	**-**	**2,104,280**
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	**-**	**-**	**(767,354)**	**-**	**(767,354)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	**-**	**-**	**(267,385)**	**-**	**(267,385)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**1,069,541**	**1,089,475**	**2,159,016**
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,803,655**	**8,031,745**	**866,623**	**15,428,589**	**33,130,612**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ նախքան հարկումը	**1,380,809**	1,239,236
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	**429,722**	459,745
Արժեզրկումից կորուստներ	**1,265,280**	960,703
Փոփոխություն ստացվելիք տոկոսներում	**19,369**	(34,671)
Փոփոխություն վճարվելիք տոկոսներում	**251,288**	(45,816)
Զուտ վնաս ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	**249,015**	85,768
Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	**(205,090)**	25,079
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**3,390,393**	2,690,044
Փոփոխություններ ածանցյալ գործիքներում	**(41,887)**	(26,953)
Փոփոխություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներում	**(6,757,122)**	752,443
Փոփոխություններ հաճախորդներին տրված վարկերում	**(1,520,898)**	(874,291)
Փոփոխություններ այլ ակտիվներում	**744,029**	671,801
Փոփոխություններ բանկերի նկատմամբ պարտավորություններում	**(1,128,032)**	141,914
Փոփոխություններ հաճախորդների ընթացիկ հաշիվներում և ավանդներում	**3,436,332**	(6,503,701)
Փոփոխություններ այլ պարտավորություններում	**214,383**	(74,079)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**(1,662,802)**	(3,222,822)
Վճարված շահութահարկ	**(4,367)**	(709,242)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(1,667,169)**	(3,932,064)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (ձեռքբերում)/օտարում	**(10,409,147)**	168,805
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	**(374,464)**	(383,395)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(10,783,611)**	(214,590)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	**8,500,015**	-
Պարտքային արժեթղթերի թողարկում	**474,048**	1,440,769
Փոխառությունների ստացում/(մարում) ֆինանսական կազմակերպություններից	**3,126,697**	(2,861,690)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**12,100,760**	(1,420,921)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	**(350,020)**	(5,567,575)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	**39,171,437**	44,757,540
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**(203,684)**	(18,528)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (ծանոթ.15)	**38,617,733**	39,171,437
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	**10,794,877**	10,204,802
Վճարված տոկոսներ	**5,473,626**	(5,721,529)

9-ից 69 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը հանդիսանում է 1991թ-ին հիմնված «Հայկապ Բանկ» ՓԲԸ իրավահաջորդը: Բանկը գրանցվել է 20 սեպտեմբերի 1991թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N4 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 53 մասնաճյուղերը գտնվում են ՀՀ տարբեր մարզերում և ԼՂՀ-ում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Պուշկինի 19:

Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 688 մարդ:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար

մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2016թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2016թ-ին ՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Սահմանված հատուցումների պլաններ՝աշխատակիցների վճարներ (ՀՀՄՍ 19 փոփոխություններ)*
- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*
- *Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում (ՀՀՄՍ 38 և ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *Համատեղ գործողություններում շահերի ձեռքբերման հաշվառում» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*
- *Առանձին ֆինանսական հաշվետվություններում սեփական կապիտալի մեթոդը (ՀՀՄՍ 27 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 14 հաշիվների կանոնավոր հետաձգում*
- *2012-2014թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով*

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՀՀՄՍ 12 (Փոփոխություններ) «Շահութահարկեր»

ՀՀՄՍԽ-ը թողարկել է *«Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչում»* պարզաբանումը, որը ՀՀՄՍ 12-ում՝ *«Շահութահարկեր»*, կատարում է որոշակի փոփոխություններ: Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես պետք է հաշվառել իրական արժեքով չափվող պարտքային գործիքներին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները, հատկապես այն դեպքերում, երբ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունները նվազեցնում են պարտքային գործիքի իրական արժեքը սկզբնական արժեքից ցածր մակարդակի:

Սույն փոփոխությունները պարզաբանում են հետևյալը.

- այն պարտքային գործիքների գծով չիրացված վնասները, որոնք չափվում են իրական արժեքով, իսկ հարկային առումով՝ սկզբնական արժեքով, առաջացնում են նվազեցվող ժամանակավոր տարբերություններ՝ անկախ նրանից, թե պարտքային գործիքին տիրապետողն ակնկալում է վերականգնել դրա հաշվեկշռային արժեքը՝ այն վաճառելու, թե օգտագործելու միջոցով,

- ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում հարկման ենթակա ապագա հավանական շահույթների գնահատումը,

- հարկման ենթակա ապագա շահույթների գնահատումները չեն ներառում նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումից առաջացող հարկային նվազեցումները,

- ընկերությունը պետք է հաշվի առնի, արդյոք հարկային օրենսդրությունն արգելում է հարկվող շահույթների այն աղբյուրները, որոնց առումով այն կարող է նվազեցումներ կատարել նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձման մասով: Եթե հարկային օրենսդրությունում չկան այդպիսի արգելքներ, ընկերությունը գնահատում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունը բոլոր այլ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ համատեղ:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2017թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Ղեկավարության գնահատմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

ՀՀՄՍԽ-ն վերջերս թողարկել է *ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»* (2014), ներկայացնելով իր նախագծի ավարտը՝ փոխարինելու *ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտը ներկայացնում է ՀՀՄՍ 39-ի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման ուղեցույցի մեծ փոփոխություններ, և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «սպասվող վարկային կորուստ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը տրամադրում է նաև հեջի հաշվառման կիրառման նոր ուղեցույց:

Բանկի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ.

հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով *ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր»,* և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Բանկի ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»,* նույնպես կիրառվի: Բանկի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է: Շահաբաժիններից եկամուտը ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկման ենթակա չէ:

Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից

Զուտ եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսները, շահաբաժինները:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները

փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:
Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:
Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	**483.94**	**483.75**
ՀՀ դրամ/1 Եվրո	**512.20**	**528.69**

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ

չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են այլ ակտիվներ հոդվածում:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.6 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են՝ ըստ հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է

անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային նպատակներով պահվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից շահույթ կամ վնաս, կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և

- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող Ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է

գնային մոդելների կամ գեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.8 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Բանկը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները,

հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Բանկը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.9 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Իր գործառնական գործունեության ընթացքում Բանկը արժեթղթավորում է ֆինանսական ակտիվներ, հիմնականում վաճառելով այդ ակտիվները հատուկ նշանակության կազմակերպությունների, որոնք արժեթղթեր են թողարկում ներդրողների համար: Կարող է անհրաժեշտություն առաջանալ փոխանցված ակտիվների ամբողջական կամ մասնակի ապաճանաչման: Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ պետք է հղում կատարվի «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման» մասին: Արժեթղթավորված ֆինանսական ակտիվների տոկոսները կարող են պահվել Բանկի կողմից և նախապես դասակարգվել որպես ֆինանսական

արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, իսկ շահույթը կամ վնասը ներկայացվել «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում: Արժեթղթավորումներից եկամուտները կամ ծախսերը հիմնված են ապաճանաչված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի և պահված մասնակցության իրական արժեքի վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքնում գծային

հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-3-5	20-33.33-100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	1-5	20-100

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Համակարգչային ծրագրերի և լիցենզիաների օգտակար ծառայության գնահատված ժամկետը 10 տարի:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.15 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.16 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.17 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.18 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Բանկի առևտրային գործունեությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է

գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 31):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես առևտրային, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Ածանցյալ գործիքներ

Ակտիվ շուկայում չհաշվառվող ֆինանսական ածանցյալ գործիքների իրական արժեքները սահմանվում են գնահատման մեթոդների կիրառմամբ: Ածանցյալ գործիքների գնահատումը ներառվում է մեկ արժութային տոկոսադրույքի սվոփի, բազմարժութային տոկոսադրույքի սվոփի գործարքներում և փոխարժեքի ֆորվարդային պայմանագրերում: Այս գործարքների իրական արժեքը սահմանվում է որպես հաստատուն դեբիտորական պարտքերի և լողացող պարտավորության ներկա արժեքների միջև տարբերություն կամ հակառակը: Եթե գնահատման մեթոդները կիրառվում են իրական արժեքը սահմանելու համար, դրանք հաստատվում կամ պարբերաբար վերլուծության են ենթարկվում որակավորված մասնագետների կողմից՝ անկախ առաջացման պայմաններից: Այնքանով, որքանով գործնականում հնարավոր է, մոդելները կիրառում են միայն դիտարկելի տվյալները, այնուամենայնիվ, այնպիսի ոլորտներում, ինչպիսին պարտքային ռիսկն է (ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ պայմանագրային գործընկերոջ), փոփոխականությունները և կոռելյացիաները պահանջում են Ղեկավարության գնահատականը: Այս ապագա դրամական միջոցներից ցանկացածի գերագնահատումը և թերագնահատումը կարող է պահանջել այս ածանցյալների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ
Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 30):

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ
Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները: Տես՝ ծանոթագրություն 19:

Հարկային օրենսդրություն
ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ ծանոթագրություն 29:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում
Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

6 Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Հաճախորդներին տրված վարկեր	**7,845,483**	8,014,944
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**1,930,002**	1,414,464
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**559,517**	323,557
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**284,615**	297,106
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	**155,891**	189,402
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**10,775,508**	10,239,473
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**2,433,587**	2,134,135
Այլ փոխառություններ	**2,821,350**	2,618,104
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**147,795**	112,516
Թողարկված պարտատոմսեր	**268,931**	206,692
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**53,251**	604,266
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**5,724,914**	5,675,713

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		
Վճարահաշվարկային ծառայություններ	**683,724**	665,534
Պլաստիկ քարտերի սպասարկում	**336,858**	307,977
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	**3,383**	9,688
Այլ	**25,862**	19,074
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	**1,049,827**	1,002,273

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		
Գործառնություններ պլաստիկ քարտերով	**454,748**	393,522
Վճարահաշվարկային ծառայություններ	**71,281**	63,767
Երաշխիքներ	**31,796**	34,167
Ֆոնդային բորսայի ծառայություններ	**1,109**	1,872
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	**558,934**	493,328

8 Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	**696,994**	867,251
Զուտ վնաս ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	**(249,015)**	(85,768)
Ընդամենը զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	**447,979**	781,483

9 Այլ գործառնական եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Այլ գործառնական եկամուտներ		
Տույժեր և տուգանքներ	**452,511**	520,179
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտներ	**47,575**	107,130
Ապահովագրության գծով փոխհատուցում	**-**	267
Այլ ակտիվների օտարումից զուտ օգուտներ	**-**	8,517
Այլ եկամուտներ	**30,693**	26,149
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	**530,779**	662,242
Այլ գործառնական ծախսեր		
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին	**65,002**	56,942
Ինկասացիայի գծով գործառնական ծախսեր	**70,200**	67,631
Պլաստիկ քարտերի գծով գործառնական ծախսեր	**18,599**	10,860
Վճարներ ֆինանսական համակարգի հաշտարարին	**13,336**	13,988
Վարկային բյուրոյի գծով ծախսեր	**13,920**	13,920
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	**4,354**	-
Այլ ծախսեր	**23,593**	4,108
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**209,004**	167,449
Այլ գործառնական զուտ եկամուտ	**321,775**	494,793

10 Արժեզրկումից կորուստներ/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ (ծանոթագրություն 16)	**(11,037)**	(18,052)
Հաճախորդներին տրված վարկեր (ծանոթագրություն 19)	**1,272,884**	1,007,948
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 22)	**3,433**	(29,193)
Ընդամենը կորուստների արժեզրկման ծախս	**1,265,280**	960,703

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	**2,293,546**	2,213,627
Այլ ծախսեր	**19,969**	20,894
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**2,313,515**	2,234,521

12 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Գործառնական վարձակալության գծով ծախս	**369,386**	330,790
Վերանորոգման և պահպանման ծախսեր	**188,054**	182,814
Անվտանգության ծառայություն	**236,167**	213,992
Գովազդ և շուկայավարում	**101,790**	124,871
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	**163,959**	166,333
Կապի և տեղեկատվական ծառայություններ	**92,784**	102,249
Գործուղման ծախսեր	**35,827**	36,282
Գրասենյակային ծախսեր	**53,789**	52,311
Կոմունալ և գրասենյակի սպասարկման ծախսեր	**48,963**	46,088
Մասնագիտական ծառայություններ	**48,452**	51,666
Ներկայացուցչական ծախսեր	**12,322**	13,790
Ապահովագրություն	**16,345**	12,793
Անդամավճարներ	**12,529**	8,334
Այլ	**57,055**	94,998
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	**1,437,422**	1,437,311

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2016	2015
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	**283,144**	287,423
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	**1,793**	31,177
Հետաձգված հարկ	**6,397**	(21,045)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**291,334**	297,555

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2015թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2016	Արդյունավետ դրույքաչափ (%)	2015	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**1,380,809**		1,239,236	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	**276,162**	**20**	247,847	20
Չնվազեցվող ծախսեր	**4,594**	**-**	9,937	1
Բացասական փոխարժեքային տարբերություն	**8,785**	**1**	22,169	2
Նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	**1,793**	**-**	31,177	2
Այլ ճշգրտումներ	**-**	**-**	(13,575)	(1)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**291,334**	**21**	297,555	24

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**50,730**	**-**	**(50,730)**	**-**
Հաճախորդներին տրված վարկեր	**27,504**	**(6,868)**	**-**	**20,636**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**-**	**3,635**	**-**	**3,635**
Այլ պարտավորություններ	**102,934**	**17,911**	**-**	**120,845**
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**181,168**	**14,678**	**(50,730)**	**145,116**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**(7,167)**	**7,167**	**-**	**-**
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	**(12,837)**	**(17,101)**	**-**	**(29,938)**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	**(15,646)**	**(8,195)**	**-**	**(23,841)**
Այլ ակտիվներ	**(3,186)**	**3,186**	**-**	**-**
Պայմանական պարտավորություններ	**(19,496)**	**(6,132)**	**-**	**(25,628)**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**-**	**-**	**(216,655)**	**(216,655)**
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	**(58,332)**	**(21,075)**	**(216,655)**	**(296,062)**
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	**122,836**	**(6,397)**	**(267,385)**	**(150,946)**

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	15,856	-	34,874	50,730
Հաճախորդներին տրված վարկեր	16,865	10,639	-	27,504
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	260	(260)	-	-
Այլ պարտավորություններ	92,594	10,340	-	102,934
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	125,575	20,719	34,874	181,168
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	(7,167)	-	(7,167)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(7,379)	(5,458)	-	(12,837)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(11,829)	(3,817)	-	(15,646)
Այլ ակտիվներ	(8,695)	5,509	-	(3,186)
Պայմանական պարտավորություններ	(30,755)	11,259	-	(19,496)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(58,658)	326	-	(58,332)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	66,917	21,045	34,874	122,836

14 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Տարվա շահույթ	**1,089,475**	941,681
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	**1,337,077**	1,277,501
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը	**0.81**	0.74

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	**9,850,129**	8,916,062
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	**25,869,141**	26,015,976
Նոստրո հաշիվներ այլ բանկերում	**2,898,463**	4,239,399
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**38,617,733**	39,171,437

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների

2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով ամբողջությամբ ՀՀ դրամով: Այդ միջոցները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 10,650,734 հազար դրամ (2015թ.՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,201,341 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի նոստրո հաշիվ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ նոստրո հաշիվ՝ 2,761,989 հազար դրամ), որի մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը:

2016թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները՝ վարկային պարտավորությունների մարում գրավների սեփականացման միջոցով 137,234 հազար դրամ գումարով (2015թ.՝ 665,745 հազար դրամ):

16 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահանջներ բանկերի նկատմամբ		
Վարկեր	**3,880,848**	2,179,189
ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց	**290,000**	320,000
Ավանդներ ոչ ռեզիդենտ բանկերում	**272,117**	278,516
Հակադարձ հետգնման պայմանագրեր	**5,008,629**	-
Այլ մնացորդներ	**36,511**	37,849
Ընդամենը	**9,488,105**	2,815,554
Պահանջներ այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ		
Վարկեր	**1,345,098**	2,113,772
Հակադարձ հետգնման պայմանագրեր	**2,455,331**	1,592,464
Այլ մնացորդներ	**24**	34
	3,800,453	3,706,270
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	**(13,451)**	(24,488)
Ընդամենը	**3,787,002**	3,681,782
Ընդամենը պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**13,275,107**	6,497,336

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օտարերկյա բանկերում տեղաբաշխված վարկերի և ավանդների կազմում ներառված է 65,087 հազար դրամ գումարը (2015թ.՝ 65,061 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է Master Card վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդ, Visa վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված 190,672 հազար դրամ գումարը (2015թ.՝ 190,597 հազար դրամ), ինչպես նաև 16,357 հազար դրամ գումարը՝ ոչ ռեզիդենտ բանկի կողմից երաշխիքի թողարկման գծով (2015թ.՝ 22,857 հազար դրամ):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական պարտատոմսեր	**7,510,133**	**7,463,960**	1,636,615	1,592,464
Ընդամենը հետգնման պայմանագրեր	**7,510,133**	**7,463,960**	1,636,615	1,592,464

Բանկերին տրված վարկեր և փոխատվություններն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով արժեզրկման կորուստների հատկացումների շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
31 դեկտեմբեր 2014	22,396
Տարվա զուտ հակադարձում	(18,052)
Տարվա զուտ վերադարձ	20,144
31 դեկտեմբեր 2015	**24,488**
Տարվա զուտ հակադարձում	**(11,037)**
31 դեկտեմբեր 2016	**13,451**

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ ֆինանսական կազմակերպություն (2015թ.՝նույնպես), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

17 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոփերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների փոխանակման: Բանկի վարկային ռիսկը ներկայացնում է սվոփային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները: Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտարժույթային սվոփ պայմանագրեր	**3,482,819**	**156,234**	**-**
Արտարժուբային ֆորվարդ պայմանագրեր	**992,289**	**6,443**	**847**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ և այլ առևտրային պարտավորություններ		**162,677**	**847**

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտարժույթային սվոփ պայմանագրեր	1,935,000	3,214	-
Այլ սվոփ պայմանագրեր	487,402	-	1,340
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ և այլ առևտրային պարտավորություններ		3,214	1,340

18 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ պետական պարտատոմսեր	**26,081,268**	15,054,602
Ոչ պետական պարտատոմսեր	**764,837**	34,260
Կորպորատիվ բաժնետոմսեր	**55,839**	55,839
Ընդամենը ներդրումներ	**26,901,944**	15,144,701

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի ներկա արժեք:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2016		2015	
	%	ժամկետ	%	ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	**4.74%-16.35%**	**2017-2036**	6.85% - 15.73%	2016-2032

Սկզբնական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը դրամային փոխանցումների և ֆինանսական ծառայությունների ոլորտում: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տրամադրել վկայություն դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ: Այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ քիչ հավանական է, որ տարեվերջի դրությամբ իրական արժեքն էականորեն կտարբերվի հաշվեկշռային ածեքից:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող պետական պարտատոմսերում ներառված են ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր 1,023,313 հազար դրամ իրական արժեքով 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածով: 2015թ. դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում:

19 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	**55,193,382**	55,326,819
Օվերդրաֆտներ և վարկային գծեր	**6,058,277**	4,248,660
Վարկային քարտեր	**6,111,372**	8,053,648
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	**346,342**	-
Ֆինանսական վարձակալություն	**89,051**	80,493
Ֆակտորինգ	**38,055**	-
	67,836,479	67,709,620
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(1,687,532)**	(1,626,493)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**66,148,947**	66,083,127

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ՀՀ պետական պարտատոմսերի իրական արժեքը, որոնք Բանկն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել պարտավորությունների խախտման բացակայության դեպքում, կազմում է 375,267 հազար դրամ:

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբե-րություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Տրանս-պորտ և կապ	Սպասար-կում	Սպառող-ական ոլորտ	Հիփոթեք	Այլ	2016 Ընդամենը
Վարկեր	**8,494,339**	**1,740,661**	**4,580,160**	**20,277,608**	**4,770,471**	**8,068,708**	**11,403,112**	**6,870,220**	**1,631,200**	**67,836,479**
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(582,006)**	**(66,667)**	**(69,361)**	**(283,939)**	**(59,519)**	**(249,858)**	**(167,438)**	**(68,702)**	**(140,042)**	**(1,687,532)**
Զուտ վարկեր	**7,912,333**	**1,673,994**	**4,510,799**	**19,993,669**	**4,710,952**	**7,818,850**	**11,235,674**	**6,801,518**	**1,491,158**	**66,148,947**

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբե-րություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Տրանս-պորտ և կապ	Սպասար-կում	Սպառող-ական ոլորտ	Հիփոթեք	Այլ	2015 Ընդամենը
Վարկեր	4,446,748	1,579,191	3,648,185	25,759,632	5,055,993	5,865,522	12,675,915	5,468,883	3,209,551	67,709,620
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(320,630)	(29,656)	(90,266)	(266,849)	(127,592)	(271,348)	(155,168)	(54,689)	(310,295)	(1,626,493)
Զուտ վարկեր	4,126,118	1,549,535	3,557,919	25,492,783	4,928,401	5,594,174	12,520,747	5,414,194	2,899,256	66,083,127

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Արդյունա-բերություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Տրանս-պորտ և կապ	Սպասար-կում	Սպառող-ական	Հիփոթե-քային	Այլ	2016 Ընդամենը
2016թ. Հունվարի 1 դրությամբ	**320,630**	**29,656**	**90,266**	**266,849**	**127,592**	**271,348**	**155,168**	**54,689**	**310,295**	**1,626,493**
Տարվա ծախս/(հակադարձում)	**305,899**	**179,425**	**115,737**	**313,185**	**(56,346)**	**(5,813)**	**71,915**	**(1,009)**	**349,891**	**1,272,884**
Զուտ (դուրսգրում)/ վերադարձ	**(44,523)**	**(142,414)**	**(136,642)**	**(296,095)**	**(11,727)**	**(15,677)**	**(59,645)**	**15,022**	**(520,144)**	**(1,211,845)**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**582,006**	**66,667**	**69,361**	**283,939**	**59,519**	**249,858**	**167,438**	**68,702**	**140,042**	**1,687,532**
Անհատական արժեզրկում	**301,753**	**-**	**-**	**19,523**	**12,326**	**174,883**	**55,162**	**-**	**50,554**	**614,201**
Խմբային արժեզրկում	**280,253**	**66,667**	**69,361**	**264,416**	**47,193**	**74,975**	**112,276**	**68,702**	**89,488**	**1,073,331**
	582,006	**66,667**	**69,361**	**283,939**	**59,519**	**249,858**	**167,438**	**68,702**	**140,042**	**1,687,532**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	**553,032**	**-**	**-**	**93,203**	**51,149**	**571,180**	**175,549**	**-**	**166,582**	**1,610,695**

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Տրանսպորտ և կապ	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	2015 Ընդամենը
2015թ. Հունվարի 1 դրությամբ	108,971	14,861	27,374	822,587	16,257	80,396	346,274	46,269	157,308	1,620,297
Տարվա ծախս/(հակադարձում)	420,480	65,607	68,357	(33,473)	231,006	81,878	(14,922)	(3,462)	192,477	1,007,948
Զուտ (դուրսգրում)/վերադարձ	(208,821)	(50,812)	(5,465)	(522,265)	(119,671)	109,074	(176,184)	11,882	(39,490)	(1,001,752)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	320,630	29,656	90,266	266,849	127,592	271,348	155,168	54,689	310,295	1,626,493
Անհատական արժեզրկում	187,107	13,010	49,925	9,738	-	224,012	28,963	-	283,286	796,041
Խմբային արժեզրկում	133,523	16,646	40,341	257,111	127,592	47,336	126,205	54,689	27,009	830,452
	320,630	29,656	90,266	266,849	127,592	271,348	155,168	54,689	310,295	1,626,493
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	472,852	131,713	106,501	48,561	-	1,516,398	55,452	-	508,601	2,840,078

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական ձեռնարկություններ և հիմնարկներ	**456,417**	496,972
Մասնավոր ձեռնարկություններ	**39,597,013**	38,336,062
Ֆիզիկական անձիք	**19,935,283**	19,484,684
Անհատ ձեռնարկատերեր	**7,847,766**	9,391,902
	67,836,479	67,709,620
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(1,687,532)**	(1,626,493)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	**66,148,947**	66,083,127

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային քարտեր	**6,089,814**	7,719,411
Հիփոթեքային	**6,870,220**	5,468,883
Ոսկի	**4,510,565**	4,641,977
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	**346,342**	-
Ավտոմեքենաների ձեռքբերման	**5,229**	12,751
Սպառողական վարկեր	**2,113,113**	1,641,662
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	**19,935,283**	19,484,684

Ֆինանսական վարձակալության գծով տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ		
Մինչև 1 տարի	**37,310**	33,083
1-5 տարի	**65,424**	62,306
	102,734	95,389
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ		
Մինչև 1 տարի	**(1,471)**	(2,243)
1-5 տարի	**(12,212)**	(12,653)
	(13,683)	(14,896)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	**89,051**	80,493

Ֆինանսական վարձակալության գծով արժեզրկումից պահուստները ներառված են վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստում և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 7,453 հազար դրամ (2015թ.՝ 1,720 հազար դրամ):

Ֆինանսական վարձակալության գծով ենթադրվող տոկոսադրույքը կազմում է 9%-16% (2015թ.՝10%-16%):

19.1 Հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում՝

Հազար ՀՀ դրամ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Արդյունաբերություն	**4,944**	**-**	**6,713**	**6,810**	**18,467**
Գյուղատնտեսություն	**773**	**-**	**-**	**8,173**	**8,946**
Արևտուր	**29,655**	**31,631**	**41,873**	**39,552**	**142,711**
Սպառողական	**57,354**	**23,087**	**10,971**	**110,932**	**202,344**
Հիփոթեքային	**46,835**	**11,721**	**-**	**1,726**	**60,282**
Սպասարկում	**-**	**-**	**-**	**21,516**	**21,516**
Տրանսպորտ և կապ	**-**	**-**	**-**	**5,894**	**5,894**
Այլ	**-**	**692**	**-**	**-**	**692**
Ընդամենը	**139,561**	**67,131**	**59,557**	**194,603**	**460,852**

Հազար ՀՀ դրամ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Արդյունաբերություն	-	771	4,879	49,912	55,562
Գյուղատնտեսություն	8,761	1,299	2,968	3,652	16,680
Առևտուր	76,707	66,942	8,945	196,258	348,852
Սպառողական	18,535	28,405	3,546	23,023	73,509
Հիփոթեքային	-	-	-	1,922	1,922
Սպասարկում	-	20,533	-	-	20,533
Տրանսպորտ և կապ	864	5,865	-	-	6,729
Այլ	4,352	36,394	-	7,574	48,320
Ընդամենը	109,219	160,209	20,338	282,341	572,107

Չարժեզրկված վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	**2016(%)**	2015(%)
Արդյունաբերություն	**3.52**	3.36
Գյուղատնտեսություն	**3.83**	-
Շինարարություն	**1.04**	-
Տրանսպորտ և կապ	**0.87**	-
Առևտուր	**1.31**	0.86
Սպասարկում	**-**	1.12
Սպառողական	**0.93**	0.76
Հիփոթեքային	**-**	0.10
Այլ	**6**	0.20

Անհատապես արժեզրկվող վարկեր և փոխատվություններ

Մինչև գրավներից առաջացող դրամական հոսքերը հաշվի առնելը հաճախորդներին տրամադրված անհատապես արժեզրկված վարկերը և փոխատվությունները կազմում են 1,610,695 հազար դրամ (2015թ.՝ 2,840,078 հազար դրամ): 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի անհատապես արժեզրկված վարկերի գրավների իրական արժեքը կազմում է 1,780,039 հազար դրամ (2015թ.՝ 3,110,880 հազար դրամ): Գրավները բաղկացած են անշարժ գույքից և շարժական գույքից:

19.2 Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրություններ և դատողություններ

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է ածանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս ղեկավարությունը հիմնվում է արժեզրկված վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- չարժեզրկված վարկերի գծով Բանկը ձևավորում է խմբային պահուստ՝ հաշվի առնելով տնտեսական միջավայրը և շուկայում վնաս կրելու իր փորձը:

- արժեզրկված վարկերի համար գրավադրված գույքի իրացվելի արժեքի որոշման համար կիրառվում է 30% զեղչ գրավի սկզբնապես գնահատված արժեքի գծով, և գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12-ից 48 ամսով:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա:

19.3 Գրավի վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված վարկերի պորտֆելի վերլուծությունը՝ ըստ գրավի տեսակների.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	**46,825,318**	46,989,814
Շարժական գույք	**282,339**	600,256
Շրջնառու միջոցներ	**1,206,771**	386,212
Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխիքներ	**1,001,971**	1,586,335
Թանկարժեք զարդեր,ոսկու ջարդոն	**5,707,812**	5,584,363
Դրամական հոսքեր	**7,483,498**	6,765,260
Դրամական միջոցներ	**519,658**	1,866,865
Արժեթղթեր	**4,269,380**	3,881,518
Այլ	**539,732**	48,997
Ընդամենը վարկեր և փոխատվություններ համախառն	**67,836,479**	67,709,620

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրվում է.

- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ անշարժ, շարժական գույք, պաշարները
- Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեղթղթերը:

Անհատներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Ավտոմեքենայի վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: Ոսկու գրավով վարկերն ապահովված են ոսկու գրավով: Այլ վարկերը հիմնականում ներառում են Բանկի աշխատակիցներին տրամադրված վարկերը, որոնց համար ապահովություն են հանդիսանում աշխատակիցների աշխատավարձերը: Սպառողական վարկերը գրավով ապահովված են ձեռք բերվող ապրանքներով: Վարկային քարտերի ապահովվածություն հանդիսանում են դրամական հոսքերը:

19.4 Վարկային ռիսկին ենթարկվածություն

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու վարկառու (2015թ-ին՝ երեք), որոնց, այդ թվում նրանց փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 7,210,623 հազար դրամ (2015թ-ին՝ 9,043,056 հազար դրամ):

19.5 Գրավադրված ակտիվներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,216,361 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2015թ-ին՝ 4,480,452 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների դիմաց:

19.6 Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 33-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

Ինչպես նշված է 31 ծանոթագրությունում, 31.12.16թ. և 31.12.15թ. դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ պարտքային, արժութային և տոկոսային ռիսկը բացահայտված է 34 ծանոթագրությունում: Կապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 30 ծանոթագրությունում:

20 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Հող և շենքեր	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Վարձակալված գույքի բարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	1,736,702	1,408,039	607,096	122,650	194,394	474,142	4,543,023
Ավելացում	316	290,805	62,873	-	2,581	26,820	383,395
Օտարում	-	(309)	-	-	-	-	(309)
Վերադասակարգում	(4,716)	(190)	-	-	4,906	-	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,732,302**	**1,698,345**	**669,969**	**122,650**	**201,881**	**500,962**	**4,926,109**
Ավելացում	**166,141**	**79,404**	**83,387**	**-**	**43,235**	**2,297**	**374,464**
Օտարում	**-**	**(38,224)**	**(31,810)**	**-**	**-**	**-**	**(70,034)**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,898,443**	**1,739,525**	**721,546**	**122,650**	**245,116**	**503,259**	**5,230,539**
Կուտակված մաշվածություն							
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	244,155	962,379	386,144	45,267	117,411	142,602	1,897,958
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	55,887	218,669	88,442	23,111	26,041	47,595	459,745
Օտարում	-	(309)	-	-	-	-	(309)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**300,042**	**1,180,739**	**474,586**	**68,378**	**143,452**	**190,197**	**2,357,394**
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	**59,719**	**195,677**	**84,402**	**21,507**	**23,329**	**45,088**	**429,722**
Օտարում	**-**	**(38,224)**	**(31,810)**	**-**	**-**	**-**	**(70,034)**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**359,761**	**1,338,192**	**527,178**	**89,885**	**166,781**	**235,285**	**2,717,082**
Մնացորդային արժեք							
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,538,682**	**401,333**	**194,368**	**32,765**	**78,335**	**267,974**	**2,513,457**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,432,260	517,606	195,383	54,272	58,429	310,765	2,568,715

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,145,097 հազար դրամ (2015թ.՝ 910,143 հազար դրամ):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 66,639 հազար դրամ (2015թ.՝ 33,638 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 39,184 հազար դրամ (2015թ.՝ 149,839 հազար դրամ): Տվյալ սարքավորումները չեն ամորտիզացվում և դասակարգված են համաձայն իրենց դասերի:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (2015թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռք բերման գծով 454 հազար դրամ գումարով (2015թ.՝ 5,143 հազար դրամ):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով (2015թ.՝ նույնպես):

21 Բռնագանձված ակտիվներ

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մասնրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Անշարժ գույք	**677,800**	746,796
Այլ	**63**	63
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**677,863**	746,859

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամային փոխանցումների և քլիրինգային համակարգերի շրջանակներում ստացվելիք գումարներ	**687,460**	702,286
Այլ ստացվելիք գումարներ	**61,398**	51,127
	748,858	753,413
Արժեզրկումից պահուստներ	**(24,361)**	(21,425)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**724,497**	731,988
Կանխավճարներ	**94,813**	147,778
Թանկարժեք մետաղներ	**17,312**	456,506
Նյութեր և պաշարներ	**63,743**	62,318
Չօգտագործվող գույք	**-**	32,207
Այլ	**594**	573
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**176,462**	699,382
Ընդամենը այլ ակտիվներ	**900,959**	1,431,370

Այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**Ընդամենը**
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	17,866
Տարվա հակադարձում	(29,193)
Զուտ վերադարձ	32,752
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,425
Տարվա ծախս	**3,433**
Զուտ դուրսգրում	**(497)**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**24,361**

23 Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	**1,207,694**	881,119
Վարկեր առևտրային բանկերից	**1,289,575**	3,214,890
Լորո հաշիվներ	**5,511**	149,474
Ռեպո համաձայնագրեր	**-**	1,000,495
Այլ պարտավորություններ	**16,011**	801
	2,518,791	5,246,779

ՀՀ ԿԲ-ից այլ վարկեր հոդվածը ներառում է տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ստացված վարկեր:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում միջոցներ չունի որևէ բանկ, որի մնացորդը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2015թ.՝ նույնպես):

2016 և 2015թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

24 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
Անհատներ	**13,427,080**	11,883,410
Իրավաբանական անձինք	**18,010,313**	20,912,679
ՀՀ կառավարություն և պետական հիմնարկներ	**3,822,612**	3,433,952
Ժամկետային ավանդներ		
Անհատներ	**22,109,592**	19,461,177
Իրավաբանական անձինք	**5,506,183**	3,645,938
	62,875,780	59,337,156

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում հաճախորդների ավանդների մնացորդները 1,464,747 հազար դրամ (2015թ-ին՝ 1,046,977 հազար դրամ) գումարով հանդիսանում են գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի դիմաց:

Հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կենտրոնացում

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք հաճախորդներ կամ կապակցված հաճախորդների խմբեր, որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2015թ-ին՝ չորս): 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները կազմում են 18,550,412 հազար դրամ (2015թ-ին՝ 23,352,938 հազար դրամ):

Ժամկետային ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2016 և 2015թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

25 Այլ փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից	**39,658,072**	36,539,681
Փոխառություններ ՀՀ կառավարությունից	**1,914,039**	2,597,006
Փոխառություններ տեղական ֆինանսական կազմակերպություններից	**4,156,925**	1,765,786
Ընդամենը այլ փոխառություններ	**45,729,036**	40,902,473

Այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդների և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի վեց պայմանագրային կողմ (2015թ-ին՝ հինգ), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում է 35,916,527 հազար դրամ (2015թ-ին՝ 30,989,901 հազար դրամ):

ՀՀ կառավարությունից ստացված վարկերը ներառում են ՀՀ ԿԲ-ի (որը հանդես է գալիս որպես ՀՀ կառավարության գործակալ) և Բանկի միջև կնքված պայմանագրի շրջանակներում տրամադրված վարկերը, որոնք վերաբերում են Տնտեսության կայունացման վարկային ծրագրին, Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ծրագրին, Փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ծրագրին: Պայմանագրի համաձայն ՀՀ ԿԲ-ն վարկեր է տրամադրում Բանկին՝ Բանկի կողմից հաճախորդներին տրամադրված որակավորված ենթավարկերը վերաֆինանսավորելու համար: Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի այս ենթավարկերի հետ կապված:

Այլ փոխառությունների մի մասն ունեն հաստատուն, մյուսները՝ փոփոխական տոկոսադրույքներ:

2016 և 2015թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

26 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտատոմսեր	**3,812,886**	3,323,481
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	**3,812,886**	3,323,481

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2015թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2015թ.՝ ոչինչ):

Թողարկված պարտատոմսերը ներառում են հետևյալ թողարկումները՝

2016թ. հոկտեմբերի 28-ին Բանկի կողմից թողարկվել է 36 ամիս ժամկետայնությամբ 6.5% եկամտաբերությամբ 1,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 40,000 հատ սովորական պարտատոմս:

2016թ. հուլիսի 22-ին Բանկի կողմից թողարկվել է 24 ամիս ժամկետայնությամբ 13% եկամտաբերությամբ 400,000,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 40,000 հատ սովորական պարտատոմս:

2016թ. հունիսի 17-ին Բանկի կողմից թողարկվել է 36 ամիս ժամկետայնությամբ 7% եկամտաբերությամբ 1,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 40,000 հատ սովորական պարտատոմս:

2015թ. դեկտեմբերի 1-ին Բանկի կողմից թողարկվել է 24 ամիս ժամկետայնությամբ 7% եկամտաբերությամբ 2,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 80,000 հատ սովորական պարտատոմս:

2015թ. հունիսի 26-ին Բանկի կողմից թողարկվել է 36 ամիս ժամկետայնությամբ 7.25% եկամտաբերությամբ 2,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 80,000 հատ սովորական պարտատոմս:

2014թ. հունիսի 11-ին Բանկի կողմից թողարկվել է 48 ամիս ժամկետայնությամբ 8% եկամտաբերությամբ 1,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 40,000 հատ սովորական պարտատոմս:

27 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	**513,458**	434,800
Մատակարարներին վճարվելիք գումարներ	**100,358**	84,057
Այլ ֆինանսական պարտավորություններ	**232,571**	87,574
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**846,387**	606,431
Այլ վճարվելիք հարկեր	**83,307**	88,845
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**27,402**	49,386
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**110,709**	138,231
Ընդամենը այլ պարտավորություններ	**957,096**	744,662

28 Բաժնետիրական կապիտալ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 8,803,655 հազ. դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,760,731 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

Բանկի բաժնետերերն են՝

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	**Բաժնեմասը վճարված կապիտալում, %**	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում, %
«Ֆլեշ» ՍՊԸ	**6,402,640**	**72.73%**	4,103,050	64.24%
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	**1,596,880**	**18.14%**	1,596,880	25.00%
Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Ս.Ա. ՍԻԿԱՎ-ՍԻՖ	**755,315**	**8.58%**	638,755	10.00%
Այլ բաժնետերեր	**48,820**	**0.55%**	48,820	0.76%
	8,803,655	**100%**	6,387,505	100%

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2016թ-ին Բանկը թողարկել և տեղաբաշխել է 483,230 հատ լրացուցիչ բաժնետոմս 17,590 ՀՀ դրամ արժեքով, որի արդյունքում բաժնետիրական կապիտալը ավելացել է 2,416,150 հազար դրամ գումարով և ձևավորվել է էմիսիոն եկամուտ 6,083,865 հազար ՀՀ դրամի չափով:

Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության

պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

29 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	**3,073,883**	1,442,972
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	**4,081,670**	4,001,245
Չօգտագործված օվերդրաֆտներ	**669,290**	26,713
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	**154,564**	212,515
Ֆակտորինգային պայմանագրեր	**109,272**	100,000
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**8,088,679**	5,783,445

Վարկային պարտավորությունների, երաշխիքների և այլ ֆինանսական միջոցների պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարում:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – բանկը որպես վարձակալող

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր փոխադրամիջոցներ, շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	**377,459**	349,520
1-5 տարի	**759,154**	672,150
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	**1,136,613**	1,021,670

Կապիտալ բնույթի պարտավորություններ

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 20 ծանոթագրությունում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: 2016-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկին սեփականության իրավունքով պատկանող շենքերը և փոխադրամիջոցները ապահովագրված են: Բանկն ունի բանկային ռիսկերի համալիր ապահովագրություն էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար, ինչպես նաև ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն:

Սկսած 2005թ. Բանկը հանդիսանում է ավանդների պարտադիր ապահովագրական համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 10,000 հազար դրամ ընդհանուր գումարով (մինչև 5,000 հազար դրամ արտարժույթով ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետ կանչման դեպքում:

30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՍՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող է համարվում ՀՀ գործարար Բարսեղ Բեգլարյանը, ով հանդիսանում է Բանկի բաժնետեր «Ֆլեշ» ՍՊԸ-ի սեփականատերը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր**	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**-**	**430,984**	-	161,132
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	**-**	**3,427,527**	-	1,732,169
Տարվա ընթացքում մարված վարկեր	**-**	**(3,472,137)**	-	(1,462,317)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	**-**	**386,374**	-	430,984
Արժեզրկումից պահուստ	**-**	**(4,507)**	-	(11,399)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դ ությամբ	**-**	**381,867**	-	419,585
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**2,081,326**	-	4,342,988	-
Տարվա ընթացքում ստացված	**439,134**	-	882,998	-
Տարվա ընթացքում վճարված	**(1,695,923)**	**-**	(3,144,660)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**824,537**	**-**	2,081,326	**-**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**9,487,669**	**6,322,342**	6,410,824	7,124,630
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	**113,681,275**	**39,589,886**	145,041,648	29,239,269
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	**(120,638,081)**	**(37,910,368)**	(141,964,803)	(30,041,557)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,530,863**	**8,001,860**	9,487,669	6,322,342
Տրված երաշխիքների մնացորդը	**-**	**-**	28,785	-

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	**-**	**60,190**	-	39,164
Վարկերի կորուստի գծով (ծախս)/վերադարձ	**-**	**6,892**	-	(8,982)
Միջնորդավճարների գծով եկամուտ	**2,567**	**853**	2,327	6,890
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ/(վնաս)	**(23,310)**	**5,544**	48,744	3,014
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի վերագնահատումից	**85,766**	**(8,869)**	(55,020)	(5,018)
Տոկոսային ծախսեր միջազգային կազմակերպություններից ներգրաված միջոցների դիմաց	**(166,500)**	**-**	(361,224)	-
Տոկոսային ծախսեր հաճախորդներ ավանդների գծով	**(113,039)**	**(207,228)**	(47,961)	(300,912)
Միջնորդավճարների գծով ծախսեր	**(21,440)**	**-**	(34,397)	-
Վարձակալության գծով ծախսեր	**(17,400)**	**(55,627)**	(17,400)	(55,627)

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**2016**	**2015**
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	**277,753**	259,775
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**277,753**	259,775

Բանկի հետ կապված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 12 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 6%-17% (2015թ.՝ 6%-18%):

31 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը:

Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

31.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	**38,617,733**	-	**38,617,733**	**38,617,733**
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	-	**13,275,107**	-	**13,275,107**	**13,275,107**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	**66,116,539**	-	**66,116,539**	**66,148,947**
Այլ ակտիվներ	-	**724,497**	-	**724,497**	**724,497**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	**2,518,791**	-	**2,518,791**	**2,518,791**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	**62,875,780**	-	**62,875,780**	**62,875,780**
Այլ փոխառություններ	-	**45,729,036**	-	**45,729,036**	**45,729,036**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	**3,812,886**	-	**3,812,886**	**3,812,886**
Այլ պարտավորություններ	-	**846,387**	-	**846,387**	**846,387**

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	**39,171,437**	-	**39,171,437**	**39,171,437**
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	-	**6,497,336**	-	**6,497,336**	**6,497,336**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	**66,058,101**	-	**66,058,101**	**66,083,127**
Այլ ակտիվներ	-	**731,988**	-	**731,988**	**731,988**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	5,231,994	-	5,231,994	5,246,779
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	59,337,156	-	59,337,156	59,337,156
Այլ փոխառություններ	-	40,902,473	-	40,902,473	40,902,473
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	3,323,481	-	3,323,481	3,323,481
Այլ պարտավորություններ	-	606,431	-	606,431	606,431

Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է

տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ
Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 6% մինչև 24% տարեկան (2015թ. 6% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ բանկերի, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ
Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Այլ փոխառություններ
Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով ավանդների և փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

31.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ				2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	26,846,105	-	26,846,105
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	162,677	-	162,677
Ընդամենը	-	27,008,782	-	27,008,782
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	847	-	847
Ընդամենը	-	847	-	847
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	-	27,007,935	-	27,007,935

Հազար ՀՀ դրամ				2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	15,088,862	-	15,088,862
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	3,214	-	3,214
Ընդամենը	-	15,092,076	-	15,092,076
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	1,340	-	1,340
Ընդամենը	-	1,340	-	1,340
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	-	15,090,736	-	15,090,736

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը: Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային սվոփ պայմանագրերից:

Չգնանշվող ՀՀ և այլ երկրների բաժնեմասային ներդրումներ

Բանկի ներդրումների իրական արժեքը չգնանշվող ՀՀ բաժնեմասային արժեթղթերում չի կարող արժանահավատորեն գնահատվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից: Սեփական կապիտալի այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ծան. 18-ը:

32 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ — 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ճանաչված ֆինանսական ակտիվների/պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 16)	**7,463,960**	**-**	**7,463,960**	**(7,463,960)**	**-**	**-**

Հազար ՀՀ դրամ — 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ճանաչված ֆինանսական ակտիվների/պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 16)	1,592,464	-	1,592,464	(1,592,464)	-	-

33 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 34.3-ում:

Հազար ՀՀ դրամ — 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,617,733	-	-	***38,617,733***	-	-	**-**	**38,617,733**
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12,108,488	687,818	297,498	***13,093,804***	181,303	-	***181,303***	**13,275,107**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	162,677	-	-	***162,677***	-	-	**-**	**162,677**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	684	3,611,056	5,686,919	***9,298,659***	16,662,060	941,225	***17,603,285***	**26,901,944**
Հաճախորդներին տրված վարկեր	3,266,878	6,084,191	17,096,417	***26,447,486***	30,082,992	9,618,469	***39,701,461***	**66,148,947**
Այլ ակտիվներ	724,497	-	-	***724,497***	-	-	**-**	**724,497**
Ընդամենը ակտիվներ	**54,880,957**	**10,383,065**	**23,080,834**	***88,344,856***	**46,926,355**	**10,559,694**	***57,486,049***	**145,830,905**

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար*	Ընդամենը
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	282,732	976,169	322,341	***1,581,242***	937,549	-	***937,549***	**2,518,791**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	36,734,462	12,112,013	13,191,738	***62,038,213***	822,159	15,408	***837,567***	**62,875,780**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	847	-	-	***847***	-	-	**-**	**847**
Այլ փոխառություններ	495,936	3,023,514	6,529,019	***10,048,469***	31,698,330	3,982,237	***35,680,567***	**45,729,036**
Թողարկված պարտքային արժեթղթեր	15,467	9,839	967,880	***993,186***	2,819,700	-	***2,819,700***	**3,812,886**
Այլ պարտավորություններ	846,387	-	-	***846,387***	-	-	**-**	**846,387**
Ընդամենը պարտավորություններ	**38,375,831**	**16,121,535**	**21,010,978**	***75,508,344***	**36,277,738**	**3,997,645**	***40,275,383***	**115,783,727**
Զուտ Դիրք	**16,505,126**	**(5,738,470)**	**2,069,856**	**12,836,512**	**10,648,617**	**6,562,049**	**17,210,666**	**30,047,178**
Կուտակված ճեղքվածք	**16,505,126**	**10,766,656**	**12,836,512**		**23,485,129**	**30,047,178**		

Հազար ՀՀ դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	39,171,437	-	-	*39,171,437*	-	-	-	39,171,437
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,112,532	2,138,121	357,793	*5,608,446*	290,374	598,516	*888,890*	6,497,336
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	3,214	-	-	*3,214*	-	-	-	3,214
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	384,275	6,524,371	*6,908,646*	5,632,858	2,603,197	*8,236,055*	15,144,701
Հաճախորդներին տրված վարկեր	4,677,947	7,517,099	15,947,563	*28,142,609*	30,853,464	7,087,054	*37,940,518*	66,083,127
Այլ ակտիվներ	731,988	-	-	*731,988*	-	-	-	731,988
Ընդամենը ակտիվներ	47,697,118	10,039,495	22,829,727	*80,566,340*	36,776,696	10,288,767	*47,065,463*	127,631,803
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,442,929	1,199,813	972,149	*4,614,891*	631,888	-	*631,888*	5,246,779
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	38,248,070	3,155,451	17,086,181	*58,489,702*	836,373	11,081	*847,454*	59,337,156
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,340	-	-	*1,340*	-	-	-	1,340
Այլ փոխառություններ	308,408	4,862,578	11,893,453	*17,064,439*	23,318,688	519,346	*23,838,034*	40,902,473
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,400	10,581	883,750	*904,731*	2,418,750	-	*2,418,750*	3,323,481
Այլ պարտավորություններ	606,431	-	-	*606,431*	-	-	-	606,431
Ընդամենը պարտավորություններ	41,617,578	9,228,423	30,835,533	*81,681,534*	27,205,699	530,427	*27,736,126*	109,417,660
Զուտ Դիրք	6,079,540	811,072	(8,005,806)	(1,115,194)	9,570,997	9,758,340	19,329,337	18,214,143
Կուտակված ճեղքվածք	6,079,540	6,890,612	(1,115,194)		8,455,803	18,214,143		

34 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության, շուկայական և գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Բանկի կառուցվածքային տարբեր մակարդակներում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի վարչություն

Բանկի վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Խորհրդին կից աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման կարևոր խնդիրների համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունված համապատասխան որոշումների կատարումը:

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողով

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարման, բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար, իր լիազորությունների շրջանակներում որոշումներ է կայացնում վերոհիշյալ ռիսկերի գծով:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեները իրենց իրավասությունների շրջանակներում որոշումներ են ընդունում պարտքային ռիսկի ընդունման վերաբերյալ, պատասխանատվություն են կրում պարտքային ռիսկի զսպմանն ուղղված սահմանաչափերի պահպանման համար:

Ռիսկերի կառավարման վարչություն

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բանկային ռիսկերի բացահայտման, գնահատման, վերլուծության, մոնիտորինգի և հսկողության համար: Այն պատասխանատու է նաև ռիսկերի գնահատման համապատասխան հաշվետվությունների բազայի ստեղծման համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Խորհրդին կից Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Բանկի վարչությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ վարկային ռիսկի համապարփակ չափի, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, արտարժութային ռիսկի, իրացվելիության ցուցանիշների և սթրես թեստերի վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացումների: Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը և վարկային ռիսկերի գնահատման հանձնաժողովը ամսեկան կտրվածքով ստանում են ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Բանկի բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Բանկի բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև նիստ ղեկավարության և Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկը ներառյալ արժեքի ներդրումները, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

Ռիսկի նվազեցում
Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, պարտքային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ
Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

34.1 Պարտքային ռիսկ
Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

34.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ
Աշխարհագրական սեգմենտներ
Բանկի ակտիվների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

34.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն
Բանկը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Մեկ վարկառուի գծով պարտքային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է Բանկի ղեկավարության կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար:

Վարկային պորտֆելի պարտքային ռիսկի կենտրոնացվածության աստիճանը ներկայացված է ծանոթագրություն 19.4-ում:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ
Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ:

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության ներկայացված է ծանոթագրություն 19.3- ում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ
Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ Բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Բանկը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր պարտքային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

34.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

34.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների գծով կիրառվող միջին արդյունավետ տոկոսադրույքները 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2016 Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք, %			2015 Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**16.19**	**2.93**	**-**	16.15	6.89	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**9.29**	**6.03**	**-**	10.33	6.0	-
Հաճախորդներին տրված վարկեր	**14.57**	**9.82**	**7.09**	15.45	10.07	1.56
Տոկոսակիր պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**7.84**	**2.01**	**0.39**	8.25	2.95	0.5
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	**0.1**	**0.1**	-	0.01	0.01	0.01
- Ժամկետային ավանդներ	**10.95**	**6.03**	-	10.73	6.92	-
Այլ փոխառություններ	**8.15**	**5.71**	-	10.02	5.13	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	**13.00**	**7.14**	-	13.00	7.5	-

Տոկոսադրույքի փոփոխության զգայունության վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով

ակտիվները, 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի իրացման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ							2016
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայնություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	**+3**	**-**	**(76,216)**	**(8)**	**(789,578)**	**(137,574)**	**(1,003,376)**
ԱՄՆ դոլար	**+2**	**(286,063)**	**-**	**-**	**-**	**-**	**(286,063)**
ՀՀ դրամ	**(3)**	**-**	**77,809**	**9**	**870,848**	**183,092**	**1,131,758**
ԱՄՆ դոլար	**(2)**	**286,063**	**-**	**-**	**-**	**-**	**286,063**

Հազար ՀՀ դրամ							2015
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայնություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+3	-	(50,919)	-	(146,218)	(290,211)	(487,348)
ՀՀ դրամ	+2	(41,137)	-	-	-	-	(41,137)
ԱՄՆ դոլար	+2	(517,904)	-	-	(180,548)	-	(698,452)
ՀՀ դրամ	(3)	-	63,374	-	218,822	579,937	862,133
ՀՀ դրամ	(2)	41,137	-	-	-	-	41,137
ԱՄՆ դոլար	(2)	517,904	-	-	131,848	-	649,752

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2016		2015	
Արտարժույթ	**Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս**	**Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը**	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	**+5**	**(62,370)**	+5	(46,770)
Եվրո	**+5**	**18,309**	+5	(401)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**Այլ արտարժույթ**	**Ընդամենը**
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**16,419,443**	**16,889,643**	**4,589,425**	**719,222**	**38,617,733**
Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**7,809,241**	**5,465,866**	**-**	**-**	**13,275,107**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**22,658,732**	**4,243,212**	**-**	**-**	**26,901,944**
Հաճախորդներին տրված վարկեր	**20,885,505**	**43,625,813**	**1,637,629**	**-**	**66,148,947**
Այլ ֆինանսական ակտիվներ	**211,508**	**187,948**	**32,624**	**292,417**	**724,497**
Ընդամենը	**67,984,429**	**70,412,482**	**6,259,678**	**1,011,639**	**145,668,228**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**1,207,785**	**968,938**	**342,068**	**-**	**2,518,791**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**27,344,856**	**32,839,411**	**2,306,818**	**384,695**	**62,875,780**
Այլ փոխառություններ	**7,305,094**	**38,423,942**	**-**	**-**	**45,729,036**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**409,966**	**3,402,920**	**-**	**-**	**3,812,886**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**733,742**	**109,233**	**3,405**	**7**	**846,387**
Ընդամենը պարտավորություններ	**37,001,443**	**75,744,444**	**2,652,291**	**384,702**	**115,782,880**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	**-**	**4,084,551**	**(3,241,202)**	**(681,519)**	**161,830**
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**30,982,986**	**(1,247,411)**	**366,185**	**(54,582)**	**30,047,178**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,819,803**	**4,490,101**	**770,107**	**8,668**	**8,088,679**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	53,737,146	71,007,890	2,217,056	666,497	127,628,589
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	33,089,152	73,389,198	2,225,070	712,900	109,416,320
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(1,444,028)	1,445,902	-	-	1,874
Զուտ դիրք 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,203,966	(935,406)	(8,014)	(46,403)	18,214,143
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2015 թ. դեկտեմբերի 31-ին	1,872,974	3,192,468	711,027	6,976	5,783,445

34.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար (տես՝ ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

	Աուդիտ չարված	
	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ն21- Ընդհանուր իրացվելիություն(Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	**47.91%**	41.45%
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	**209.89%**	166.51%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 33-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը.

				2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**283,147**	**980,030**	**405,672**	**1,062,847**	**2,731,696**	**2,518,791**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**36,795,679**	**12,127,477**	**13,388,185**	**848,790**	**63,160,131**	**62,875,780**
Այլ փոխառություններ	**526,245**	**3,638,916**	**7,984,365**	**41,063,950**	**53,213,476**	**45,729,036**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**15,467**	**9,839**	**1,029,909**	**3,234,355**	**4,289,570**	**3,812,886**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**846,387**	**-**	**-**	**-**	**846,387**	**846,387**
Ընդամենը պարտավորություններ	**38,466,925**	**16,756,262**	**22,808,131**	**46,209,942**	**124,241,260**	**115,782,880**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	**1,876,510**	**1,613,191**	**-**	**-**	**3,489,701**	**3,485,533**
Արտահոսք	**1,792,700**	**1,536,600**	**-**	**-**	**3,329,300**	**3,329,300**
Արտարժույթի ֆորվարդ պայմանագրեր						
Ներհոսք	**992,289**	**-**	**-**	**-**	**992,289**	**992,289**
Արտահոսք	**986,692**	**-**	**-**	**-**	**986,692**	**986,692**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	**7,983,320**	**89,157**	**6,523**	**9,679**	**8,088,679**	**8,088,679**

				2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,443,634	1,202,395	1,032,002	728,414	5,406,445	5,246,779
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	38,851,952	3,205,271	17,355,947	860,834	60,274,004	59,337,156
Այլ փոխառություններ	322,687	5,148,382	13,198,697	26,421,360	45,091,126	40,902,473
Թողարկված պարտքային արժեթղթեր	13,249	54,860	1,008,861	2,693,613	3,770,583	3,323,481
Այլ ֆինանսական պարտավորություններ	606,431	-	-	-	606,431	606,431
Ընդամենը պարտավորություններ	42,237,953	9,610,908	32,595,507	30,704,221	115,148,589	109,416,320
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	2,424,022	-	-	-	2,429,022	2,425,543
Արտահոսք	2,423,769	-	-	-	2,423,769	2,423,769
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	5,657,169	63,932	62,344	-	5,783,445	5,783,445

34.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման, հաստատման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման ծառայությունը, տնօրինությունը, Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են խորհրդին:

35 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով 1988թ. Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը

պահպանում է ամուր վարկային և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, գլխավոր պահուստը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2016 և 2015թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	**31,263,199**	21,547,287
Լրացուցիչ կապիտալ	**1,102,060**	(315,027)
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**32,365,259**	21,232,260
Ռիսկով կշռված ակտիվներ	**121,309,066**	108,493,919
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**26.68%**	19.57%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2009թ. հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 5,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափ 30,000,000 հազար ՀՀ դրամ:

36 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 *«Գործառնական սեգմենտներ»* ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

37 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Միացման պայմանագրի համաձայն Բանկը 2017թ. ձեռք է բերել վերահսկողություն «Հայկական զարգացման Բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ:

2017թ-ին ֆինանսական հաշվետվությունների կազմման ամսաթվով Բանկի կողմից ձեռք բերվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գնահատումը և ձեռնարկատիրական գործունեության միավորման հաշվառումը դեռևս ընթացքում էր, և համապատասխանաբար, ձեռքբերվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները 2017թ. փետրվարի 20-ի դրությամբ Բանկի կողմից որոշվել էին նախնականորեն:

Ձեռքբերվող որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի նախնական տեսքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Իրական արժեք ձեռքբերման ժամանակ
Ակտիվներ	**62,831,520**
Պարտավորություններ	**52,105,872**
Որոշելի զուտ պարտավորություններ	**10,725,648**
Զուտ պարտավորություններ՝ ստանձնած ձեռքբերման ժամանակ	**15,129,999**

Grant Thornton

Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2015թ.

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին.

Մեր կողմից իրականացվել է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ «Բանկ») կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը

կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Բանկի ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հանգամանքների լուսաբանում

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 35-ի վրա: Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Բանկի գործունեության անընդհատության սկզբունքից ելնելով: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2014թ. որոշում է կայացրել բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո 30,000,000 հազար ՀՀ դրամ: Բանկի բաժնետերերի և ղեկավարության հավաստիացմամբ նշված պահանջի իրականացումը Բանկը կապահովվի կանոնադրական կապիտալի համալրման միջոցով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն-բաժնետեր

Զարուհի Ղարիբյան
Աուդիտոր

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
09 մարտ, 2016թ.
ք. Երևան

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ»
00040569

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	**10,239,473**	11,043,246
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	**(5,675,713)**	(4,828,602)
Զուտ տոկոսային եկամուտներ		**4,563,760**	6,214,644
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	**1,002,273**	987,384
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	**(493,328)**	(390,914)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**508,945**	596,470
Զուտ օգուտ /(վնաս)շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		**(40,262)**	16,011
Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	8	**781,483**	918,731
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից		**22,797**	187,068
Այլ գործառնական զուտ եկամուտ	9	**494,793**	377,041
Արժեզրկումից կորուստներ	10	**(960,703)**	(740,436)
Անձնակազմի գծով ծախսեր	11	**(2,234,521)**	(2,190,857)
Մաշվածություն և ամորտիզացիա	20	**(459,745)**	(440,449)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	12	**(1,437,311)**	(1,397,644)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**1,239,236**	3,540,579
Շահութահարկի գծով ծախս	13	**(297,555)**	(697,147)
Տարվա շահույթ		**941,681**	2,843,432
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)		**25,668**	(295,000)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ		**(200,037)**	(342,193)
Վերահաշվարկվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		**34,874**	127,439
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում		**(139,495)**	(509,754)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**(139,495)**	(509,754)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**802,186**	2,333,678
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ	14	**0.74**	2.2

7-ից 65 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	**39,171,437**	44,757,540
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	**6,497,336**	7,276,797
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17	**3,214**	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր			
- Բանկի կողմից պահվող	18	**14,121,388**	15,424,281
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	18	**1,023,313**	-
Հաճախորդներին տրված վարկեր	19	**66,083,127**	65,986,845
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	**2,568,715**	2,645,065
Կանխավճարներ շահութահարկի գծով		**257,877**	-
Հետաձգված հարկային ակտիվ	13	**122,836**	66,917
Բռնագանձված ակտիվներ	21	**746,859**	297,493
Այլ ակտիվներ	22	**1,431,370**	1,908,295
Ընդամենը՝ ակտիվներ		**132,027,472**	138,363,233
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	23	**5,246,779**	2,845,621
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	24	**59,337,156**	65,810,353
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	17	**1,340**	-
Այլ փոխառություններ	25	**40,902,473**	45,291,959
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	**3,323,481**	1,847,950
Ընթացիկ հարկային պարտավորություն		-	132,765
Այլ պարտավորություններ	27	**744,662**	765,190
Ընդամենը՝ պարտավորություններ		**109,555,891**	116,693,838
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	28	**6,387,505**	6,387,505
Էմիսիոն եկամուտ		**1,947,880**	1,947,880
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		**(202,918)**	(63,423)
Կուտակված շահույթ		**14,339,114**	13,397,433
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**22,471,581**	21,669,395
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**132,027,472**	138,363,233

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 3-ից 65 էջերում, ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2016թ. մարտի 9-ին:

Աշոտ Օսիպյան
Վարչության նախագահ

Տիգրան Գալստյան
Գլխավոր հաշվապահ

7-ից 65 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա-հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ	6,387,505	1,947,880	446,331	10,851,001	19,632,717
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	(297,000)	(297,000)
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	-	(297,000)	(297,000)
Տարվա շահույթ	-	-	-	2,843,432	2,843,432
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	-	-	(295,000)	-	(295,000)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	(342,193)	-	(342,193)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	127,439	-	127,439
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(509,754)	2,843,432	2,333,678
Հաշվեկշիռը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,387,505	1,947,880	(63,423)	13,397,433	21,669,395
Տարվա շահույթ	**-**	**-**	**-**	**941,681**	**941,681**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	**-**	**-**	**25,668**	**-**	**25,668**
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	**-**	**-**	**(200,037)**	**-**	**(200,037)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	**-**	**-**	**34,874**	**-**	**34,874**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**(139,495)**	**941,681**	**802,186**
Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,387,505**	**1,947,880**	**(202,918)**	**14,339,114**	**22,471,581**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ նախքան հարկումը	**1,239,236**	3,540,579
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	**459,745**	440,449
Արժեզրկումից կորուստներ	**960,703**	740,436
Փոփոխություն ստացվելիք տոկոսներում	**(34,671)**	(48,875)
Փոփոխություն վճարվելիք տոկոսներում	**(45,816)**	44,897
Զուտ վնաս ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	**85,768**	921
Զուտ վնաս շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	**25,079**	-
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտներ	**-**	(12,675)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**2,690,044**	4,705,732
Փոփոխություններ ածանցյալ գործիքներում	**(26,953)**	-
Փոփոխություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներում	**752,443**	(2,314,653)
Փոփոխություններ հաճախորդներին տրված վարկերում	**(874,291)**	(246,381)
Փոփոխություններ այլ ակտիվներում	**671,801**	(589,082)
Փոփոխություններ բանկերի նկատմամբ պարտավորություններում	**141,914**	(1,231)
Փոփոխություններ հաճախորդների ընթացիկ հաշիվներում և ավանդներում	**(6,503,701)**	(5,885,012)
Փոփոխություններ այլ պարտավորություններում	**(74,079)**	135,035
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**(3,222,822)**	(4,195,592)
Վճարված շահութահարկ	**(709,242)**	(714,754)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(3,932,064)**	(4,910,346)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (ձեռքբերում)/օտարում	**168,805**	(2,626,622)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	**(383,395)**	(461,112)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	**-**	22,722
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(214,590)**	(3,065,012)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	**-**	(297,000)
Պարտքային արժեթղթերի թողարկում	**1,440,769**	411,666
Փոխառությունների ստացում/(մարում) ֆինանսական կազմակերպություններից	**(2,861,690)**	6,242,248
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(1,420,921)**	6,356,914
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	**(5,567,575)**	(1,618,444)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	**44,757,540**	43,926,729
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**(18,528)**	2,449,255
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (ծանոթ.15)	**39,171,437**	44,757,540
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	**10,204,802**	10,994,371
Վճարված տոկոսներ	**(5,721,529)**	(4,783,705)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը հանդիսանում է 1991թ-ին հիմնված «Հայկապ Բանկ» ՓԲԸ իրավահաջորդը: Բանկը գրանցվել է 20 սեպտեմբերի 1991թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N4 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 51 մասնաճյուղերը գտնվում են ՀՀ տարբեր մարզերում և ԼՂՀ-ում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Պուշկինի 19:

Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 684 մարդ:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Բանկի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Բանկի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2015թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2015թ-ին ՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Սահմանված հատուցումների պլաններ՝ աշխատակիցների վճարներ (ՀՀՄՍ 19 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 2010-2012թթ. տարեկան բարեփոխումներ
- ՖՀՄՍ 2011-2013թթ. տարեկան բարեփոխումներ

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

ՀՀՄՍԽ-ն վերջերս թողարկել է *ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»* (2014), ներկայացնելով իր նախագծի ավարտը՝ փոխարինելու *ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտը ներկայացնում է ՀՀՄՍ 39-ի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման ուղեցույցի մեծ փոփոխություններ, և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «սպասվող վարկային կորուստ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը տրամադրում է նաև հեջի հաշվառման կիրառման նոր ուղեցույց:
Բանկի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Հետևյալ նոր և փոփոխված ստանդարտները, բարեփոխումները հավանաբար նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՍ 14 հաշիվների կանոնավոր հետաձգում*
- *Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում (ՀՀՄՍ 38 և ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *2012-2014թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով*
- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է: Շահաբաժիններից եկամուտը ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկման ենթակա չէ:

Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից

Զուտ եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսները, շահաբաժինները:

4.2 Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ

դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	**483.75**	474.97
ՀՀ դրամ/1 Եվրո	**528.69**	577.47

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ

կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են այլ ակտիվներ հոդվածում:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.6 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած

ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են՝ ըստ հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային նպատակներով պահվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից շահույթ կամ վնաս, կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի

կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող Ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.8 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների

խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Բանկը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ

գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Բանկը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.9 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,

- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Իր գործառնական գործունեության ընթացքում Բանկը արժեթղթավորում է ֆինանսական ակտիվներ, հիմնականում վաճառելով այդ ակտիվները հատուկ նշանակության կազմակերպությունների, որոնք արժեթղթեր են թողարկում ներդրողների համար: Կարող է անհրաժեշտություն առաջանալ փոխանցված ակտիվների ամբողջական կամ մասնակի ապաճանաչման: Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ պետք է հղում կատարվի «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման» մասին: Արժեթղթավորված ֆինանսական ակտիվների տոկոսները կարող են պահվել Բանկի կողմից և նախապես դասակարգվել որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, իսկ շահույթը կամ վնասը ներկայացվել «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում: Արժեթղթավորումներից եկամուտները կամ ծախսերը հիմնված են ապաճանաչված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի և պահված մասնակցության իրական արժեքի վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքնում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-3-5	20-33.33-100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	1-5	20-100

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Համակարգչային ծրագրերի և լիցենզիաների օգտակար ծառայության գնահատված ժամկետը 10 տարի:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.15 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.16 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին

կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.17 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.18 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հարկման ենթակա չեն:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտները ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Բանկի առևտրային գործունեությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 31):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես առևտրային, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Ածանցյալ գործիքներ

Ակտիվ շուկայում չհաշվառվող ֆինանսական ածանցյալ գործիքների իրական արժեքները սահմանվում են գնահատման մեթոդների կիրառմամբ: Ածանցյալ գործիքների

գնահատումը ներառվում է մեկ արժութային տոկոսադրույքի սվոփի, բազմարժութային տոկոսադրույքի սվոփի գործարքներում և փոխարժեքի ֆորվարդային պայմանագրերում: Այս գործարքների իրական արժեքը սահմանվում է որպես հաստատուն դեբիտորական պարտքերի և լողացող պարտավորության ներկա արժեքների միջև տարբերություն կամ հակառակը: Եթե գնահատման մեթոդները կիրառվում են իրական արժեքը սահմանելու համար, դրանք հաստատվում կամ պարբերաբար վերլուծության են ենթարկվում որակավորված մասնագետների կողմից՝ անկախ առաջացման պայմաններից: Այնքանով, որքանով գործնականում հնարավոր է, մոդելները կիրառում են միայն դիտարկելի տվյալները, այնուամենայնիվ, այնպիսի ոլորտներում, ինչպիսին պարտքային ռիսկն է (ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ պայմանագրային գործընկերոջ), փոփոխականությունները և կոռելյացիաները պահանջում են Ղեկավարության գնահատականը: Այս ապագա դրամական միջոցներից ցանկացածի գերագնահատումը և թերագնահատումը կարող է պահանջել այս ածանցյալների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 30):

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները: Տես՝ ծանոթագրություն 19:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ ծանոթագրություն 29:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է

երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

6 Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2015**	2014
Հաճախորդներին տրված վարկեր	**8,014,944**	7,836,770
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**1,414,464**	1,431,796
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	**323,557**	478,094
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**297,106**	1,182,514
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	**189,402**	114,072
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**10,239,473**	11,043,246
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**2,134,135**	2,338,627
Այլ փոխառություններ	**2,618,104**	2,198,675
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**112,516**	126,971
Թողարկված պարտատոմսեր	**206,692**	148,192
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**604,266**	16,137
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**5,675,713**	4,828,602

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2015**	2014
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		
Վճարահաշվարկային ծառայություններ	**665,534**	629,960
Պլաստիկ քարտերի սպասարկում	**307,977**	301,563
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	**9,688**	20,757
Այլ	**19,074**	35,104
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	**1,002,273**	987,384

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		
Գործառնություններ պլաստիկ քարտերով	**393,522**	288,147
Վճարահաշվարկային ծառայություններ	**63,767**	63,288
Երաշխիքներ	**34,167**	26,656
Ֆոնդային բորսայի ծառայություններ	**1,872**	12,823
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	**493,328**	390,914

8 Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	**867,251**	919,652
Զուտ վնաս ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	**(85,768)**	(921)
Ընդամենը զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	**781,483**	918,731

9 Այլ գործառնական եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Այլ գործառնական եկամուտներ		
Տույժեր և տուգանքներ	**520,179**	317,763
Հիմնական միջոցների վաճառքից զուտ եկամուտ	**-**	12,675
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտներ	**107,130**	151,635
Ապահովագրության գծով փոխհատուցում	**267**	469
Այլ ակտիվների օտարումից զուտ օգուտներ	**8,517**	41,573
Այլ եկամուտներ	**26,149**	41,807
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	**662,242**	565,922
Այլ գործառնական ծախսեր		
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին	**56,942**	64,486
Ինկասացիայի գծով գործառնական ծախսեր	**67,631**	76,370
Պլաստիկ քարտերի գծով գործառնական ծախսեր	**10,860**	13,201
Վճարներ ֆինանսական համակարգի հաշտարարին	**13,988**	12,616
Այլ ծախսեր	**18,028**	22,208
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**167,449**	188,881
Այլ գործառնական զուտ եկամուտ	**494,793**	377,041

10 Արժեզրկումից կորուստներ/(հակադրում)

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ (ծանոթագրություն 16)	**(18,052)**	67,163
Հաճախորդներին տրված վարկեր (ծանոթագրություն 19)	**1,007,948**	636,818
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 22)	**(29,193)**	36,455
Ընդամենը կորուստների արժեզրկման ծախս	**960,703**	740,436

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	**2,213,627**	2,176,016
Այլ ծախսեր	**20,894**	14,841
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**2,234,521**	2,190,857

12 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Գործառնական վարձակալության գծով ծախս	**330,790**	328,549
Վերանորոգման և պահպանման ծախսեր	**182,814**	180,668
Անվտանգության ծառայություն	**213,992**	194,617
Գովազդ և շուկայավարում	**124,871**	163,077
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	**166,333**	173,672
Կապի և տեղեկատվական ծառայություններ	**102,249**	108,849
Գործուղման ծախսեր	**36,282**	32,323
Գրասենյակային ծախսեր	**52,311**	56,296
Կոմունալ և գրասենյակի սպասարկման ծախսեր	**46,088**	44,179
Մասնագիտական ծառայություններ	**51,666**	21,097
Ներկայացուցչական ծախսեր	**13,790**	18,188
Ապահովագրություն	**12,793**	14,608
Անդամավճարներ	**8,334**	10,941
Այլ	**94,998**	50,580
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	**1,437,311**	1,397,644

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	**287,423**	700,508
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	**31,177**	-
Հետաձգված հարկ	**(21,045)**	(3,361)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**297,555**	697,147

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2014թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր

տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2015	Արդյունավետ դրույքաչափ (%)	2014	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**1,239,236**		3,540,579	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	**247,847**	**20**	708,116	20
Չնվազեցվող ծախսեր	**9,837**	**1**	7,151	-
Թանկարժեք մետաղների վերագնահատումից առաջացած զուտ (օգուտ)/վնաս	**100**	**-**	(18,304)	-
Բացասական փոխարժեքային տարբերություն	**22,169**	**2**	184	-
Նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	**31,177**	**2**	-	-
Այլ ճշգրտումներ	**(13,575)**	**(1)**	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**297,555**	**24**	697,147	20

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**15,856**	**-**	**34,874**	**50,730**
Հաճախորդներին տրված վարկեր	**16,865**	**10,639**	**-**	**27,504**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**260**	**(260)**	**-**	**-**
Այլ պարտավորություններ	**92,594**	**10,340**	**-**	**102,934**
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**125,575**	**20,719**	**34,874**	**181,168**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**-**	**(7,167)**	**-**	**(7,167)**
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	**(7,379)**	**(5,458)**	**-**	**(12,837)**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	**(11,829)**	**(3,817)**	**-**	**(15,646)**
Այլ ակտիվներ	**(8,695)**	**5,509**	**-**	**(3,186)**
Պայմանական պարտավորություններ	**(30,755)**	**11,259**	**-**	**(19,496)**
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	**(58,658)**	**326**	**-**	**(58,332)**
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**66,917**	**21,045**	**34,874**	**122,836**

Հազար ՀՀ դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	15,856	15,856
Հաճախորդներին տրված վարկեր	-	16,865	-	16,865
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	260	-	260
Այլ պարտավորություններ	76,224	16,370	-	92,594
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	76,224	33,495	15,856	125,575
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(111,583)	-	111,583	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(9,088)	1,709	-	(7,379)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	(11,829)	-	(11,829)
Այլ ակտիվներ	-	(8,695)	-	(8,695)
Պայմանական պարտավորություններ	(19,436)	(11,319)	-	(30,755)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(140,107)	(30,134)	111,583	(58,658)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(63,883)	3,361	127,439	66,917

14 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	**2015**	2014
Տարվա շահույթ	**941,681**	2,843,432
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	**1,277,501**	1,277,501
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը	**0.74**	2,2

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	**8,916,062**	11,495,157
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	**26,015,976**	29,573,199
Նոստրո հաշիվներ այլ բանկերում	**4,239,399**	3,689,184
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**39,171,437**	44,757,540

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 20%-ի չափով ամբողջությամբ ՀՀ դրամով: Այդ միջոցները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 14,201,341 հազար դրամ (2014թ.՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15,880,934 հազար դրամ): Այդ միջոցների

ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունի մեկ նոստրո հաշիվ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչինչ), որի մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը և կազմում է 2,761,989 հազար դրամ:

2015թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները՝ վարկային պարտավորությունների մարում գրավների սեփականացման միջոցով 665,745 հազար դրամ գումարով (2014թ.՝ 309,122 հազար դրամ):

16 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահանջներ բանկերի նկատմամբ		
Վարկեր	**2,179,189**	-
ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց	**320,000**	380,000
Ավանդներ ոչ ռեզիդենտ բանկերում	**278,516**	287,674
Հակադարձ հետգնման պայմանագրեր	**-**	408,168
Այլ մնացորդներ	**37,849**	44,215
Ընդամենը	**2,815,554**	1,120,057
Պահանջներ այլ ֆինանասական կազմակերպությունների նկատմամբ		
Վարկեր	**2,113,772**	2,239,613
Հակադարձ հետգնման պայմանագրեր	**1,592,464**	3,939,523
Այլ մնացորդներ	**34**	-
	3,706,270	6,179,136
Արժեզրկումից պահուստներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	**(24,488)**	(22,396)
Ընդամենը	**3,681,782**	6,156,740
Ընդամենը պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**6,497,336**	7,276,797

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օտարերկյա բանկերում տեղաբաշխված վարկերի և ավանդների կազմում ներառված է 65,061 հազար դրամ գումարը (2014թ.՝ 63,881 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է Master Card վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդ, Visa վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված 190,597 հազար դրամ գումարը (2014թ.՝ 187,138 հազար դրամ), ինչպես նաև 22,857 հազար դրամ գումարը՝ ոչ ռեզիդենտ բանկի կողմից երաշխիքի թողարկման գծով (2014թ.՝ 36,655 հազար դրամ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2015		2014	
	Գրավի իրական արժեքը	**Վարկի գումարը**	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական պարտատոմսեր	**1,636,615**	**1,592,464**	4,280,333	4,347,691
Ընդամենը հետգնման պայմանագրեր	**1,636,615**	**1,592,464**	4,280,333	4,347,691

Բանկերին տրված վարկեր և փոխատվություններն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով արժեզրկման կորուստների հատկացումների շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
31 դեկտեմբեր 2013	-
Տարվա զուտ ծախս	**67,163**
Տարվա զուտ դուրսգրում	**(44,767)**
31 դեկտեմբեր 2014	**22,396**
Տարվա զուտ հակադարձում	**(18,052)**
Տարվա զուտ վերադարձ	**20,144**
31 դեկտեմբեր 2015	**24,488**

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ ֆինանսական կազմակերպություն (2014թ.՝նույնպես), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

17 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկն օգտագործում է հետևյալ ածանցյալ գործիքները ինչպես հեջավորման, այնպես էլ ոչ հեջավորման նպատակներով: Արժույթի և տոկոսադրույքի սվոփերը դրամական միջոցների մեկ հավաքածուի մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների փոխանակում: Բանկի վարկային ռիսկը ներկայացնում է սվոփային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները: Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, այդպիսով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքները կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Միջբանկային արտարժույթային սվոփ պայմանագրեր	**1,935,000**	**3,214**	**-**
Այլ սվոփ պայմանագրեր	**487,402**	**-**	**1,340**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ և այլ առևտրային պարտավորություններ		**3,214**	**1,340**

18 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գնանշվող ներդրումներ		
ՀՀ պետական պարտատոմսեր	**2,032,007**	376,740
Ոչ պետական պարտատոմսեր	**34,260**	-
	2,066,267	376,740
Չգնանշվող ներդրումներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	**55,839**	55,839
ՀՀ պետական պարտատոմսեր	**13,022,595**	14,991,702
	13,078,434	15,047,541
Ընդամենը ներդրումներ	**15,144,701**	15,424,281

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի ներկա արժեք:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2015		2014	
	%	ժամկետ	%	ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	**6.85% - 15.73%**	**2016-2032**	6.36% - 14.36%	2015-2032

Սկզբնական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը դրամային փոխանցումների և ֆինանսական ծառայությունների ոլորտում: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տրամադրել վկայություն դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական

միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ: Այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ քիչ հավանական է, որ տարեվերջի դրությամբ իրական արժեքն էականորեն կտարբերվի հաշվեկշռային ածեքից:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող պետական պարտատոմսերում ներառված են ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր 1,023,313 հազար դրամ իրական արժեքով (2014թ.՝ ոչինչ)՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում:

19 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	**55,326,819**	55,290,938
Օվերդրաֆտներ և վարկային գծեր	**4,248,660**	3,121,925
Վարկային քարտեր	**8,053,648**	8,862,170
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	**-**	228,977
Ֆինանսական վարձակալություն	**80,493**	103,132
	67,709,620	67,607,142
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(1,626,493)**	(1,620,297)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**66,083,127**	65,986,845

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ՀՀ պետական պարտատոմսերի իրական արժեքը, որոնք Բանկն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել պարտավորությունների խախտման բացակայության դեպքում, կազմում է 192,289 հազար դրամ:

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

2015

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Տրանսպորտ և կապ	Սպասարկում	Սպառողական ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Վարկեր	**4,446,748**	**1,579,191**	**3,648,185**	**25,759,632**	**5,055,993**	**3,203,748**	**12,675,915**	**5,468,883**	**5,871,325**	**67,709,620**
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(320,630)**	**(29,656)**	**(90,266)**	**(266,849)**	**(127,592)**	**(35,882)**	**(155,168)**	**(54,689)**	**(545,761)**	**(1,626,493)**
Զուտ վարկեր	**4,126,118**	**1,549,535**	**3,557,919**	**25,492,783**	**4,928,401**	**3,167,866**	**12,520,747**	**5,414,194**	**5,325,564**	**66,083,127**

2014

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբե-րություն	Գյուղա-տնտե-սություն	Շինարա-րություն	Առևտուր	Տրանս-պորտ և կապ	Սպասարկում	Սպառող-ական ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Վարկեր	5,433,298	1,486,145	2,737,374	29,627,243	1,625,664	3,495,461	12,359,339	4,626,893	6,215,725	67,607,142
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(108,971)	(14,861)	(27,374)	(822,587)	(16,257)	(80,396)	(346,274)	(46,269)	(157,308)	(1,620,297)
Զուտ վարկեր	5,324,327	1,471,284	2,710,000	28,804,656	1,609,407	3,415,065	12,013,065	4,580,624	6,058,417	65,986,845

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

2015

Հազար ՀՀ դրամ	**Արդյունաբերություն**	**Գյուղատնտեսություն**	**Շինարարություն**	**Առևտուր**	**Տրանսպորտ և կապ**	**Սպասարկում**	**Սպառողական**	**Հիփոթեքային**	**Այլ**	**Ընդամենը**
2015թ. Հունվարի 1 դրությամբ	**108,971**	**14,861**	**27,374**	**822,587**	**16,257**	**80,396**	**346,274**	**46,269**	**157,308**	**1,620,297**
Տարվա ծախս/(հակադարձում)	**420,480**	**65,607**	**68,357**	**(33,473)**	**231,006**	**(153,588)**	**(14,922)**	**(3,462)**	**427,943**	**1,007,948**
Զուտ (դուրսգրում)/ վերադարձ	**(208,821)**	**(50,812)**	**(5,465)**	**(522,265)**	**(119,671)**	**109,074**	**(176,184)**	**11,882**	**(39,490)**	**(1,001,752)**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**320,630**	**29,656**	**90,266**	**266,849**	**127,592**	**35,882**	**155,168**	**54,689**	**545,761**	**1,626,493**
Անհատական արժեզրկում	**187,107**	**13,010**	**49,925**	**9,738**	**-**	**-**	**28,963**	**-**	**507,298**	**796,041**
Խմբային արժեզրկում	**133,523**	**16,646**	**40,341**	**257,111**	**127,592**	**35,882**	**126,205**	**54,689**	**38,463**	**830,452**
	320,630	**29,656**	**90,266**	**266,849**	**127,592**	**35,882**	**155,168**	**54,689**	**545,761**	**1,626,493**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	**472,852**	**131,713**	**106,501**	**48,561**	**-**	**-**	**55,452**	**-**	**2,024,999**	**2,840,078**

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Առևտուր	Տրանսպորտ և կապ	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	2014 Ընդամենը
2014թ. Հունվարի 1 դրությամբ	81,345	11,482	22,773	423,942	17,241	55,879	220,073	47,486	80,099	960,320
Տարվա ծախս/(հակադարձում)	317,633	4,756	4,601	526,171	(984)	50,991	236,297	19,464	(522,111)	636,818
Զուտ (դուրսգրում)/ վերադարձ	(290,007)	(1,377)	-	(127,526)	-	(26,474)	(110,096)	(20,681)	599,320	23,159
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	108,971	14,861	27,374	822,587	16,257	80,396	346,274	46,269	157,308	1,620,297
Անհատական արժեզրկում	859	-	-	331,507	-	-	101,457	-	101,679	535,502
Խմբային արժեզրկում	108,112	14,861	27,374	491,080	16,257	80,396	244,817	46,269	55,629	1,084,795
	108,971	14,861	27,374	822,587	16,257	80,396	346,274	46,269	157,308	1,620,297
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	27,682	-	-	1,082,995	-	-	118,510	-	652,867	1,882,054

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական ձեռնարկություններ և հիմնարկներ	**496,972**	562,201
Մասնավոր ձեռնարկություններ	**38,336,062**	36,824,816
Ֆիզիկական անձիք	**19,484,684**	18,260,239
Անհատ ձեռնարկատերեր	**9,391,902**	11,959,886
	67,709,620	67,607,142
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(1,626,493)**	(1,620,297)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	**66,083,127**	65,986,845

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային քարտեր	**7,719,411**	8,388,464
Հիփոթեքային	**5,468,883**	4,626,893
Ոսկի	**4,641,977**	3,408,920
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	**-**	228,977
Ավտոմեքենաների ձեռքբերման	**12,751**	24,395
Սպառողական վարկեր	**1,641,662**	1,582,590
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	**19,484,684**	18,260,239

Ֆինանսական վարձակալության գծով տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ		
Մինչև 1 տարի	**33,083**	37,025
1-5 տարի	**62,306**	89,909
	95,389	126,934
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ		
Մինչև 1 տարի	**(2,243)**	(2,733)
1-5 տարի	**(12,653)**	(21,069)
	(14,896)	(23,802)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	**80,493**	103,132

Ֆինանսական վարձակալության գծով արժեզրկումից պահուստները ներառված են վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստում և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 1,720 հազար դրամ (2014թ.՝ 1,966 հազար դրամ):

Ֆինանսական վարձակալության գծով ենթադրվող տոկոսադրույքը կազմում է 10%-16 %:

19.1 Հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում՝

Հազար ՀՀ դրամ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Արդյունաբերություն	-	771	4,879	49,912	55,562
Գյուղատնտեսություն	8,761	1,299	2,968	3,652	16,680
Առևտուր	76,707	66,942	8,945	196,258	348,852
Սպառողական	18,535	28,405	3,546	23,023	73,509
Հիփոթեքային	-	-	-	1,922	1,922
Սպասարկում	-	20,533	-	-	20,533
Տրանսպորտ և կապ	864	5,865	-	-	6,729
Այլ	4,352	36,394	-	7,574	48,320
Ընդամենը	**109,219**	**160,209**	**20,338**	**282,341**	**572,107**

Հազար ՀՀ դրամ	2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Արդյունաբերություն	48,893	10,067	157	9,487	68,604
Գյուղատնտեսություն	2,915	-	-	29,319	32,234
Շինարարություն	-	-	-	5,101	5,101
Առևտուր	78,536	90,974	83,464	181,636	434,610
Սպառողական	26,838	10,782	3,046	35,098	75,764
Հիփոթեքային	-	2,372	-	1,282	3,654
Այլ	3,280	11,321	10,655	-	25,256
Ընդամենը	160,462	125,516	97,322	261,923	645,223

Չարժեզրկված վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	**2015(%)**	2014(%)
Արդյունաբերություն	**3.36**	**1.81**
Առևտուր	**0.86**	**0.15**
Սպասարկում	**1.12**	**2.15**
Սպառողական	**0.76**	**0.39**
Հիփոթեքային	**0.10**	**0.20**
Այլ	**0.20**	-

Անհատապես արժեզրկվող վարկեր և փոխատվություններ

Մինչև գրավներից առաջացող դրամական հոսքերը հաշվի առնելը հաճախորդներին տրամադրված անհատապես արժեզրկված վարկերը և փոխատվությունները կազմում են 2,840,078 հազար դրամ (2014թ.՝ 1,882,054 հազար դրամ): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի անհատապես արժեզրկված վարկերի գրավների իրական արժեքը կազմում է 3,110,880 հազար դրամ (2014թ.՝ 2,325,900 հազար դրամ): Գրավները բաղկացած են անշարժ գույքից և շարժական գույքից:

19.2 Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրություններ և դատողություններ

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է ածանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս ղեկավարությունը հիմնվում է արժեզրկված վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- չարժեզրկված վարկերի գծով Բանկը ձևավորում է խմբային պահուստ՝ հաշվի առնելով տնտեսական միջավայրը և շուկայում վնաս կրելու իր փորձը:
- արժեզրկված վարկերի համար գրավադրված գույքի իրացվելի արժեքի որոշման համար կիրառվում է 30%-40% զեղչ գրավի սկզբնապես գնահատված արժեքի գծով, և գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12-ից 48 ամսով:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա:

19.3 Գրավի վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված վարկերի պորտֆելի վերլուծությունը՝ ըստ գրավի տեսակների.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	**46,989,814**	53,590,323
Շարժական գույք	**600,256**	595,724
Շրջնառու միջոցներ	**386,212**	146,090
Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխիքներ	**1,586,335**	1,243,437
Թանկարժեք զարդեր,ոսկու ջարդոն	**5,584,363**	4,415,862
Դրամական հոսքեր	**6,765,260**	6,441,467
Դրամական միջոցներ	**1,866,865**	615,128
Այլ	**3,930,515**	559,111
Ընդամենը վարկեր և փոխատվություններ համախառն	**67,709,620**	67,607,142

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրվում է.

- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ անշարժ, շարժական գույք, պաշարները
- Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեղթերը:

Անհատներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Ավտոմեքենայի վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: Ոսկու գրավով վարկերն ապահովված են ոսկու գրավով: Այլ վարկերը հիմնականում ներառում են Բանկի աշխատակիցներին տրամադրված վարկերը, որոնց համար ապահովություն են հանդիսանում աշխատակիցների աշխատավարձերը: Սպառողական վարկերը գրավով ապահովված են ձեռք բերվող ապրանքներով: Վարկային քարտերի ապահովվածություն հանդիսանում են դրամական հոսքերը:

19.4 Վարկային ռիսկին ենթարկվածություն

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք վարկառու (2014թ-ին՝ մեկ), որոնց, այդ թվում նրանց փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 9,043,056 հազար դրամ (2014թ-ին՝ 2,327,069 հազար դրամ):

19.5 Գրավադրված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,480,452 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2014թ-ին՝ 6,153,429 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների դիմաց:

19.6 Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 33-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

Ինչպես նշված է 31 ծանոթագրությունում, 31.12.15թ. և 31.12.14թ. դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ պարտքային, արժութային և տոկոսային ռիսկը բացահայտված է 34 ծանոթագրությունում: Փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 30 ծանոթագրությունում:

20 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Հող և շենքեր	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Վարձակալված գույքի բարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ							
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	1,638,188	1,393,228	561,917	97,260	202,253	310,611	4,203,457
Ավելացում	98,514	50,566	67,304	61,667	19,530	163,531	461,112
Օտարում		(35,755)	(22,125)	(36,277)	(27,389)	-	(121,546)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,736,702**	**1,408,039**	**607,096**	**122,650**	**194,394**	**474,142**	**4,543,023**
Ավելացում	**316**	**290,805**	**62,873**	**-**	**2,581**	**26,820**	**383,395**
Օտարում	**-**	**(309)**	**-**	**-**	**-**	**-**	**(309)**
Վերադասակարգում	**(4,716)**	**(190)**	**-**	**-**	**4,906**	**-**	**-**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,732,302**	**1,698,345**	**669,969**	**122,650**	**201,881**	**500,962**	**4,926,109**
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ							
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	190,446	787,705	319,620	49,373	115,250	106,614	1,569,008
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	53,709	210,429	88,649	22,855	28,819	35,988	440,449
Օտարում	-	(35,755)	(22,125)	(26,961)	(26,658)	-	(111,499)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**244,155**	**962,379**	**386,144**	**45,267**	**117,411**	**142,602**	**1,897,958**
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	**55,887**	**218,669**	**88,442**	**23,111**	**26,041**	**47,595**	**459,745**
Օտարում	**-**	**(309)**	**-**	**-**	**-**	**-**	**(309)**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**300,042**	**1,180,739**	**474,586**	**68,378**	**143,452**	**190,197**	**2,357,394**
ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԱՐԺԵՔ							
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,432,260**	**517,606**	**195,383**	**54,272**	**58,429**	**310,765**	**2,568,715**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,492,547	445,660	220,952	77,383	76,983	331,540	2,645,065
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,447,742	605,523	242,297	47,887	87,003	203,997	2,634,449

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 910,143 հազար դրամ (2014թ.՝ 641,593 հազար դրամ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 33,638 հազար դրամ (2014թ.՝ 13,939 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 149,839 հազար դրամ (2014թ.՝ 47,106 հազար դրամ): Տվյալ սարքավորումները չեն ամորտիզացվում և դասակարգված են համաձայն իրենց դասերի:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (2014թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռք բերման գծով 5,143 հազար դրամ գումարով (2014թ.՝ 4,711 հազար դրամ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով (2014թ.՝ 3,609 հազար դրամ):

21 Բռնագանձված ակտիվներ

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մասնրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2015**	2014
Անշարժ գույք	**746,796**	297,430
Այլ	**63**	63
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**746,859**	297,493

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամային փոխանցումների և քլիրինգային համակարգերի շրջանակներում ստացվելիք գումարներ	**702,286**	606,592
Այլ ստացվելիք գումարներ	**51,127**	46,055
	753,413	652,647
Արժեզրկումից պահուստներ	**(21,425)**	(17,866)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**731,988**	634,781
Կանխավճարներ	**147,778**	245,586
Թանկարժեք մետաղներ	**456,506**	934,585
Նյութեր և պաշարներ	**62,318**	58,441
Չօգտագործվող գույք	**32,207**	32,207
Այլ	**573**	2,695
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**699,382**	1,273,514
Ընդամենը այլ ակտիվներ	**1,431,370**	1,908,295

Այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**Ընդամենը**
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	13,822
Տարվա ծախս	40,955
Զուտ դուրս գրում	(36,911)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**17,866**
Տարվա ծախս	**(29,193)**
Զուտ վերադարձ	**32,752**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**21,425**

Այլ ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**Ընդամենը**
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	4,500
Տարվա ծախս	(4,500)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**
Տարվա ծախս	**-**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**

23 Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստորադասված վարկ ՀՀ ԿԲ-ից	-	1,023,554
Այլ վարկեր ՀՀ ԿԲ-ից	**881,119**	514,921
Վարկեր առևտրային բանկերից	**3,214,890**	1,299,565
Լորո հաշիվներ	**149,474**	7,440
Ռեպո համաձայնագրեր	**1,000,495**	-
Այլ պարտավորություններ	**801**	141
	5,246,779	2,845,621

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադասված վարկն իրենից ներկայացնում է ՀՀ ԿԲ-ից ստացված վարկը, որի մարման ժամկետը լրանում է 2015թ. հունիսին և որի գծով կիրառվում է տարեկան 7.5% տոկոսադրույք: Սնանկացման դեպքում, ստորադասված փոխառությունը կմարվի Բանկի մյուս բոլոր պարտավորություններն ամբողջովին մարելուց հետո:

ՀՀ ԿԲ-ից այլ վարկեր հոդվածը ներառում է նաև վարկեր ստացված Գերմանա-Հայկական հիմնադրամից «Հիփոթեքային վարկավորման ծրագրի» շրջանակներում:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում միջոցներ չունի որևէ բանկ, որի մնացորդը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2014թ.՝ նույնպես):

2015 և 2014թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

24 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
Անհատներ	**11,883,410**	10,752,751
Իրավաբանական անձինք	**23,924,009**	17,971,738
ՀՀ կառավարություն	**422,622**	9,857,906
Ժամկետային ավանդներ		
Անհատներ	**19,461,177**	22,994,868
Իրավաբանական անձինք	**3,645,938**	4,233,090
	59,337,156	65,810,353

ՀՀ կառավարության ընթացիկ հաշիվները իրենցից ներկայացնում են հաճախորդների կողմից ՀՀ մաքսային կոմիտեին փոխանցվելիք գումարներ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում հաճախորդների ավանդների մնացորդները 1,046,977 հազար դրամ (2014թ-ին՝ 4,532,457 հազար դրամ) գումարով հանդիսանում են գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի դիմաց:

Հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կենտրոնացում

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ կառավարության հաշիվներից, Բանկն ունի չորս հաճախորդներ կամ կապակցված հաճախորդների խմբեր, որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2014թ-ին՝ երկու): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները կազմում են 23,352,938 հազար դրամ (2014թ-ին՝ 15,049,347 հազար դրամ):

Ժամկետային ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2015 և 2014թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

25 Այլ փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ ոչ ռեզիդենտ բանկերից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից	**36,539,681**	40,368,388
Փոխառություններ ՀՀ կառավարությունից	**2,597,006**	2,943,168
Փոխառություններ տեղական ֆինանսական կազմակերպություններից	**1,765,786**	1,980,403
Ընդամենը այլ փոխառություններ	**40,902,473**	45,291,959

Այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդների և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հինգ պայմանագրային կողմ (2014թ-ին՝ ութ), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում է 30,989,901 հազար դրամ (2014թ-ին՝ 39,145,652 հազար դրամ):

ՀՀ կառավարությունից ստացված վարկերը ներառում են ՀՀ ԿԲ-ի (որը հանդես է գալիս որպես ՀՀ կառավարության գործակալ) և Բանկի միջև կնքված պայմանագրի շրջանակներում տրամադրված վարկերը, որոնք վերաբերում են Տնտեսության կայունացման վարկային ծրագրին, Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ծրագրին, Փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ծրագրին: Պայմանագրի համաձայն ՀՀ ԿԲ-ն վարկեր է տրամադրում Բանկին՝ Բանկի կողմից հաճախորդներին տրամադրված որակավորված ենթավարկերը վերաֆինանսավորելու համար: Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի այս ենթավարկերի հետ կապված:

Այլ փոխառությունների մի մասն ունեն հաստատուն, մյուսները՝ փոփոխական տոկոսադրույքներ:

2015 և 2014թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

26 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտատոմսեր	**3,323,481**	1,847,950
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	**3,323,481**	1,847,950

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2014թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2014թ.՝ ոչինչ):

Թողարկված պարտատոմսերը ներառում են հետևյալ թողարկումները՝

2015թ. հունիսի 26-ին Բանկի կողմից թողարկվել է 72 ամիս ժամկետայնությամբ 7.25% եկամտաբերությամբ 2,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 80,000 հատ սովորական պարտատոմս:

2015թ. դեկտեմբերի 1-ին Բանկի կողմից թողարկվել է 48 ամիս ժամկետայնությամբ 7% եկամտաբերությամբ 2,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 80,000 հատ սովորական պարտատոմս:

2014թ. հունիսի 11-ին Բանկի կողմից թողարկվել է 48 ամիս ժամկետայնությամբ 8% եկամտաբերությամբ 1,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 40,000 հատ սովորական պարտատոմս:

2013թ. հուլիսի 20-ին Բանկի կողմից թողարկվել է 36 ամիս ժամկետայնությամբ 13% եկամտաբերությամբ 400,000,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 40,000 հատ սովորական պարտատոմս:

2013թ. հունիսի 14-ին Բանկի կողմից թողարկվել է 36 ամիս ժամկետայնությամբ 8.5% եկամտաբերությամբ 1,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 40,000 հատ սովորական պարտատոմս:

27 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	**434,800**	367,772
Մատակարարներին վճարվելիք գումարներ	**84,057**	140,045
Այլ ֆինանսական պարտավորություններ	**87,574**	36,803
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**606,431**	544,620
Այլ վճարվելիք հարկեր	**88,845**	118,720
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**49,386**	101,850
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**138,231**	220,570
Ընդամենը այլ պարտավորություններ	**744,662**	765,190

28 Բաժնետիրական կապիտալ

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 6,387,505 հազար դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,277,501 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 5,000 դրամ անվանական արժեքով:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում
«Ֆլեշ» ՍՊԸ	4,103,050	64.24%
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	1,596,880	25.00%
Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Ս.Ա. ՍԻԿԱՎ-ՍԻՖ	638,755	10.00%
Այլ բաժնետերեր	48,820	0.76%
	6,387,505	100%

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2014թ. ընթացքում Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինները կազմում են 297,000 հազար դրամ կամ 232.5 դրամ մեկ բաժնետոմսի համար:

2014թ. ընթացքում Rural Impulse Fund jsc կողմից «Ֆլեշ» ՍՊԸ-ից ձեռք է բերվել Բանկի բաժնետոմսեր, համաձայն 2012թ. հոկտեմբերի 9-ին Բանկի, «Ֆլեշ» ՍՊԸ-ի (Մայր կազմակերպություն) և Rural Impulse Fund jsc միջև կնքված Հիմնադիր պայմանագրի, որի արդյունքում Rural Impulse Fund jsc բաժնեմասը Բանկում կազմում է 10%:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

29 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	**1,442,972**	1,730,444
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	**4,001,245**	4,206,282
Չօգտագործված օվերդրաֆտներ	**26,713**	28,354
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	**212,515**	5,185,875
Ֆակտորինգային պայմանագրեր	**100,000**	-
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**5,783,445**	11,150,955

Վարկային պարտավորությունների, երաշխիքների և այլ ֆինանսական միջոցների պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարում:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – բանկը որպես վարձակալող

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր փոխադրամիջոցներ, շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	**349,520**	315,364
1-5 տարի	**672,150**	743,278
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	**1,021,670**	1,058,642

Կապիտալ բնույթի պարտավորություններ

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 20 ծանոթագրությունում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: 2015-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկին սեփականության իրավունքով պատկանող շենքերը և փոխադրամիջոցները ապահովագրված են: Բանկն ունի բանկային ռիսկերի համալիր ապահովագրություն էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար, ինչպես նաև ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն:

Սկսած 2005թ. Բանկը հանդիսանում է ավանդների պարտադիր ապահովագրական համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 10,000 հազար դրամ ընդհանուր գումարով (մինչև 5,000 հազար դրամ արտարժույթով ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետ կանչման դեպքում:

30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող է համարվում ՀՀ գործարար Բարսեղ Բեգլարյանը, ով հանդիսանում է Բանկի բաժնետեր «Ֆլեշ» ՍՊԸ-ի սեփականատերը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր**	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**-**	**161,132**	70	56,596
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	**-**	**1,732,169**	3,892,910	1,746,485
Տարվա ընթացքում մարված վարկեր	**-**	**(1,462,317)**	(3,892,980)	(1,641,949)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	**-**	**430,984**	-	161,132
Արժեզրկումից պահուստ	**-**	**(11,399)**	-	(2,417)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**419,585**	-	158,715

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմ և կապակցված**	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**4,342,988**	-	5,989,541	-
Տարվա ընթացքում ստացված	**882,998**	-	2,421,366	-
Տարվա ընթացքում վճարված	**(3,144,660)**	-	(4,067,919)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,081,326**	-	4,342,988	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**6,410,824**	**7,124,630**	2,376,539	4,197,342
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	**145,041,648**	**29,239,269**	206,570,449	29,858,077
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	**(141,964,803)**	**(30,041,557)**	(202,536,164)	(26,930,789)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,487,669**	**6,322,342**	6,410,824	7,124,630
Տրված երաշխիքների մնացորդը	**28,785**	**-**	955,568	120,211
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	**-**	**39,164**	1,209	49,402
Վարկերի կորուստի գծով ծախս	**-**	**(8,982)**	-	(1,699)
Միջնորդավճարների գծով եկամուտ	**2,327**	**6,890**	1,975	1,935
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ/(վնաս)	**48,744**	**3,014**	(82,690)	7,698
Զուտ վնաս արտարժույթի վերագնահատումից	**(55,020)**	**(5,018)**	(247,163)	(27,852)
Տոկոսային ծախսեր ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների դիմաց	**(361,224)**	**-**	(465,095)	-
Տոկոսային ծախսեր հաճախորդներ ավանդների գծով	**(47,961)**	**(300,912)**	(65,033)	(296,825)
Միջնորդավճարների գծով ծախսեր	**(34,397)**	**-**	(53,600)	-
Վարձակալության գծով ծախսեր	**(17,400)**	**(55,627)**	(17,400)	(55,945)

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**2015**	**2014**
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	**259,775**	**264,108**
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**259,775**	**264,108**

Բանկի հետ կապված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 10 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 6%-18% (2014թ.՝ 6%-21%):

31 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք

մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը:

Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

31.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	**39,171,437**	-	**39,171,437**	**39,171,437**
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	-	**6,497,336**	-	**6,497,336**	**6,497,336**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	**66,058,101**	-	**66,058,101**	**66,083,127**
Այլ ակտիվներ	-	**731,988**	-	**731,988**	**731,988**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	**5,231,994**	-	**5,231,994**	**5,246,779**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	**59,337,156**	-	**59,337,156**	**59,337,156**
Այլ փոխառություններ	-	**40,902,473**	-	**40,902,473**	**40,902,473**
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	**3,323,481**	-	**3,323,481**	**3,323,481**
Այլ պարտավորություններ	-	**606,431**	-	**606,431**	**606,431**

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	44,757,540	-	44,757,540	44,757,540
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	-	7,276,797	-	7,276,797	7,276,797
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	65,931,955	-	65,931,955	65,986,845
Այլ ակտիվներ	-	634,781	-	634,781	634,781

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	2,845,621	-	2,845,621	2,845,621
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	65,810,353	-	65,810,353	65,810,353
Այլ փոխառություններ	-	45,291,959	-	45,291,959	45,291,959
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,847,950	-	1,847,950	1,847,950
Այլ պարտավորություններ	-	544,620	-	544,620	544,620

Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 6% մինչև 24% տարեկան (2014թ. 6% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ բանկերի, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Այլ փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով ավանդների և փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

31.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ				2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Գնանշվող ներդրումներ	**2,066,267**	**-**	**-**	**2,066,267**
Չգնանշվող ներդրումներ	**-**	**13,022,595**	**-**	**13,022,595**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**-**	**3,214**	**-**	**3,214**
Ընդամենը	**2,066,267**	**13,025,809**	**-**	**15,092,076**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**-**	**1,340**	**-**	**1,340**
Ընդամենը	**-**	**1,340**	**-**	**1,340**
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	**2,066,267**	**13,024,469**	**-**	**15,090,736**

Հազար ՀՀ դրամ				2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Գնանշվող ներդրումներ	376,740	-	-	376,740
Չգնանշվող ներդրումներ	-	14,991,702	-	14,991,702
Ընդամենը	-	14,991,702	-	15,368,442
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	376,740	14,991,702	-	15,368,442

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1-ին և 2-րդ մակարդակների միջև փոխանցումներ չեն կատարվել:

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը: Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային սվոփ պայմանագրերից:

Չգնանշվող ՀՀ և այլ երկրների բաժնեմասային ներդրումներ

Բանկի ներդրումների իրական արժեքը չգնանշվող ՀՀ բաժնեմասային արժեթղթերում չի կարող արժանահավատորեն գնահատվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից: Սեփական կապիտալի այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ծան. 18-ը:

32 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ				2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
		Հաշվանցված գումարներ		Կապակցված գումարներ, որոնք չեն հաշվանցվել ֆինասնական վիճակի մասին հաշվետվության մեջ	
	Ֆինանսական ակտիվների համախառն մեծություն	Հաշվանցված ֆինանսական ակտիվների համախառն մեծություն	Ներկայացված զուտ արժեքներ	Ֆինանսական գործիքներ չճանացված ֆինասնական վիճակի մասին հաշվետվությունում	Զուտ արժեքներ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 16)	**1,592,464**	**-**	**1,592,464**	**(1,636,615)**	**(44,151)**

Հազար ՀՀ դրամ				2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
		Հաշվանցված գումարներ		Կապակցված գումարներ, որոնք չեն հաշվանցվել ֆինասնական վիճակի մասին հաշվետվության մեջ	
	Ֆինանսական ակտիվների համախառն մեծություն	Հաշվանցված ֆինանսական ակտիվների համախառն մեծություն	Ներկայացված զուտ արժեքներ	Ֆինանսական գործիքներ չճանացված ֆինասնական վիճակի մասին հաշվետվությունում	Զուտ արժեքներ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Հակադարձ հետգնման պայմանագրեր (ծանոթագրություն 16,19)	4,576,668	-	4,576,668	(4,472,622)	(104,046)

33 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 34.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթահանրագումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթահանրագումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	39,171,437	-	-	***39,171,437***	-	-	**-**	**39,171,437**
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,112,532	2,138,121	357,793	***5,608,446***	290,374	598,516	***888,890***	**6,497,336**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	3,214	-	-	***3,214***	-	-	**-**	**3,214**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	384,275	6,524,371	***6,908,646***	5,632,858	2,603,197	***8,236,055***	**15,144,701**
Հաճախորդներին տրված վարկեր	4,677,947	7,517,099	15,947,563	***28,142,609***	30,853,464	7,087,054	***37,940,518***	**66,083,127**
Այլ ակտիվներ	731,988	-	-	***731,988***	-	-	**-**	**731,988**
Ընդամենը ակտիվներ	**47,697,118**	**10,039,495**	**22,829,727**	***80,566,340***	**36,776,696**	**10,288,767**	***47,065,463***	**127,631,803**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,442,929	1,199,813	972,149	***4,614,891***	631,888	-	***631,888***	**5,246,779**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	38,248,070	3,155,451	17,086,181	***58,489,702***	836,373	11,081	***847,454***	**59,337,156**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,340	-	-	***1,340***	-	-	**-**	**1,340**
Այլ փոխառություններ	308,408	4,862,578	11,893,453	***17,064,439***	23,318,688	519,346	***23,838,034***	**40,902,473**
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,400	10,581	883,750	***904,731***	2,418,750	-	***2,418,750***	**3,323,481**
Այլ պարտավորություններ	606,431	-	-	***606,431***	-	-	**-**	**606,431**
Ընդամենը պարտավորություններ	**41,617,578**	**9,228,423**	**30,835,533**	***81,681,534***	**27,205,699**	**530,427**	***27,736,126***	**109,417,660**
Զուտ Դիրք	**6,079,540**	**811,072**	**(8,005,806)**	**(1,115,194)**	**9,570,997**	**9,758,340**	**19,329,337**	**18,214,143**
Կուտակված ճեղքվածք	**6,079,540**	**6,890,612**	**(1,115,194)**		**8,455,803**	**18,214,143**		

Հազար ՀՀ դրամ

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,757,540	-	-	*44,757,540*	-	-	-	*44,757,540*
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	1,195,316	2,905,720	*4,101,036*	9,850,154	1,473,091	*11,323,245*	15,424,281
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,492,916	647,530	1,008,614	*6,149,060*	460,063	667,674	*1,127,737*	7,276,797
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	3,502,618	6,986,320	16,516,270	*27,005,208*	34,188,154	4,793,483	*38,981,637*	65,986,845
Այլ ակտիվներ	634,781	-	-	*634,781*	-	-	-	634,781
Ընդամենը ակտիվներ	53,387,855	8,829,166	20,430,604	*82,647,625*	44,498,371	6,934,248	*51,432,619*	134,080,244
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	182,517	895,715	1,342,189	*2,420,421*	425,200	-	*425,200*	2,845,621
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	42,011,633	4,705,899	16,679,008	*63,396,540*	2,404,453	9,360	*2,413,813*	65,810,353
Այլ փոխառություններ	693,390	1,876,113	10,166,882	*12,736,385*	31,783,289	772,285	*32,555,574*	45,291,959
Թողարկված պարտքային արժեթղթեր	18,948	4,092	474,970	*498,010*	1,349,940	-	*1,349,940*	1,847,950
Այլ պարտավորություններ	544,620	-	-	*544,620*	-	-	-	544,620
Ընդամենը պարտավորություններ	43,451,108	7,481,819	28,663,049	*79,595,976*	35,962,882	781,645	*36,744,527*	116,340,503
Զուտ Դիրք	9,936,747	1,347,347	(8,232,445)	*3,051,649*	8,535,489	6,152,603	*14,688,092*	17,739,741
Կուտակված ճեղքվածք	9,936,747	11,284,094	3,051,649		11,587,138	17,739,741		

34 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության, շուկայական և գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Բանկի կառուցվածքային տարբեր մակարդակներում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի վարչություն

Բանկի վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Խորհրդին կից աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման կարևոր խնդիրների համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունված համապատասխան որոշումների կատարումը:

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողով

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարման, բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար, իր լիազորությունների շրջանակներում որոշումներ է կայացնում վերոհիշյալ ռիսկերի գծով:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեները իրենց իրավասությունների շրջանակներում որոշումներ են ընդունում պարտքային ռիսկի ընդունման վերաբերյալ, պատասխանատվություն են կրում պարտքային ռիսկի զսպմանն ուղղված սահմանաչափերի պահպանման համար:

Ռիսկերի կառավարման վարչություն

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բանկային ռիսկերի բացահայտման, գնահատման, վերլուծության, մոնիտորինգի և հսկողության համար: Այն պատասխանատու է նաև ռիսկերի գնահատման համապատասխան հաշվետվությունների բազայի ստեղծման համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Խորհրդին կից Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Բանկի վարչությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ վարկային ռիսկի համապարփակ չափի, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, արտարժութային ռիսկի, իրացվելիության ցուցանիշների և սթրես թեստերի վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացումների: Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը և վարկային ռիսկերի գնահատման հանձնաժողովը ամսեկան կտրվածքով ստանում են ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Բանկի բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Բանկի բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև նիստ ղեկավարության և Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկը ներառյալ արժեքի ներդրումները, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, պարտքային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված

բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

34.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

34.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Բանկի ակտիվների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

34.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Բանկը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Մեկ վարկառուի գծով պարտքային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է Բանկի ղեկավարության կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար:

Վարկային պորտֆելի պարտքային ռիսկի կենտրոնացվածության աստիճանը ներկայացված է ծանոթագրություն 19.4-ում:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը

կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ:

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության ներկայացված է ծանոթագրություն 19.3- ում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ Բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Բանկը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր պարտքային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

34.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

34.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների գծով կիրառվող միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2015 Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք, %			2014 Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**16.15**	**6.89**	**-**	21.25	8.84	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**10.33**	**6.0**	**-**	10.34	6.0	-
Հաճախորդներին տրված վարկեր	**15.45**	**10.07**	**1.56**	16.29	11.31	9.46
Տոկոսակիր պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**8.25**	**2.95**	**0.5**	8.0	1.1	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	**0.01**	**0.01**	**0.01**	0.01	0.01	0.01
- Ժամկետային ավանդներ	**10.73**	**6.92**	**-**	10.62	7.81	-
Այլ փոխառություններ	**10.02**	**5.13**	**-**	9.99	5.25	3.63
Թողարկված պարտքային արժեթղթեր	**13.0**	**7.5**	**-**	13.0	8.5	-

Տոկոսադրույքի փոփոխության զգայունության վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի իրացման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ							2015
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայնություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+3	-	(50,919)	-	(146,218)	(290,211)	(487,348)
ՀՀ դրամ	+2	(41,137)	-	-	-	-	(41,137)
ԱՄՆ դոլար	+2	(517,904)	-	-	(180,548)	-	(698,452)
ՀՀ դրամ	(3)	-	63,374	-	218,822	579,937	862,133
ՀՀ դրամ	(2)	41,137	-	-	-	-	41,137
ԱՄՆ դոլար	(2)	517,904	-	-	131,848	-	649,752

Հազար ՀՀ դրամ							2014
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայնություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+3	-	(26,059)	(14,016)	(455,676)	(157,828)	(653,579)
ՀՀ դրամ	+2	(25,275)	-	-	-	-	(25,275)
ԱՄՆ դոլար	+2	(449,623)	-	-	-	(31,331)	(480,954)
ՀՀ դրամ	(3)	-	26,664	14,563	490,477	209,855	741,559
ՀՀ դրամ	(2)	25,275	-	-	-	-	25,275
ԱՄՆ դոլար	(2)	449,623	-	-	-	31,331	480,954

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2015		2014	
Արտարժույթ	**Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս**	**Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը**	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	**+5**	**(46,770)**	+5	(83,798)
Եվրո	**+5**	**(401)**	+5	(181)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**Այլ արտարժույթ**	**Ընդամենը**
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**18,104,183**	**18,843,555**	**1,769,637**	**454,062**	**39,171,437**
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**1,956,256**	**4,535,273**	**-**	**5,807**	**6,497,336**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**13,078,435**	**2,066,266**	**-**	**-**	**15,144,701**
Հաճախորդներին տրված վարկեր	**20,374,913**	**45,304,511**	**403,403**	**300**	**66,083,127**
Այլ ֆինանսական ակտիվներ	**223,359**	**258,285**	**44,016**	**206,328**	**731,988**
Ընդամենը	**53,737,146**	**71,007,890**	**2,217,056**	**666,497**	**127,628,589**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**3,025,872**	**1,466,783**	**200,573**	**553,551**	**5,246,779**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**22,665,631**	**34,489,646**	**2,022,530**	**159,349**	**59,337,156**
Այլ փոխառություններ	**6,414,156**	**34,488,317**	**-**	**-**	**40,902,473**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**410,400**	**2,913,081**	**-**	**-**	**3,323,481**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**573,093**	**31,371**	**1,967**	**-**	**606,431**
Ընդամենը պարտավորություններ	**33,089,152**	**73,389,198**	**2,225,070**	**712,900**	**109,416,320**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	**(1,444,028)**	**1,445,902**	**-**	**-**	**1,874**
Զուտ դիրք 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**19,203,966**	**(935,406)**	**(8,014)**	**(46,403)**	**18,214,143**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,872,974**	**3,192,468**	**711,027**	**6,976**	**5,783,445**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	56,610,391	71,163,582	5,390,209	916,062	134,080,244
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	37,377,093	72,839,546	5,393,834	730,030	116,340,503
Զուտ դիրք 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,233,298	(1,675,964)	(3,625)	186,032	17,739,741
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2014 թ. դեկտեմբերի 31-ին	3,433,648	6,868,524	828,939	19,844	11,150,955

34.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար (տես՝ ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

	Աուդիտ չարված	
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ն21- Ընդհանուր իրացվելիություն(Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	**41.45%**	41.32%
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	**166.51%**	168.01%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 33-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը.

				2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	**2,443,634**	**1,202,395**	**1,032,002**	**728,414**	**5,406,445**	**5,246,779**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	**38,851,952**	**3,205,271**	**17,355,947**	**860,834**	**60,274,004**	**59,337,156**
Այլ փոխառություններ	**322,687**	**5,148,382**	**13,198,697**	**26,421,360**	**45,091,126**	**40,902,473**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**13,249**	**54,860**	**1,008,861**	**2,693,613**	**3,770,583**	**3,323,481**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**606,431**	**-**	**-**	**-**	**606,431**	**606,431**
Ընդամենը պարտավորություններ	**42,237,953**	**9,610,908**	**32,595,507**	**30,704,221**	**115,148,589**	**109,416,320**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	**2,424,022**	**-**	**-**	**-**	**-**	**2,424,022**
Արտահոսք	**2,423,769**	**-**	**-**	**-**	**-**	**2,423,769**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	**5,657,169**	**63,932**	**62,344**	**-**	**5,783,445**	**5,783,445**

				2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	190,926	911,529	1,390,555	492,618	2,985,628	2,845,621
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	42,313,305	4,993,445	17,578,651	2,844,981	67,730,382	65,810,353
Այլ փոխառություններ	863,231	2,286,260	11,765,493	35,879,463	50,794,447	45,291,959
Թողարկված պարտքային արժեթղթեր	33,177	32,550	596,969	1,490,043	2,152,739	1,847,950
Այլ ֆինանսական պարտավորություններ	544,620	-	-	-	544,620	544,620
Ընդամենը պարտավորություններ	43,945,259	8,223,784	31,331,668	40,707,105	124,207,816	116,340,503
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	8,907,288	1,288,229	910,316	45,122	11,150,955	11,150,955

34.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային,

շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման, հաստատման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման ծառայությունը, տնօրինությունը, Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են խորհրդին:

35 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով 1988թ. Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող

շահաբաժինների գումարը, կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, գլխավոր պահուստը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	**21,547,287**	21,450,189
Լրացուցիչ կապիտալ	**(315,027)**	(61,925)
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**21,232,260**	21,388,264
Ռիսկով կշռված ակտիվներ	**108,493,919**	117,517,935
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**19.57%**	18.20%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2009թ. հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 5,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափ 30,000,000 հազար ՀՀ դրամ:

Ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահանջը Բանկը կապահովվի կանոնադրական կապիտալի համալրման միջոցով:

36 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՍՍ 8 *«Գործառնական սեգմենտներ»* ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Grant Thornton

www.grantthornton.am

Ենթահավելված 7
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 7

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ7)

«31» մարտի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (չստուգված)
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	33,345,597	48,720,936
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ			
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	11,228,701	16,498,015
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	15		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	111,378,667	104,879,951
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	26,194,595	32,846,022
1.7	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19		
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		1,927,153	2,068,421
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	5,226,565	5,323,683
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	3	-	-
1.12	Այլ ակտիվներ	21	7,460,231	5,223,296
	Ընդամենը՝ ակտիվներ		196,761,509	215,560,324
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	50,501,225	55,040,689
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	107,637,709	107,121,932
2.3	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	3,809,140	3,812,886
2.4	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	25	-	-
2.5	Վճարվելիք գումարներ	26	19,104	59,998
2.6	Հետաձգված հարկային պարտավորություններ	3	128,874	150,946
2.7	Պահուստներ	30		-
2.8	Այլ պարտավորություններ	27	1,366,165	16,243,261
	Ընդամենը՝ պարտավորություններ		163,462,217	182,429,712
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	8,803,655	8,803,655
3.2	Էմիսիոն եկամուտ	29	8,031,745	8,031,745
3.3	Պահուստներ՝			
3.3.1	Գլխավոր պահուստ	30	2,700,000	2,700,000
3.3.2	Վերագնահատման պահուստներ		844,341	866,623
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		12,919,551	12,728,589
3.5	Կապիտալի այլ տարրեր	29		
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		33,299,292	33,130,612
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		196,761,509	215,560,324

Բանկի վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԵՎՈՐՅԱՆ

հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68 -Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրահանգով

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«31» մարտի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	4,157,421	4,157,421	2,564,105	2,564,105
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(2,309,904)	(2,309,904)	(1,431,984)	(1,431,984)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		1,847,517	1,847,517	1,132,121	1,132,121
		-		-	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	303,629	303,629	227,737	227,737
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(113,252)	(113,252)	(115,182)	(115,182)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		190,377	190,377	112,555	112,555
		-		-	
Եկամուտ շահաբաժիններից		-	-	-	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	436,828	436,828	179,602	179,602
Այլ գործառնական եկամուտներ	6	230,055	230,055	123,113	123,113
Գործառնական եկամուտներ		666,883	666,883	302,715	302,715
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(995,282)	(995,282)	(282,975)	(282,975)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,189,355)	(1,189,355)	(875,709)	(875,709)
Այլ գործառնական ծախսեր	9	(285,680)	(285,680)	(189,521)	(189,521)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10	-	-	-	-
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		234,460	234,460	199,186	199,186
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(43,498)	(43,498)	(22,399)	(22,399)
Ժամանակաշրջանի շահույթ		190,962	190,962	176,787	176,787
Այդ թվում					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի գլխավոր հաշվապահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Ֆ.ԳԱԼՍՅԱՆ

հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68 -Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրահանգով

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 բ)

«31» մարտի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ	Նախորդ ժամանակաշրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		**(27,853)**	**(27,853)**	**76,838**	**76,838**
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		**(27,853)**	**(27,853)**	**76,838**	**76,838**
Դրամական հոսքերի հեջավորում		-	-	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		-	-	-	-
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		**5,571**	**5,571**	**(15,368)**	**(15,368)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**(22,282)**	**(22,282)**	**61,470**	**61,470**
Համապարփակ ֆինանսական արդյունք		**168,680**	**168,680**	**238,257**	**238,257**
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԱԼՍՅԱՆ

Երթատեղիված է
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հուլիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿԵՑԻԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)

«31» մարտի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բ.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալում	Հիմնադրամի կապիտալում	Ոչ գրանցված կապիտալում	Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Ֆինանսական արդյունքներ արտաքին գործառույթների միջոցով չվերադասվող	Հատուցված հաշվեգրված ներդրումներ ֆինանսական սեփականության	Դրամական հոսքերի ներգրավում	Օտարման ենթակա ֆինանսական գործիքներից օգտագործում	Չբաշխված շահույթ/վնաս	Մնացեալ շահաբաշխումներ	Ընդամենը	Ստացվելիք բաժնեմաս	Ընդամենը կապիտալ
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա համարների միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ամփոփում) (I եռամսյակ)														
1. Մնացորդ ներառյալ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2016թ. (տառատեսակ)	**6,387,505**	**-**	**6,387,505**	**1,947,880**	**1,500,000**	**-**	**(202,918)**	**-**	**-**	**12,839,114**	**-**	**22,471,581**	**-**	**22,471,581**
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ենթակա արդյունքը և հասկի սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2. Վերանայվածված մնացորդը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3. Բաժնետոմսերի (սեփական բաժնետոմսերի) հետ գործարքներ բաժնետերերի (բաժնետերերի) գծով, այդ թվում՝	**2,416,150**	**-**	**2,416,150**	**6,083,865**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**8,500,015**	**-**	**8,500,015**
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	**2,416,150**	**-**	**2,416,150**	**6,083,865**	**-**	**-**		**-**	**-**	**-**	**-**	**8,500,015**	**-**	**8,500,015**
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և չրթաստաբրամից հանված բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4. Հանդապարտակ եկամուտ	-	-	-	-	-	-	**1.069.541**			**1.089.475**		**2.159.016**		2,159,016
4.1.Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	**1.089.475**		**1.089.475**		1,089,475
4.2.Հասույթ ընկերության չբաշխված շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-	-	-	-	-		-	-	-
5. Շահաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5.1.Հանձնարարականներ բաժնետերերին										-		-		-
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների անվճարում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7. Դեղչերի շարժից, այդ թվում՝	-	-	-	-	**1,200,000**	-	-	-	-	**(1,200,000)**	-	-	-	-
7.1. Մասնաբաժներ գլխավոր պահուստին	-	-	-	-	**1,200,000**	-	-	-	-	**(1,200,000)**		-	-	-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-		-	-	-	-
7.3. Էմիսիոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Մնացորդ ներառյալ ֆինանսական տարվա համարների միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 գնկտեմբերի 2016թ. (տառատեսակ)	**8,803,655**	**-**	**8,803,655**	**8,031,745**	**2,700,000**	**-**	**866,623**	**-**	**-**	**12,728,589**	**-**	**33,130,612**		33,130,612
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ամփոփում) (II եռամսյակ)														
9. Մնացորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2017թ. (տառատեսակ)	**8,803,655**	**-**	**8,803,655**	**8,031,745**	**2,700,000**	**-**	**866,623**	**-**	**-**	**12,728,589**	**-**	**33,130,612**	**-**	**33,130,612**
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ենթակա արդյունքը և հասկի սխալների ճշգրտումը	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10.Վերանայվածված մնացորդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11. Բաժնետոմսերի (սեփական բաժնետոմսերի) հետ գործարքներ բաժնետերերի (բաժնետերերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և չրթաստաբրամից հանված բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) հաշվին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12. Այլ հանդապարտակ եկամուտ	-	-	-	-	-	-	**(22,282)**			**190,962**		**168,680**	-	**168,680**
13. Շահաբաժիններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների անվճարում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15. Նեղդեղի շարժից, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.1. Մասնաբաժներ գլխավոր պահուստին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.3. Էմիսիոն վնասի ծածկում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
16. Մնացորդ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31 մարտի 2017թ. (տառատեսակ)	**8,803,655**	**-**	**8,803,655**	**8,031,745**	**2,700,000**	**-**	**844,341**	**-**	**-**	**12,919,551**	**-**	**33,299,292**	**-**	**33,299,292**

Բանկի գլխավոր հաշվապահ _____ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Գլխավոր տնօրեն _____ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Ենթահավելված 9.1.
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 9.1.

ւնրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9 ա)

«31» մարտի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
1	2	3
Շահույթ հարկումից առաջ	199,186	234,460
Գործառնական գործունեություն		
Հիմնական միջոցների ամորտիզացիա	98,580	157,382
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	11,464	16,634
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	1,038,623	(6,707,784)
Գործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)	(4,793,264)	(13,504,710)
Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(3,445,411)	(19,804,018)
Ներդրումային գործունեություն		
Կապիտալ ծախսումներ	(109,295)	(53,850)
Ներդրումներ	83,773	6,640,010
Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում	-	-
Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	(25,522)	6,586,160
Ֆինանսական գործունեություն		
Փոխառությունների և այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում)	3,157,126	(3,842,340)
Վճարված դիվիդենտներ	-	-
Բաժնետոմսերի վաճառք (հետգնում)	-	-
Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորություններիների աճ/(նվազում)	-	-
Ֆինանսական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ	3,157,126	(3,842,340)
Փոխարժեքի տատանումների ազդեցությունը	41,485	28,404
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակշրջանի վերջին	38,899,115	34,082,328

Բանկի վարչության նախագահ _____ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ Տ.ԳԵՎՈՐՅԱՆ

(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
01/01/17 թ-ից 31/03/17 թ.

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծություն	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	8,803,655	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	30,891,943	30,000,000	Խախտում առկա չէ
$Ն_1$ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	17.27%	min12%	Խախտում առկա չէ
$Ն_2^1$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	38.68%	min15%	Խախտում առկա չէ
$Ն_2^{11}$ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	25.88%	min4%	Խախտում առկա չէ
$Ն_2^2$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	169.43%	min60%	Խախտում առկա չէ
$Ն_2^{21}$ Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	121.96%	min10%	Խախտում առկա չէ
$Ն_3^1$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	13.79%	max20%	Խախտում առկա չէ
$Ն_3^2$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	69.30%	max500%	Խախտում առկա չէ
$Ն_4^1$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.77%	max5%	Խախտում առկա չէ
$Ն_4^2$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	4.84%	max20%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝ ՀՀ դրամով,	3.80%	min2%	Խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով,	20.00%	min18%	Խախտում առկա չէ
Եվրոյով	20.00%	min18%	Խախտում առկա չէ
Արտաժութային դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	0.72%	max10%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտաժույթների յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ ԱՄՆ դոլարով,	0.30%	max7%	Խախտում առկա չէ
Եվրոյով,	0.00%	max7%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով,	0.00%	max7%	Խախտում առկա չէ
Այլ արտարժույթ	0.42%	max7%	Խախտում առկա չէ

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ